Արհենակ 8. Վճռել Տ-ըդ որինակի խնդիրը գրաֆիկական ձևով: Բղիքի վրա անցկացնենք տրված ույժերը (պ. 10), ընդունելով ուժերի մասշտար՝ 2 կգ. 1 մմ-ի մեջ և յերկարության մասշտար՝ 1 : 10: Ույժերի բազմանկյունը ($A_1B_1C_1D_1A_1$) կստուգվի:





Գ. 10

պարփակված, վորովնեան $D_1A_1 = P_4$ ույժի ծայրը համատեղվում է սկզբնական A_1 կետի հետ: Ուրիշն սիստեմը կատ հավասարակշռության մեջ և կամ տալիս է ուժագույք: Ապա կառուցում ենք թոկային բազմանկյուն, և տեսնում, վոր P_4 ույժի ուղղության վրա գտնվող D կետը չի համընկնում P_5 ույժի ուղղության վրա գտնվող A կետի հետ: Սահանում ենք մոմենտ, վորի մեջությունը հավասար է $\omega_0 = \alpha_0$ վեկտորի և գ բազուկի արտադրյալին (բազմապատկան մասշտաբների վրա): Զափելով, գտնում ենք, վոր $\alpha_0 = 16$ մմ-ի, իսկ $g = 57$ մմ-ի: Հետևողիս մոմենտը հավասար է:

$$M = 16 \cdot 57 \cdot 2 \cdot 10 = 18240 \text{ կգմմ-ի.}$$

Եռենուն ռազմական և ըստ ժամացույցի ուղղվել:

Արհետկց. Վճռել գրաֆիկորեն 4-րդ որինակի խնդիրը: Ընդունենք՝ ուղիղի ժամացույցը՝ 2 կղ. 1 մմ-ի մեջ և յերկարության մասշտաբը՝ 1 : 20.



Ֆ. 20

Կառուցելով ույժային և թոկային բազմանկյուններ (գծ. 20), տեսնում ենք, վոր յերկուան ել փակված են: Հետևապես ույժերի սիստեմը գտնվում է հավասարակշռության մեջ:

Տ. 10. Հենաբանների մենակթաների գլորուսություն. Խոչը բազույն կիրառություն ունի ստատիկան շինարարական մեխանիկայի մեջ կառուցվածքների կայտնության հետ կապված հարցերի վճռելու ժամանակ. Այդ կայտնությունը մեռք և բերվում հենարանների գործադրության միջոցով, այսինքն մարմինների, վորոնք իրենց վրա յեն ընդունում կառուցվածքի վրա ազդող արտաքին ույժերի համազորի բաղադրիչ հնչութեաբերը: Հենարանները ցույց են տալիս անհրաժեշտ մեծության հականչութեաբեր, այսպիս կոչված՝ հակազդութեաբեր, վորոնք, լինելով պասսիվ ույժեր, ակտիվ ույժերի հետ միասին գտնվում են հավասարակշռության մեջ: Այսպիսով, մարմինի հավասարակշռության բոլոր նման գեղցերում ույժային և թոկային բազմանկյունները պետք են փակված պատկերները լինեն:


Հենարանների հակազդութեաբերի վորոշումը՝ խիստ պատասխանատու գործնական խնդիր են, վորովնեակ հակազդութեաբերի մեծությունից և կախված պիտավորապես հենարանների կոնսարուկցիան:

Անցնելով հենարանների հակազդութեաբերը վորոշելու խնդրին, վերցնենք ամենապարզ և հաճախ պատահող դեղքը՝ վորոշենք

յերկու հենաբանների վրա աղաս ընկած հեծանի կրած հակադպութեաբ:

Վորովհեան հեծանը զերագանցորեն յենթարկվում և նրա վրա զետեղած բեռների ծանրությանը, անընդհանութեաբ, վոր նրա վրա ազդող բոլոր ույժերն ուղղաձիգ են: Առաջին նկատի կառնենք բացառապես այն ույժերը, վորոնք գործում են հեծանի զանազան հատանքներում, առանց նկատի առնելու հեծանի սեփական ծանրությունը:

Դիցուք MN հեծանն աղաս ընկած է M և N հենաբանների վրա (գծ. 21):



Գծ. 21

Կառուցենք O թիեռով $A_1B_1C_1D_1E_1$ ույժային և $ABCD$ բնկային բաղմանկյունը:

Տրված ույժերի սիմետրի համապարն անցնում և K կետով, իսկ նրա մեծությունը առանք և ույժային բաղմանկյունը $R = AA_1E_1$: Այս ույժը հավասարակշռվում է յերկու Q_1 և Q_2 հակադպութեաբ, վորոնք անցնում են M և N կետերով և ուղղաձիգ ուղղություն ունեն: Գետք և վորոշել այդ հակադպութեաբից յուրաքանչյուրի մեծությունը:

Հեծանը հավասարակշռության մեջ է: Խնչ ույժեր են աղաս նրա վրա: Առաջին $P_1 - P_2$ ույժերը են, յերկրորդ, վորոնելի յերկու Q_1 և Q_2 ռեակցիաները: Վորովհեան բոլոր ույժերն իրար

զուգամեռ են, ապա պարզ եւ զոր այդ յերկու հակաղղութերի զումարը հավասար է R համարողին և ուղղղած է սրան հակաղիք: Հեծանի հավասարակշռության համար, ինչպես պարզել ենք, հարկավոր եւ զոր ույժային և թուկային բազմությունները փակված լինեն: Թուկային բազմանկյան մեջ նրա ամեն մի յերկու հաջորդաբար դասավորված կողմերը պետք է հատվեն ույժի ուղղության վրա: Հետեւապես Q₁ և Q₂ ույժերի ուղղությունների վրա նմանապես պետք է գտնվին բազմանկյան յերկու գագաթները. այդ պահճառով, վերցնելով այդ ույժերի համարն M և N եները թուկային բազմանկյան ու ա կողմերի ուղղությունների հետ, միացնում ենք այդ յերկու կետերը S ուղիղով, վոր կազմում և թուկային բազմանկյան փակող կողմը Ապա O թեսուց տանում ենք: S₀ ճառագայթը, զուգահեռ փակող S կողմին, մինչև R=A₁E₁ համազորի հետ հատվելը F₁ կետում: Թուկային բազմանկյան մեջ M և N հենարանների հեռավորությունները R համապորի ուղղությունից նշանակենք x և y տառերով: Զուգահեռ ույժերի գումարման որենքի համաձայն կատանանք՝

$$\frac{Q_1}{Q_2} = \frac{y}{x},$$

այսինքն R համազորը մենք պետք եւ բաժանենք 2 մասի $\frac{y}{x}$ հարաբերությամբ: Համեմատելով $\triangle M\cdot TK$ -ի $\triangle OA_1F_1$ -ի հետ, ահսնում ենք, վոր նրանք նման են, հետեւապես՝

$$\frac{A_1F_1}{H} = \frac{TK}{x},$$

վորտեղ H-ը O թեսուի հեռավորությունն է A₁E₁-ից և կոչվում երեվուային հեռավորություն:

Նույն կերպով TNK և OF₁E₁ \triangle -ներից ստանում ենք՝

$$\frac{F_1E_1}{H} = \frac{TK}{y}.$$

Բաժանելով առաջին հավասարումը յերկուրդի վրա, կստանենք՝

$$\frac{A_1F_1}{F_1E_1} = \frac{y}{x},$$

Խչդիք ահսնում ենք, A₁E₁ հառածը, վոր արտահայտում է համազորի մեծությանը, բաժանված է հարկավոր հարաբերու-

բյուր, այսինքն F_1A_1 հատվածը, վոր արտահայտում և համապատասխան մեծությունը, բաժանվում և հաջրավոր հարաբերությամբ, այսինքն $F_1 A_1$ հատվածը, վոր դանվում և ոչ և S_1 հառապայթների միջև, համապատասխանում և Q_1 , հակազդումին, իսկ E_1F_1 հատվածը՝ աշակեղմյան Q_1 , հակազդումին:

Այսպիս ուրեմն՝ յերկու հենարանների վրա ընկած և գուգանեռ ույժերի գործողության տակ զանվոր հենարանների հակազդումները գանելու համար պետք և կառուցել ույժային և թոկային բազմանկյուններ: Շարունակելով հակազդումների ուղղությունները (վոր գուգանեռ են տրված ույժերին) մինչեւ հատվելոր թոկային բազմանկյան ծայրազույն կողմերի հետ, միացնում ենք հատման կետերը և ստանում բազմանկյան փակող կողմը: Այս փակող կողմին զաւանեռ տարած ճառագայթն ույժային բազմանկյան մեջ համազորը բաժանում և յերկու մասի, վորոնք ընտրած մասշտաբով տալիս են համապատասխանաբար յերկու հակազդումների մեծությունները:

Վորովհեան հեծանը վորոշ ծանրություն ունի, ապա մեր գոտեծ հակազդումներին պետք և ավելացնել այդ ծանրության հետանքով առաջ յեկած հակազդումները. Մասնավոր դեղքում, յեթև հեծանն իր ամրողի յերկարությամբ նույն հատանքն ունի, լրացնուցիչ հակազդումներից յուրաքանչյուրը հավասար կլինի հեծանի կշռին:

Հարցեր:

1. Խնչմա յերկու հենարանի վրա ընկած հեծանի թոկային բազմանկյունը պետք և փակված լինի:

2. Փակված և 21-րդ զծազրի ույժային բազմանկյունը, Կարդացներ հաջորդաբար նրա բոլոր կողմերը:

3. Համազվեցեք, վոր հակազդումների մեծությունները կը մասն անփոփոխ, անկախ Օ բնեսի դիրքից:


4. Խնչուեն վորոշել, թե համազորի վոր հատվածն և համապատասխանում ձախ հակազդումին և վորը՝ աջ հակազդումին: Խնչուեն վորոշել, թե ինչ ուղղություն ունեն հակազդումները (դեղի վերե, թե ներքե).

Արինակ 10. Վորոշել 22-րդ զծազրում սխեմատիկորեն պատկերած հեծանի հակազդումները:

Ընդունելով յերկարությունների մասշտաբը 1 : 40, իսկ ույժերինը՝ 20 կգ. 1 մմ-ում, զծում ենք ույժային և թոկային բազմանկյունները: Միացնելով M' և N' կետերը, ստանում ենք թոկային բազմանկյան փակող $M'N'$ կողմը: Տանելով S փակող կող-

մին գուգանելու S_0 ճառագայթը, սահմանում ենք վորոնելի հակադ.
գումակը՝ $Q_1 = 22,25 \cdot 20 = 445$ կգ և $Q_2 = 17,75 \cdot 20 = 355$ կգ։


Անտվարի կողմէն սահմանում հակագդունքը ուղարկու-
թյունները, հավասարեցնենք M հենարանի վերաբերման վերց-



ՀՅ. 22

բաժ բոլոր ուժերի մուտքաների (արտահայտած կզմ-ով) գու-
մարը՝

$$-Q_1(40+50+40+50+60) + P_4(40+50+40+50) - \\ -P_3(40+50+40) + P_1(40+50) + P_1 \cdot 40 = 0.$$



ՀՅ. 23

Տեղադրելով $P_1 - P_4$ ուժերի արժեքները և վճակով հավա-
սարումը, սահմանում ենք, վոր $Q_1 = 354$ կգ. հետևապես $Q_1 = 400 +$
 $+ 200 - 300 + 500 - 354 = 446$ կգ։

Որինակ 11. 23-րդ գծագրում պատկերված և կոնսոլային հեծան (գուրս ընկած ծայրով), Մասշտաբները վերցրած են նույնը, ինչ վոր նախորդ որինակում: Թոկային բազմանկյան փակող Տ կողմանը ըստ նախընթացի սիցանում և Q_1 և Q_2 հակազդումների ուղղությունների M' և N' հատման կետերը բազմանկյան և առ ծայրագույն կողմերի հետ: Q_1 -ի արտահայտվում է $F_1A_1=12,5$ մմ վեկտորով, իսկ Q_2 -ը՝ $E_1F_1=37,5$ մմ վեկտորով: Ընդունած մասշտաբի համաձայն ստանում ենք, վոր $Q_1=12,5 \cdot 20=250$ կգ, իսկ $Q_2=37,5 \cdot 20=750$ կգ:



§ 11. ՄԻՌՈՂ ՄԱՍԻՆՆԵՐԻ ԴԻԱԳՐԱՄՆԵՐԸ: Դիցուք M և N հենարանների վրա ընկած հեծանը յենթարկվում է P_1-P_2 ուժերի սիստեմի ուղղեցությանը (գծ. 24): Խնչպես հայտնի յենախընթացից, ույժերի հավասարակշռության դեպքում ույժային և թոկային բազմանկյունները պետք են փակված լինեն: Կառուցելով ույժային բազմանկյունը O բեկորվ և թոկային ABCDE բազմանկյունը, M և N կետերով տանում ենք ույժերին զուգահեռ ուղիղներ: Միացնելով M_1 և N_1 կետերն ուղիղ գծով, ստանում ենք թոկային բազմանկյան փակող S կողմը. ույժային բազմանկյան մեջ այս կողմին զուգահեռ տարած Տ₀ ճառագայթը վրոշում և Q_1 և Q_2 հակազդումները:

Հաշվի առնելով հենարանների և այս հակազդումները, մենք ստանում ենք ույժերի մի սիստեմ, վորի ույժային և թոկային բազմանկյունները փակված են:

Դիցուք պետք են վորոշել C_0 հատանքից դեպի ձախ ընկած ույժերի մոմենտների հանրահաշվական զումարն այդ հատանքի վերաբերմամբ: Նշանակելով C_0 կետի հեռավորությունը M հենարանուց X տառով, կունենանք, վոր Q_1 հակազդման մոմենտը C_0 հատանքի վերաբերմամբ կազմում է $MQ_1=Q_1 \cdot x$: Շարունակենք Q_2 ույժին համապատասխանող և կողմը, մինչև վոր հատիք C_0 կետով ույժերին զուգահեռ տարած ուղիղի հետ և կետում: Նույն Q_2 ույժին համապատասխանող S յերկրորդ կողմին հատման կետը նույն ուղղից հետ նշանակենք ու տառով: Բաղդատելով M_1 և $O A_1 K \Delta$ -ները, տեսնում ենք, վոր նրանք նման են, հետեւապես

$$\frac{ma}{x} = \frac{KA_1}{H},$$

վորտեղ H -ը O բեկորի հեռավորությունն է A_1F_1 ուղիղից, այնինքն բեկույթին հեռավորությունն է:



Նկատի տեսնում ենք, վոր ԿԱ₁ հապածը ներկայացնում և զ₁
Հակագդման մեծությունը, կարող ենք դրել՝

$$\frac{m}{x} = \frac{Q_1}{H}, \text{ վորակղից } Q_1 \cdot x = m \cdot H.$$

Խշտիս տեսնում ենք, մոմենտը հավասար է թոկային բաղ-
մանկյան S և ա կողմերի միջն ընկած տա հատվածի և բնեռային
հեռավորության արտադրյալին (բազմապատճան ույժերի և յեր-
կարությունների մասշտաբների վրա):

Բոլորովին նույն ձևով Aba և OA_1B_1 նման Δ -ներից կզբա-
նենք, վոր $\frac{ab}{x-a} = \frac{P_1}{H}$, վորակղից $P_1(x-a) = ab \cdot H$. Այս հավասար-
ման ձախ մասն արտահայտում է P_1 -ույժի մոմենտը նույն հա-
տանքի վերաբերմամբ, իսկ աջ մասը ներկայացնում է թոկային
բաղմանկյան միջն P_1 ույժին համապատասխանող չ և 1-2 կող-
մերի միջն ընկած ած հատվածի և բնեռային հեռավորության
արտադրյալը։ Մոմենտի մեծությունը վորոշվում է նրա վոչ
միայն թվական արժեքով, այլ և նշանով, այսինքն նրա գործո-
ղության ուղղությամբ։ Կարելի յեւ սահմանել և վորոշ կանոն
այդ նշանը վարոշելու համար։ Պայմանավորվենք ավյալ հատան-
քով (որինակ C₀) ույժերին զուգահեռ անցնող ուղիղի վրա թո-
կային բաղմանկյան հարևան յերկու կողմերի միջն ընկած հատ-
վածը կարդալ թոկային բաղմանկյան ցածը համար ունեցող կող-
մից գեղիքի բարձր համար ունեցող կողմը, և այդ հատվածն ըն-
դունել դրական, յեթե նա ուղղված է վերեվից ներքեվ յեվ բա-
ցասական, յեթե ուղղված և ներքեվից վերեվ:

Այսպիս, դառնալով Q_1 ույժին, մենք տեսնում ենք, վոր S
կողմը նախարդում է ա կողմին, իսկ P_1 ույժի վերաբերմամբ՝ ա
կողմը նախորդում է 1-2 կողմին, հետեւապես առաջին ույժի մո-
մենտը վորոշվում է տա հատվածով, վոր ուղղված և վերևից ներ-
քն և, ուրեմն, զբական և, իսկ յերկրորդ ույժի մոմենտը բացա-
սական մեջ հատվածով, թեվ իսկապես, Q_1 ույժի մոմենտը դրա-
կան և, իսկ P_1 ույժինը՝ բացասական։

Այսպիսով այդ հատվածները, իրեն ուղղություն ունեցող
հատվածներ, մենք կարող ենք գումարել, նկատի առնելով նը-
րանց նշանները։

Այս կանոնների հիման վրա մենք այժմ կարող ենք միան-
գամից զբել C₀ հատանքից դեղի ձախ դաստվորված բոլոր ույ-
ժերի մոմենտների գումարը այդ հատանքի վերաբերմամբ՝

$$\begin{aligned} \Sigma M_{\Delta H} &= M_{Q_1} + M_{P_1} + M_{P_2} + M_{P_3} = \overline{m_a} \cdot H + \\ &\quad + \overline{ab} \cdot H + \overline{bc} \cdot H + \overline{cd} \cdot H = \\ &= (\overline{m_a} + \overline{ab} + \overline{bc} + \overline{cd}) \cdot H = \overline{md} \cdot H. \end{aligned}$$

Բոլորովին նույն կերպ զորոշում ենք C_0 հատանքից զեղի այդ գուստվորված բոլոր ույժերի մոմենտների զումարն այդ հատանքի վերաբերմամբ՝

$$\begin{aligned} \Sigma M_{\Delta \bar{H}} &= M_{P_1} + M_{P_2} + M_{Q_1} = \overline{de} \cdot H + \overline{ef} \cdot H + \overline{fm} \cdot H = \\ &= (\overline{de} + \overline{ef} + \overline{fm}) \cdot H = \overline{dm} \cdot H. \end{aligned}$$

Տեսնում ենք, վոր $\Sigma M_{\Delta H} = \Sigma M_{\Delta \bar{H}}$ ՝ զորովհետև $\overline{md} = -\overline{dm}$, այսինքն հեծանի վրա ազդող բոլոր ույժերի մոմենտների զումարը C_0 կետի վերաբերմամբ հավասար է զերոյի. այդպիս ել պետք են լինի, վորովհետև հեծանը հավասարակշռված է, հետեւ պես յուրաքանչյուր կետի վերաբերմամբ մոմենտների համար հաշվական գումարը պետք է հավասար լինի զերոյի.

Այսպիսով թոկային բազմանկյունը շատ հեշտ միջոց է տալիս զորոշելու ամեն մի հատանքի վերաբերմամբ այդ հատանքի մի կողմե ընկած ույժերի մոմենտների զումարը. Դրա համար այդ հատանքով պետք է տանել մի ուղիղ, զուգահեռ տված ույժերին. Այդ ուղիղի հատվածը, վոր գտնվում է տվյալ հատանքի մի կողմը գտնվող ույժերի թոկային բազմանկյան ծայրապայմանության կողմերի միջև, բազմապատկած թեկությին հեռավորության վրա տալիս և զորոնելի մոմենտը Այսպիս, որինակ, C_0 հատանքի վերաբերմամբ ձախ ույժերի մոմենտին համապատասխանում է $\overline{m_b}$ հատվածը, C_0 հատանքի վերաբերմամբ՝ \overline{C} հատվածը, և այլն: Խչպիս յերեսում ե այս աստծներից, նշանակություն չունի թե հատանքի վճր կողմի ույժերի մոմենտներն ենք վերցնում, վորովհետև յերկու կողմերի ույժերի մոմենտների զումարները բացարձակ մեծությամբ իրար հավասար են:

Ստացված յեղբակացությունը խոշոր նշանակություն ունի հեծանների հաշվման սենակետից, նրա վրա ազդող ուժերի ազգեցության տակ հեծանը ծովում է և, ինչպիս կտեսնենք հետագայում, ծովում այնքան մեծ է, վորքան մեծ և տվյալ հատանքի վերաբերմամբ ստատիկական մոմենտների զումարը*): Ներկա

*) Սաման զըս ստաբիլիտետ մամենակ ազգեցությունը մենք համար նկատում ենք և առորյա յերկույթների մեջ. որինակ յերկությա ձևոն այնքան ոչինչ հետո և ծանրը նույն ույժի ազգեցության տակ վարքան հառ. յէ ույժի ազգման կետը հետարանային հատանքից, այսինքն վարքան մեծ և ստատիկական մամենակ այդ հատանքի վերաբերմամբ:

զեպքում ստատիկական մոմենտները կոչվում են ծռող մոմենտներ: Հետևապես թոկային բազմանկյունը տալիս ե հեծանի յուրաքանչյուր հատանքի համար ծռող մոմենտի մեծությունը, այդ պատճառով ել նրան կարելի յե կոչել ծռող մոմենտների դիպքամ:

Հարցեր:

1. Ի՞նչի՞ յի հավասար Q_1 և P_1 ույժերի ստատիկական մոմենտների գումարը C_0 հատանքի վերաբերմամբ: Բայց P_1 և P_2 ույժերինը նույն հատանքի վերաբերմամբ: Իրավումը: $P_1 = P_2$ և P_3 ուժերինը:

2. Գտնեց P_4 և P_5 ույժերի ստատիկական մոմենտների գումարը C_0 հատանքի վերաբերմամբ:

3. 24-րդ զծագրում պատկերած հեծանի վեր հատանքումն և ամենափոքր ծռող մոմենտը: Բայց ամենամեծը:

4. Տարրեր բնեաներ վերցնելով, ստացվում են և տարրեր թոկային բազմանկյուններ: Ի՞նչմեր այնուամենայնիվ թոկային բազմանկյան ողնությամբ վորոշած ծռող մոմենտի մեծությունը կախում չունի բնեով գիրքից:

Արթիակ 12. 24-րդ զծագրում ույժերի և հեռավորությունների արժեքները հետևյալներն են՝ $P_1=300$ կգ, $P_2=250$ կգ, $P_3=400$ կգ, $P_4=250$ կգ, $P_5=300$ կգ, $a=400$ մմ, $b=600$ մմ, $c=800$ մմ, $d=600$ մմ, $e=600$ մմ, $f=600$ մմ: Վերոշել ծռող մոմենտը C_0 հատանքում, յիշե չորս մ:

Ընդունելով յերկարությունների մասշտաբը 1:40 և ույժերի մասշտաբը 10 կգ 1 մմ-ի մեջ, կառուցում ենք ույժային և թոկային բազմանկյուններ և այս վերջնա ժակում ենք M_1 , N_1 կողմով: C_0 -ից տանում ենք ույժերին գույքանեռ, այսինքն ուղղաձիգ ուղիղ: այս ուղիղի վրա մենք ստանում ենք ուժ հատվածը, վոր գտնվում և թոկային բազմանկյան S և $3-4$ ծայրագույն կողմերի միջև: Այդ հատվածի յերկարությունն է 11 մմ: բնեային հեռավորությունը վերցրած և $H=25$ մմ, հետևապես վարոշելի մոմենտը հավասար է $11 \cdot 25 \cdot 40 \cdot 10 = 110000$ կգմմ=11000 կգմմ:

Հենարանների հակազդութերը չափվում են հետևյալ հատվածներով՝ $Q_1=\overline{KA}_1=38$ մմ և $Q_2=\overline{F_1K}=32$ մմ, հետևապես $Q_1=10.38=380$ կգ և $Q_2=10.32=320$ կգ:

Ստուգինք այս լուծումը անպայտիկական ձևով:

Վերցնելով մոմենտների գումարը N -ի վերաբերմամբ, ստուգում ենք:

$$Q_1 (a+b+c+d+e+f) - P_1 (b+c+d+e+f) - P_2 (c+d+e+f) + P_3 (d+e+f) - P_4 (e+f) - P_5 \cdot f = 0$$

Տեղադրելով տառեցի արժեքները և վճռելով, ստանում ենք՝

$$Q_1 = 380,3 \text{ կգ} \leq 380 \text{ կգ}$$

$$Q_2 = P_1 + P_2 - P_3 + P_4 + P_5 - Q_1 = 700 - 380,3 = 319,7 \text{ կգ} \leq 320 \text{ կգ:}$$

Մասնակիությունը (վերցնում ենք ձախակողմյան ույժերը):

$$M' = Q_1 x - P_1 (x - a) - P_3 (x - a - b) + P_4 (x - a - p - c):$$

Տեղադրությունը կատարելով, ստանում ենք՝

$$M' = 11060 \text{ կգմ:}$$

Աջակողմյան ույժերի մոմենտը՝


$$M' = -Q_1 (a+b+c+d+e+f-x) + P_1 (a+b+c+d+e-x) + P_4 + (a+b+c+d-x) = 11152 \text{ կգմ:}$$

Դրաֆիկական և անալիտիկական ձևով ստացված պատասխանների տարրերության պատճառը Q_1 և Q_2 մեծությունների արժեքների կորացումն եւ:

§ 12. ԿՏՐՈՂ ՈՒԹՅԵՐԻ. Յեթ ույժերի մի վորոն սիստեմի աղքեցության տակ զանգող մարմինը հավասարակշռության մեջ եւ տապա զա նշանակում եւ, վոր ույժերի սիստեմից վորոն մեկը կամ ույժերի խումբը հավասարակշռում եւ մեացած բոլոր ույժերին Այսպես, յերբ յերկու հենաբանների վրա ընկած հեծանի վրա ազդում եւ P_1 , P_2 , P_3 և այլն ուժերի սիստեմը (գծ. 23), վորոնը տուազացնում են Q_1 և Q_2 հակազդությունը, տապա կարելի յեւ, որինակ, Q_1 հակազդումը դիտել իրբունքում, վոր հավասարակշռում եւ բոլոր մեացած ուժերին՝ P_1 , P_2 , P_3 և այլն և Q_1 , կամ Q_2 , և P_1 ուժերը դիտել, իրբունքում հավասարակշռությունը P_1 , P_2 , ..., Q_1 ույժերին և այլն:

Յեթէ Q_1 հակազդությունը ուղղված է դեպի վերև՝ տապա մեացած բոլոր ույժերը պիտօք եւ տան մի համազոր, վոր հավասար է իր մեծությամբ Q_1 ույժին, բայց ուղղված է դեպի ներքև:

Դառնայով այն հարցին, թե ույժերի այս տեսակ սիստեմի աղղեցության տակ հեծանն ինչ ձևափոխության կամ դեմքորմա-



Գծ. 25


ցիայի յե յենթարկվում, մենք տեսնում ենք, վոր այդ ույժերը ձգում են աեղափոխել հեծանի մի մասը մյուսի վերաբերմամբ հեծանի յերկարության ուղղահայաց ուղղությունը, այսինքն կտրել հեծանը լայնակի հատանքով, որը որպեսին այնպես, ինչպես մկրատը կարում է մարմինը, աղղելով նրա նյութի վրա յերկու իրար հավասար, բայց հակառակ ուղղված ույժերով:

Հեծանի տեսն մի հատումի համար կարելի յե զանել այն ույժը, վոր ձգում և այդ հատանքում կտրել հեծանը, որինակ, P_1, P_2 , հատանքում, վոր զանգում և $P_1 + P_2$ ույժերի միջև, կը դրող ույժը հավասար կլինի Q_1 հակադպումի և P_1 ույժի տարրերությանը, այսինքն $Q_1 = P_1$, P_2 ույժից զեղի աջ զանգող P_2 , հատանքում $Q_2 = (P_1 + P_2)$, և այն:

Այս ույժերը, վորոնք ձգում են կտրել հեծանը վորոց հատանքում, կոչվում են կտրող ույժեր կամ լայնակի ույժեր՝ յեվ կամ ույժերի գումար: Հեծանի մի վորնե հատանքի յերկու կողմերի (աջ և ձախ) կտրող ույժերի գումարը հավասար է զերոյի:

Կտրող ույժը հարժար և զրաֆիկորեն պատկերացնել զիազրամի ձևով:


Դիցուք հեծանի վրա ազդում է $P_1 - P_4$ ույժերի սխտեմը: Գծելով ույժային և թոկային բազմանկյուն-



95. 26

ները, մեզ հայտնի յեղանակով զանում ենք հենարանների Q_1 և Q_2 հակադպումերը (դ. 26):

Հեծանի հատանքը աեղափոխենք աջից զեղի ձախ: Ցերք հատանքը զանգում է N հենարանից զեղի աջ անսահման վորը



Հասավորության վրա, ապա այդ հատանցից դեպի աջ դասավոր-ված բոլոր ույժերի գումարը հավասար կլինի Q_2 -ի հեծանի ներ-քեռմ տանենց $M_1 N_1$ հորիզոնական ուղղղը և N_1 կետից, վոր համապատասխանում է հեծանի N կետին, փորոշ մասշտարով վերցնենց մի վեկտոր, հավասար Q_3 հակազդումին և ուղղված, ինչպես և հակազդումը, ներքեւից դեպի վերև հատանցն աջից դեպի ձախ ուղղագոխելու ժամանակ ույժերի գումարը կլին ան-փոփոխ, այսինքն հավասար Q_3 հակազդման, մինչև վոր հատան-ցըն անսահման փոքր չափով անցնի P_4 ույժից ձախ: Հատանցի այդ դիրքի համար հատանցից դեպի աջ դասավորված ույժերի գումարը հավասար կլինի— Q_2+P_4 (ևթե պայմանավորվենց դե-պի ներքև ուղղված ույժերը դրական համարել): Տանելով Q_3 վեկտորի վերջնակետից հորիզոնական ուղղից, մինչև վոր սա հատ-դ P_4 ույժի ուղղության հետ, հատման կետից դեպի ներքև վերցնենց P_4 ույժը: Սատացված կետից տանենց հորիզոնա-կան ուղիղ մինչև P_3 ույժի ուղղության հետ համակելը, վորով-հետեւ հեծանի այն մասում, վոր ընկած և P_4 և P_2 ույժերի միջև, հատանցից դեպի բաջ դասավորված ույժերի գումարը մնամ և ան-փոփոխ:

Կառուցումն այս յեղանակով շարունակելով, մենք ձախ հե-նարանին համապատասխանող ուղղաձիգի վրա կստանանք Q_1 հակազդման հավասար հատված, վոր ընկած և $M_1 N_1$ առանց-քից ներքև. այդպես ել պետք ե լինի, վորովհետեւ աջակողմյան M հենարանից անսահման փոքր հեռավորության վրա գտնվող հատանցի համար նրանից դեպի աջ դասավորված ույժերի գու-մարը պետք ե հավասար լինի Q_1 -ի, բայց հակառակ նշանով.


Եթե մենք դիագրամ կառուցեյինք հատանցից դեպի ձախ գտնվող ույժերի գումարի համար, մենք կառուցումը կակսեյինք ձախ հենարանից, պայմանական առանցքից դեպի վերև վերց-նելով Q_1 , ապա կշարժեյինք հատանցը ձախից դեպի աջ և կրս-տանայինք այն դիագրամը, վոր գծագրում ցույց ե տված կե-տազծերով և վորը սիմմետրիկ և առաջին դիագրամի վերաբեր-մամբ:

Այսպիսով բոլորովին նույնն և, թե ինչ ուղղությամբ շար-ժել հատանցը—կարող ույժի բացարձակ մեծությունը կստացվի նույնը: Հետևայում բացառական կարող ույժերը կվերցնենք առանցքից դեպի վերև, իսկ դրականները՝ դեպի ներքև:

Հետևապես դիագրամի ան որդինատը, վոր համապատա-խանում և C_0 հատանցին, ցույց ե տալիս, վոր այդ հատանցից

զեպի աշ գտնված ույժերի վումարը վարչ մասշտաբով հավասար է աՅ հասվածին և ուղղված է ներքեմից վերև:

§ 13. ԱՄԲՈՂՋ ՅԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐԱՎԵՍ ԴԱ-
ՍԱՎՈՐՎԱՇ ՈՒԹԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԵՄԱՆ-
ԴԻԳՈՎՔ ՀԵԺԱՆԸ գտնվում և միջարկային ծածկութիւն մեջ՝ Սյու



94, 87

տեսակ ընտավածքն, ի տարրերություն նախորդ որինակներում
ընտարկած կենտրոնացած ուժերից, դոչվում և անընդհատ դա-
սագրոված բեռնվածք։ Ցեղ վրուավենան այդ դեպքում հեծո-
նի յերկարության ամեն մի միավորին հասնող բեռնվածք

միշտ նույնն է, ապա և բեռնվածքը հավասարաչափ է: Այդ աեւսկ բեռնվածք և ներկայացնում, ի հարկի, նաև նեծանի սկզբան ծանրությունը:

Դիցուք MN հեծանը (գծ. 27) յենթակա յե հավասարաչափ դասավորված բեռնվածքի ողդեցության: յերկարության ամեն 1 մ-ի բեռնվածքը կողմում և զ կգ, նետապես, ընդունելով, վոր հեծանի յերկարությունը՝ 1 մ է, ամբողջ բեռնվածքը հավասար և Q=զլ կգ-ի:

Թոկային բազմանկյուն կառուցելու նպատակով ամբողջ հեծանն ըստ յերկարության բաժանենք մի քանի հավասար մասերի, որինակ չորս մասի՝ $M_1=P_1=S_1=U_1=\frac{l}{4}=l_1$, Այդ մասերի միջնակետերում՝ C₁, C₂ և այլն կետերում կցենք P₁=P₂=P₃=P₄ վեկտորներ, վորոնց ընդունած մասշատրով արտահայտում են ամեն մի մասի բեռնվածքը, այսինքն $q_1 l_1$ կգ:

Ապա, P₁, P₂ և այլն ույժերը դիտելով իրեն կենտրոնացած ույժեր, կառուցենք ույժային և թոկային բազմանկյուններ, Յեթե մենք O բեկոր դեսկենք ույժերի համազորն արտահայտող A₁ E₁ վեկտորի C₁ միջնակետով տարած ուղղահայցի վրա, ապա թոկային բազմանկյունը, ուղղող և, կատացվի սիմետրիկ հեծանի մեջակով տարած ուղղաձիգ առողջությի վերաբերմամբ և նրա փակող M₁N₁ կողմէ կլինի հորիզոնական: Հակազգութերն իրար հավասար կլինեն՝ Q₁=Q₂:

Ապա կառուցենք աջակողմյան ույժերի դիագրամ. զրա համար աջ հենարանով անցնող ուղղաձիգի վրա վերցնում ենք $\overline{N_1K}=Q_2$ տանում ենք հորիզոնական ուղիղ մինչև P₁ ույժի ուղղության հետ հատվելը, այդ կետից դեպի ներքի վերցնում ենք $\overline{HL}=P_1$, նորից տանում ենք հորիզոնական ուղիղ մինչև P₂ ույժի ուղղության հետ հատվելը, և այլն: Ստանում ենք մի տականավոր դիագրամ:

Յենթաղենք, մենք մենք կրկնապատկել ենք այն մասերի թիվը, վորոնց բաժանած եր հեծանը՝ կլինել ենք այդ մասերը, Այժմ ամեն մի մասի բեռնվածքը հավասար կլինի $\frac{q_1 l_1}{2}$ և ույժային բազմանկյան մեջ կավելանան նոր ճառագայթներ (գծադրում ցույց են տված կետագծերով), վորոնց համապատասխանում են նոր կողմեր թոկային բազմանկյան մեջ. ընդ ոմին այս վերջինս իր ձևով կմոտենա մի կորի, վոր ներզծած և բազմանկյան մեջ և շոշափող և այս բազմանկյանը A₀, B₀ C₀ և այլն կետերում, այսինքն այն կետերում, վորոնք համապատասխա-

նույն են այն ոռու, ու և ու հասանքներին, վորոնցով մենք հեծանը բաժանել եյինք ըստ յերկարության։ Այսպիսով թոկային բազմանկյունը վերածվում է մի կոր գծի, վոր կոչվում է շղթայագիծ։ Մեր քննարկում դեպքի համար շղթայագիծը պարարու է,

Ինչ վերաբերում է կարող ույժերի դիմումներին, տեսնում ենք, վոր հեծանի բաժանման մասերի թվի մեծանությունը հետ միասին, աստիճանները փոքրանում են և առաջանում, այդ մասերի մասաման մեծ թվի դեպքում, KHLG... աստիճաննավոր դիմը վերածվում է ուղղի գծի, վոր հատում և M_1N_1 առանցքը O_1 կետում, վոր համապատասխանում է հեծանի մեջտեղին և շղթայագիծի մաքսիմալ B'_0B_0 որդինատին։

Արթմակ 13. Գանել նոր քննարկած հեծանի մաքսիմալ ծռող մոմենտը, յեթե հեծանի լրից յերկարությունն է $l=4$ մ, իսկ երկարության ամեն 1 մ-ի բեռնվածքը $q=150$ կգ/մ..

27-րդ գծագրում հեծանը ուժած է $1:50$ մասշտարով. ույժերի մասշտարն ընդունենք՝ 10 կգ 1 մմ-ի մեջ, կառուցելով շղթայագիծ, գտնում ենք, վոր մաքսիմալ B'_0B_0 որդինատը $Y_{\max}=30$ մմ-ի (բնեռային հեռավորությունն ընդունել ենք $H=20$ մմ) Հեռևապես մաքսիմալ ծռող մոմենտը կազմում է $M=30.20.50.10=300\,000$ կգմմ=30 000 կգմ։

Անալիտիկորեն ստուգենք այս արդյունքը։

$$\text{Միջին } \text{հասանքից } \text{դեպի } \text{աջ } \text{դորձում } \text{և } Q_1 = \frac{ql}{2} = \frac{150 \cdot 4}{2} = 300 \text{ կգ } \text{ ույժը } \text{ և, } \text{բացի } \text{այդ, } \text{ հեծանի } \text{ աջ } \text{կեսի } \text{ վրա } \text{ ազդող } \text{ բեռնվածքը, } \text{այսինքն } \frac{600}{2} = 300 \text{ կգ. } \text{ այս } \text{ վերջին } \text{ ույժը } \text{ կարող } \text{ հնացամարել, } \text{վոր } \text{ կցված } \text{ է } \text{ հեծանի } \text{ աջ } \text{ մասի } \text{ ծանրության } \text{ կենտրոնում, } \text{այսինքն } \frac{l}{4} \text{ հեռավորության } \text{ վրա } \text{ ու } \text{ հասանքից, } \text{ վերոնակի } \text{ մոմենտը } \text{ հավասար } \text{ է}^*$$

$$M_{\max} = -300 \cdot \frac{l}{2} + 300 \cdot \frac{l}{4} = -300 \cdot \frac{l}{4} = -300 \cdot \frac{4}{4} = -300 \text{ կգմ} = -30000 \text{ կգմմ.}$$

Ինչպես տեսնում ենք, նույն արդյունքն ստացանք։

§ 14. Ֆերվերի ՄԱՍԻՆ Հեծանի լայնակի չափերն այնքան մեծ են ստացվում, վորքան մեծ են նրա առանձին հասանքների վրա ազդող ծռող մոմենտները, Բայց լայնակի չա-

գերի մեծանալու հետ զուգընթաց մեծանում և հեծանի և՝ սե-
փական կշիռը, վորն իր հերթին նույնպես տալիս և ծռող մոմենու:

Խնդիրն կտեսնենք հետազայում, հեծանի վոչ բոլոր թելիկ-
ները միանանան մասնակցում են դիմադրելու հեծանի վրա ազգող
քննազատքներին, ընդունին վորքան մեծ և ծռող մոմենաց, այն-
քան զգալի յէ զառնում նյութի վոչ լրիվ ոգագործումը:

Անձ այս նկատառութերն են պատճառը, վոր միապաղադ
կարգում ունեցող հեծանների կիրառության շրջանը սահմանա-
փակ և յիթե մեծ և հենարանների միջին բացվածքը կամ մեծ և
ծռող մոմենաց, այդ գեղցում միապաղադ հատանքով հեծանը
փոխարինում են առանձին՝ ցանցանե գամած կրնսարուկցիայով,
վոր կոչվում և ֆերմ, Այդ տեսակ կրնսարուկցիաներ կիրառու-
ման զանազան կառուցվածքների ծածկույթները (ծղեղային ֆեր-
մեր), կամուրջների անցուղարձի մասերը (կամրջային ֆերմեր) և
այլն հենելու համար:

Սակագ պատասխանառու դեպքերում ֆերմը պատրաստում
են փայտից (փոքր բաց վածքի ծղեղներ կտուրների համար, փոքր
կամուրջները), իսկ բավելի պատասխանառու դեպքերում թափեռ
յերկաթից:


Ը 15. Ֆերմի ելես ԵՆՏՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՈՒՅԹԵՐԻ ՎՈՐՈ-
ՇՈՒՄԸ, ԿՐԵՄՈՆԱՑԻ ԴԻԱԳՐԱՄԸ. Ֆերմի հաշվումն ամենից ա-
ռաջ կայանում և նրանում, վոր վորոշվեն մեծություններն ու
ուղղություններն այն ույժերի, վորոնց առաջանում են ֆերմի
ելեմնաների մեջ նրա վրա զործող բերնվածքների ազդեցու-
թյան տակ Հիմնական պայմանը, վորից պետք և յելնել այս
դեպքում, այն և, վոր ինչպես ամրող ֆերմը, այնպես ել ֆերմը
կաղմող առանձին ելեմնաները պետք և լինեն հավասարակշռու-
թյան մեջ:

Այսպիսով ֆերմի ելեմնաների ներքին ույժերը վորոշելու
խնդիրը հանգում և ստամիկայի տված հավասարակշռության
պայմանները կիրառելուն:

Խնդիրն մենք տեսանք վերեռում, նման խնդիրները կարելի
յն լուծել զրաֆիկորեն և անալիտիկորեն Ֆերմի հաշվման հա-
մար յերկու մեթոդն ել կիրառում ին. սակայն զրաֆիկական մե-
թոդի զրագության և ակնառության պատճենով նա հաճախ ա-
զելի հարմար և, քան անալիտիկականը, ուստի գերազանցորեն
այդ մեթոդն են կիրառում:

Դիցուք ունենք ABD ֆերմը (գծ. 288), վոր չնկած և յեր-
կաւ հենարանների վրա և յենթարկվում և C հանգույցին կցած
P ույժի ազգեցությանը. Պետք և վորոշել այն ույժերը, վոր ա-

Առջանաւմ են ֆերմերի բոլոր ձևերի մեջ թույժի ազդեցության հետևանքով առաջացող ներքին ուժերը:



Ֆ. 28

Դիտելով ֆերման իրեն մի հեծան, վոր ընկած և յերկու հենարանների վրա, մենք կարող ենք հենարանների հակագումաները վորոշել կամ դրաֆիկորեն, թոկային բազմանկյան ոգնությամբ և կամ անալիսիկորեն։ Դիցուք A և B հենարանների հակագումաներն արտահայտում են Q_1 և Q_2 վեկտորները։ Յերեւ վակայորեն, կտրելով AC և CD ձողերը, առանձնացնենք A հանգույցը և կազմենք այդ հանգույցի հավասարակշռության պայմանները, նկատի ունենալով, վոր հանգույցը գտնվում է յերեք ուժերի ազդեցության տակ՝ Q_1 հակագուման և R ու S ներքին ուժերի, վորոնք գործում են AC և CD ձողերի ուղղությամբ։ Անջատելով A հանգույցն ամրող ֆերմից, վորոնենք, թե ինչ

հապակցությունն կա նրա վրա ազդող և փոխադարձաբար հավասարակռվող Q₁, R և S ույժերի միջև:

Այս ինդիքը գրաֆիկորեն վճռելու նպատակով տանենք մի կողմում Q₁=KL, վեկտորը (գծ. 28 b) և կառուցենք ույժային KLM \triangle -ը, վերի մեջ LM կողմը զուգահեռ և ֆերմի 1 ձողին, իսկ KM կողմը՝ 2 ձողին: Գորովհետեւ ույժերը հավասարակռության մեջ են, ապա ույժային յեռանկյան բոլոր կողմերը պետք և ընթանան ընդհանուր ուղղությամբ (ներկա զեպչում՝ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ), ուրեմն ստանում ենք, վոր! ձողի ուղղությամբ գործում և R=LM ույժը, իսկ 2 ձողի ուղղությամբ՝ S=MK ույժը:

Եյտեն նշանակությունն ունի այդ ույժերի ուղղությունը: Դիտելով A հանգույցը, մենք անսում ենք, վոր R ույժն ուղղված և աջից դեպի ձախ, այսինքն R ույժը սեղմում է 1 ձողը. S ույժը, ընդհակառակը, ծգում է 2 ձողը, և վորովհետեւ նաև ուղղված և վոչ դեպի հանգույցը, այլ դեպի հակադիր կողմի: Կառուցելով B հանգույցի համար մի այլ ույժային յեռանկյուն NTU, մենք ստանում ենք, վոր 4 ձողը սեղմում է UN ույժով, իսկ 5 ձողը ծգվում է TU ույժով*):


Վորպեսզի վորոշենք Յ ձողի մեջ գործող ներքին ույժը, առանձնացնենք D հանգույցը, վորի մեջ հասպասմ են յերեք հավասարակռվող ույժեր՝ S և S', վոր գործում են 2 և 5 ձողերի ուղղությամբ, և Q ույժը՝ Յ ձողի ուղղությամբ: Վերևում մենք արդեն դաել ենք, վոր S ույժը ծգում է 2 ձողը, իսկ S' ույժը ծգում է 5 ձողը, այդ պատճեռով, A հանգույցից D հանգույցին անցնելով, մենք պետք և փոխենք այդ ույժերի ուղղությունները, վորովհետեւ նրանք ուղղված են հանգույցից դուրս:

S և S' վեկտորների վրա կառուցելով VYW ույժային յեռանկյունը, կստանանք YW կողմը, զուգահեռ Յ ձողին: YW վեկտորը, վոր ուղղված և վերեկից ներքեւ, այսինքն դեպի D հանգույցը, առաջին և Յ ձողը սեղմող Q ույժի նշանակությունը: Այսպիսով մենք վորոշեցինք ֆերմի բոլոր եղեմենաներում գործող ներքին ույժերը՝ նրանց մեծությունները և ուղղությունները:

Խոդի լուծումը մենք կարող ենք պարզել և դյուրացնել: Փոխանակ առանձնակի ույժային յեռանկյուններ կառուցելու,

* Ներկա զեպչում կարէ նշար կառուցելու NTU ույժային յեռանկյունը: Վորովհետեւ ֆերմը սիմետրիկ և CD-ի վերաբերմունք և, ուրիշ, պարզ է, չոր Q₁=Q₂, հանգույցի մեջ կառուցած յերես: Ույժային յեռանկյուններն իշխում հավասար են:

ինչպես մենք արինք 28-րդ դժագրում, կարող ենք այդ յեռանեկյունները միացնել մի զիտգրամում (զծ. 29), վերցնելով $\overline{MK} = P$ հատվածը, նրա վրա նշենք L , կետն այնպիս, վոր $\overline{KL} = Q_2$ և $LM = Q_1$, վորովհետև ներկա զեպքում հակադրամերի հանրահաշվական դումարը հավասար է արտաքին ույժերի - հանրահաշվական գումարին Համարակալենք հանգույցներն այն կարգով,



ԶՃ. 29

ինչ կարգով մի հանգույցից անցնում ենք մյուս հանգույցին. Ա հանգույցը նշանակենք I. աղա, վորոշելով 2 ձողի ներքին ույժը, անցնենք D հանգույցին, վորը նշանակենք II. և այլն, ներքեւմ բերեն 15-րդ որինակից մենք կտեսնենք, վոր մի հանգույցից մյուսին անցնելու կարգից և կախված խնդիրը վճռելու հարավորությունը:

LM վեկտորի վրա կառուցենք ույժային LMN յեռանկյունը, MN-ը կատ մեզ 1 ձողը սեղմող ույժի մեծությունը՝ իսկ NL-ը՝ 2 ձողը ձգող ույժի մեծությունը. Սեղմող 1 ձողը նշանակենք մինուս նշանավ, իսկ ձող 2 ձողը՝ պղյուտ նշանավ, անցնում ենք II (D) հանգույցին. Այս հանգույցում հավասարակուվում են՝ 2 ձողի մեջ գործող ույժը և 3 ու 5 ձողերում զործող ույժերը, վորոնց մեծությունը և ուղղությունը պետք է վարչել Դասնաւով LMN յեռանկյանը, վորի մեջ NL կողմն արտահայտում և ըստ մեծության և ուղղության այն ույժը, վոր ձգում և 2 ձողը, մենք, 1 հանգույցից II-ին անցնելիս, պետք է NL կողմդ ուղղությունը փոխենք հակառակ ուղղության. այս բանը նշանակում ենք կրկնակի սլաքով: Աղա L կետից տառում ենք LR ուղղը, գուգանեռ 5 ձողին, և NR ուղիղը, զուգանեռ 3 ձողին,

մինչև նրանց հատվելը R կետում։ Վարովինան այս Յ ույժերը հավասարակշռության մեջ են, ապա տալով նրանց նույն ընթացքը, մենց կստանանց NRL հատվածը, վոր կարտահայտե Յ ձողը սեղմող ույժը (վորովինան այդ վեկտորին ուղղված, և դեպի մեր քննարկած II հանգույցը) և RL հատվածը, վոր կարտահայտե Ծ ձողը ձգող ույժը։

Անցնում ենք III հանգույցին։ Այս հանգույցում պետք է հավասարակշռվեն Q, ռեակցիան և 4 ու 5 ձողերի ներքին ույժերը։ Առաջինն արտահայտվում է KL վեկտորով, իսկ 5 ձողում գործող ույժը՝ NRL յեռանկյան RL կողմով։ Այս կողմին մենք այժմ պետք է տանք ուղղություն L-ից դեպի R։ K կետից տառնելով 4 ձողին գուգահեռ ուղիղ, մենք կտեսնենք, վոր այդ ուղիղը հատում է LR կողմը R կետում։ Այսպիսով կստանանք LRK փակված յեռանկյունը, վորի RK կողմը ներկայացնում է 4 ձողի ներքին ույժը և ուղղված է դեպի III հանգույցը, հետեւապես 4 ձողը, ինչպես և I ձողը, սեղմակած ե. ներկա դեպքում, վորովինան ֆերմը սիմմետրիկ է P ույժի կցման կետի վերաբերմամբ, և և 4 ձողերը սեղմակում են նույն ույժով, իսկ 2 և 3 ձողերը նույն ույժով ձգվում են։

Անցնելով IV հանգույցին, տեսնում ենք, վոր այդ կետում հատվում են չորս ույժեր՝ P ույժը և I, 4 ու 3 ձողերի ներքին ույժերը, Հանգույցի հավասարակշռության համար տնուածեատ ե, վոր այդ 4 ույժերը կազմեն փակված ույժային բարձրանկյունութիւնիով առաջանակած դիագրամը, մենք տեսնում ենք, վոր I ձողի ներքին ույժը, վոր արտահայտվում և NM կողմով IV հանգույցի վերաբերմամբ ուղղված է ձախից աջ, P = MK ույժը վերեկց ներքեւ, 4 ձողի ներքին ույժը, վոր արտահայտվում է KR վեկտորով, այնից ձախ (դեպի IV հանգույցը) ե, վերջապես, 3 ձողի RN ույժը՝ ներքեւից վերև (դեպի IV հանգույցը, վորովինան այդ ձողը սեղմակած ե), Հետեւապես բազմանկյունը փակվեց։

Ստացված դիագրամը, վոր կրչվում է կրնեմոնայի (կամ Մարտիվի դիագրամ) տալիս և ֆերմի յուրաքանչյուր ելեմենտի մեջ գործող ներքին ույժի մեծությունը և ուղղությունը։

Արինակ 14, 29-ը գծագրում պատկերված ֆերմն ունի հետեւալ չափերը՝ $AC=CB=1,75 \text{ մ}$, $CD=1 \text{ մ}$. P բեռը, վոր աղղում և AB բացվածքի սեղակում, հավասար է $300 \text{ կգ}\cdot\text{մ}$ Վորոշել ֆերմի բոլոր ելեմենտների մեջ գործող ներքին ույժերը։

Ընդունելով ույժերի մասշտաբ՝ $10 \text{ կգ}\cdot\text{մ} = 1 \text{ մմ}$, գծենք կրեմոնայի դիագրամը։ Զափելով դիագրամի բոլոր կողմերը, մենք

կստանանք ներքին ույժերի համար հետեւաշ արժեքները (ձգող ույժերը նշանակած են պիտու նշանով): Իսկ սեղմող ույժերը մինչև նշանով):

Ձգերի անունները	1	2	3	4	5
Վեհառի յերկարությանը մմ.ներով	26,5	30,5	30	26,5	30,5
Ներքին ույժը կգ-ներով	-265	+305	-300	-265	+305

Ուրիմակ 15. 30-ըդ զժազրում պատկերված չարդախն ամրացրած և ներքելի հենակում, իսկ վերքի հենակով նա ձգմած և դեղի պատը: Վորոշել ֆերմի ելեմենտների ներքին ույժերը, վորոնք առաջանում են վերքի դուռու վրա նստած տանիքի ծանրության ազդեցության տակ:


Բազմապատկելով տանիքի $\frac{1}{2}$ կշիռը ամեն մեկ հանգույցին հասնող մակերեսի վրա, մենք կստանանք հանգույցին կցած բեռնվածքը: Յեթև վերքի դուռու պանելների յերկարություններն իրար հավասար են, այսինքն $I-II=II-IV=IV-V$, ապա միջանկյալ $II-4$ IV հանգույցներին հասնող բեռնվածքներն իրար հավասար են: Իսկ եայրի I և V հանգույցներին հասնող բեռնվածքը հավասար կլինի $\frac{P}{2}$, վորովնեան այս հանգույցներին հասնող մակերեսը յերկու անգամ փոքր և քան II և IV հանգույցներին հասնող մակերեսը:

Հենարանների հակազդությանը գտնելու համար նախ վորոշենք նրանց ուղղությունները: Թոկային բազմանկյան ուղությամբ վորոշենք համազորի գործողության ուղիղը^{*}): Այլժերի սիստեմը հանգում ե-յերեք ույժի և վորովնեան նա հավասարակշռված ե, ապա այդ Յ ույժը պետք և հատվին մի կետում: Վորովնեան Q , հակազդումը հորիզոնական ուղղություն ունի, ապա, միացնելով այդ հակազդման ուղղության և R համազորի ուղության հատման կետը II հենարանի հետ, կստանանք յերկրորդ հակազդման ուղղությունը: Մի կողմում վերցնելով հաջորդաբար արգած բոլոր ույժերը, մենք այդ ույժերի $R=\overline{AE}$ հա-

*) Ներկա դեպքում համազորի ազդման ուղիղը գտնելու համար կարիք չի ունենալ բազմանկյան կառավել-վորովնեան I , II , IV և V հանգույցներում կամ բարյու ույժերը սիմմետրիկ են վերքի վրա մեջանդի վերաբերմանը, և առաջար համազորն անցնեամ և այդ մեջանդով:

մաղորի վրա կառուցում ենք ույժային \triangle AEMA, վորի \overline{EM} և MA կողմերը տալիս են Q_1 և Q_2 հակագութերը:

Ստացված ույժային յեռանկյան վրա կառուցենք երեսո-



Դ. 30

նայի դիագրամը, սկսելով կառուցումը 1 հանգույցից, վորտեղ հատվում են աբսուբին $\frac{P}{2}$ ույժը և վերքին ու ներքնի գոտիների 1 և 2 ելեմենտների ներքին ույժերը. Ստանում ենք $ABFA \Delta$ -ը, վորի \overline{BF} կողմեարտահայտում և 1 ելեմենտը ձգող ույժը, իսկ \overline{FA} կողմը, 2 ելեմենտը սեղմող ույժը:

Անցնելով 2 հանգույցին, վորտեղ հագուստարակումում են չորս ույժեր՝ P , I , 3 և 5 , վորոնցից անհայտ են վերքին յերկուսը. այս ույժերը վորոշվում են $BCGFB$ ույժային բազմանկյունուց \overline{CG} կողմը տալիս է 5 ձգող ձգող ույժը, իսկ \overline{GF} կողմը՝ 3 ձգող սեղմող ույժը:

Ապա անցնում ենք III հանգույցին և նրա համար կառուցում AFGHA ույժային բազմանկյունը, վորից գտնում ենք, վոր 4 ձողը ձգվում է GH ույժով, իսկ 6 ձողը սեղմվում HHA ույժով. IV հանգույցի համար կառուցում ենք ույժերի հինգանկյուն՝ CDKHGC և վրոշում 7 և 9 ձողերի ներքին ույժերը. V հանգույցի համար կառուցում ենք ույժերի հինգանկյուն՝ DEMLKD և վրոշում 8 և 11 ձողերի ներքին ույժերը. VI հանգույցի համար 6, 7, 8 և 10 ույժերը տալիս են փակված AHKLA քառակյունը, վորից վրոշվում ե-10 ձողի ներքին ուլոց (LA). Վերջապես VII հանգույցի համար մենք պետք են ստանանք ույժային փակված Δ MALM.

Խնչպես տեսնում ենք, վերին դոտին ձգված ե, ձգված են նաև 4 և 8 ձողերը, իսկ ներքնի դոտին և 3 ու 7 ձողերը սեղմը ված են:

Յենթադրենք, թե I հանգույցից հետո մենք անցնում ենք III հանգույցին, վորուղի հատվում են 2, 3, 4 և 6 ձողերը, կարմար կլինեյինք մենք գտնել անհայտ ույժերը. Այդ հանգույցում անհայտ ույժերը 3 են (3, 4 և 6), Վորովկեան փակված քառակյունն չի կարելի կառուցել, յեթե արված են նրա միայն մի կողմօք, իսկ մասած 3 կողմանի ուղղությունները, ապա վորուղի ույժերը վորովել մենք չենք կարողանաւ Անմթե ինչու I հանգույցից պետք ե անցնել II-ին, վորանդ անհայտ են յերկու մեծություններ (3 և 5 ձողերի ներքին ույժերը) վորից հետո միայն անցնել III հանգույցին, վորովկեան նախապես վորոշվում ե 5 ձողի ներքին ույժը և մուտք են միայն յերկու անհայտներ:


§ 16. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.

6. Բառ 22-ըդ գեղքի գանել Q₁ P₁, և P₂ ույժերի համար զորը. Կան P₁, P₂ և P₃ ույժերի համարորը,

7. Տրված ե P₁=30 կգ, P₂=31 կգ, P₃=31,6 կգ, և P₄=41 կգ ույժերի սխալները. Գտնել այդ ույժերի համագորը, յերբ նրանց ուղղությունները վորոշվում են հետեւյալ կոորդինատներով (ույժերն ուղղված են A-ից դեպի B): *

		P ₁	P ₂	P ₃	P ₄
A	x ₁	55	-45	-70	50
	y ₁	10	45	35	-30
B	x ₂	25	-55	-40	60
	y ₂	10	95	20	-70


8. Վճռել նախորդ խնդիրը, փոխելով P_1 և P_2 ույժերի արագիսաւերը՝ $x_1 = 40$, $x_2 = 30$ և $x_3 = 15$, $x_4 = 45$:




գծ. 31

9. Վորոշել 31-րդ գծագրում պատկերված հեծանի հենարանների հակազդումները, յեթե $P_1 = 150$ կգ, $P_2 = 100$ կգ, $P_3 = 150$ կգ, $P_4 = 200$ կգ, $P_5 = 100$ կգ, $a = 500$ մմ, $b = 1$ մ, $c = 500$ մմ, $d = 2$ մ, $l_1 = 2,5$ մ և $l = 4$ մ. Արդյունքն ըստուգել անալիտիկորեն:

10. Նախորդ խնդրի համար գտնել ամենամեծ ծռող մոմենտը և նրա համապատասխան հատանքի հեռավորությունը ձախ հենարանից: Արդյունքն ստուգել անալիտիկորեն:



գծ. 32



գծ. 33

11. Նույն խնդրի համար գտնել ամենափոքր ծռող մոմենտը և նրա համապատասխան հատանքի հեռավորությունը ձախ հենարանից: Արդյունքն ստուգել անալիտիկորեն:

12. Գծել 31-րդ գծագրում պատկերված հեծանի համար կրող ույժերի դիագրամը:

13. 5 մ յերկարության հեծանը (գծ. 27) բնանավորած և հավասարաչափ դասավորած բեռով՝ $q=200$ կգ/մ: Գտնել մաքսիմալ մոմենտը և անալիտիկորեն ստուգել նրա արժեքը:

14. Նույն հեծանի համար գտնել ձախ հենարանից 2 մ հեռավորության վրա գտնվող հատանքի կտրող ույժը:


15. Վորոշել 32-րդ գծագրում պատկերված ֆերմի ելեմենտների ներքին ույժերը, յեթե $P_1=P_3=1000$ կգ և $P_2=P_4=2000$ կգ:

16. Վորոշել 33-րդ գծագրում պատկերված շարղախային

Քերամի ձողերի ներքին ուժեցիքը, յի թիւ $P_1 = P_2 = 1000$ կգ և $P_3 = P_4 = 2000$ կգ:



Պ. 34



Պ. 35

17. Վորոշել շրջադարձ կռանի (պ. 34) ձողերի ներքին ուժեցիքը, յի թիւ $Q = 3$ տոննի:

18. Վորոշել 35-րդ զետքում պատկերված ֆերմի ելեմենտների ներքին ուժեցիքը, յի թիւ $P_1 = P_2 = 500$ կգ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՆՑՈՒԹԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԽԵՐԱՎՈՒՅՏ ՀԱՅԻՆ

ԶԴՈՒՄ ԲԵՎ ՍԽՆԱԳՈՒՄ

§ 17. ՆՑՈՒԹԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԽՆԴԻՐԸ:
ԴԵՖՈՐՄԱՑԻԱՆ Ստատիկան տալիս ե պինդ մարմի հավասարակշռության անալիտիկական պայմանները: Գրաֆիկական մեթոդը, վորի հետ մենք նոր ժամանացանք, նույն հարցերը քըն-նարկում ե յերկրաչափական տեսակետից:

Մարմի ֆիզիկական համկությունները (պնդությունը, ամ-ըռությունը, առաձգությունը, սարուկառությը և ֆիզիկական այլ առանձնահատկությունները) տեսական մեխանիկան չի հետազոտում: Նա իր հետեւթյունները հիմունք ե այն յենթադրություններա, թե մարմի ձեր բացարձակորեն անփոփոխ ե և մարմիննիդեալական դիմացրություն ե ցույց տալիս իր վրա ազդող արտաքին ույժերի գործողությանը: Ռբականում բանն այլ կերպ—յուրաքանչյուր մարմին, վոր բաղկացած ե վորոշ նյութից, կրելով իր վրա արտաքին ույժերի ազդեցությունը, բոլորովին վորոշ կերպ անդրադանում ե այդ ազդեցությունը: Արտաքին ույժերն առաջ են բերում մարմի ձեր փափոխություն, վորին մարմինը, չնորհիվ կաղակցության ներքին ույժերին, վորոշ դիմադրություն ե ցույց տալիս: Հետեւանքն այն ե լինում, վոր մարմինն ստանում ե դեմքորմացիա և նրա մեջ առաջանում են վորոշ ներքին լարումներ:

Այսպիսով հավասարակշռության մեջ դանվող մարմի վոր ազդող արտաքին ույժերն առաջ են բերում մարմի դեմքորմա-

ցիս: Սա կարող է հասնել այնպիսի չափերի, վոր կարող է խախտվել մարմար մասնիկների մեջ յեղած կաղակցությունը, և մարմինը կախի քայլայվել: Մի քանի դեպքերում զեփորմացիան այնքան մեծ է լինում, վոր նա նկատվում է հասարակաշրջավ, որինակ, յեթե մի յերկար տախտակ տափակ յերեսով գնենք յերկու հենարանների վրա, մենք կտեսնենք, թե ինչպես նա զգալի չափով կորացել է: Մյուս դեպքերում զեփորմացիան համեմատը առնշան և և նրան կարելի յև հայտնաբերել միայն հատուկ ապարատների ոգնությամբ: Այս ասածներից հետեւմ և, վոր լիովին խուսափել արտաքին ույժերի ազդեցության-առակ գտնվող մարմար զեփորմացիայից անհար և, բայց ակներն և, վոր կառուցվածքի կամ մեքենայի մասերն այնպիս պետք և լինեն պատրաստված, վորպեսզի նրանց ստացած զեփորմացիաները թուրքամքելի տահմանից չանցնեն^{*)}:

Նպատակ դնելով ապահովել մեքենայի կամ կառուցվածքի մասը կազմող ամեն մի զետալի անհամեստ և բավականաչափ ամրությունը, մենք պետք ե կարողանանք առաջուց հաշվի առնել այն բոլոր գործոնները, վորոնք պայմանավորում են այդ ամրությունը: Ան այս խնդիրն ե վճռում նյութերի դիմադրության գիտությունը, մի զիտություն, վորը տեսական մեխանիկայի և ֆիզիկայի որենքները կիրառում ե վորոշ նյութից պատրաստած և վորոշ պայմաններում աշխատող ռեալ ֆիզիկական մարմար վերաբերմամբ:

Նյութերի դիմադրության տեսությունը, ոգտագործելով տեսական մեխանիկան, պետք ե իր տրամադրության տակ ունենա և՝ մի ամրող շարք փորձնական տվյալներ, վոր վերաբերում են զանազան տեսակ նյութերին:


Վորովհետեւ ճնշող մեծամասնության դեպքերում թույլատրելի զեփորմացիաները չնչին են, համեմատած մարմար չափերի հետ, ապա, կիրառելով հավասարակշռության պայմանները զեփորմված մարմար վերաբերմամբ, մենք հավասարակշռության պայմանների մեջ դնելու յենք մարմար այն չափերը, վոր նա ունեցել և մինչև զեփորմացիան:

§ 18. ՆԵՐՔԻՆ ՈՒՑԺԵՐ ՅԵԿ ԼԱՐՈՒՄՆԵՐ: ՀԱՏԱԵՔՆԵՐԻ ՄԵԹՈԴՆ: Մարմար վրա գործող ույժերը մարմարի մեջ առաջ ճնշերում վորոշ ներքին ուցժեր, վորոնք գործում են այս կամ այն ուղղությամբ: Այսպես, դառնալով վերել քննարկած ֆերմի

^{*)} Ցերեալ գդայի չափով զեփորմացիան հատուկ զետալի կիրառման նպատակն է կոզմում (որինակ, գողուակները).

Հեմինաների մեջ տոռշացած ներքին ույժերի վորոշման որբնակ-ներքին, մենք տեսնում ենք, վոր ֆերմի վրա ազդող արտաքին ույժերն առաջ են քերում նրա ձողերի յերկարակթյամբ ուղղված ներքին ույժերը: Յերկակայորեն ֆերմից անջատելով նրա մի մասը, մենք տեսանք, վոր ներքին ույժերը, վորոնք ներկայաց-նում են դեն զցած մասի ազդեցությունը նացած մասի վրա հավասարակշռված են այս վերջինիս կցած արտաքին ույժերի հետ: Այսպիսով ձևափոխված մարմին մեջ ներքին ույժերի վո-րոշումը հանդում է մարմին այս կամ այն մասի հավասարակշռ-ության ինդըրի լուծմանը:

Վերցնենք մի մարմին, վորը գտնվում է հավասարակշռու-թյան մեջ նրա վրա գործող $P_1 - P_2$ ույժերի սխալեմի ազդեցու-թյան տակ (գծ. 36): Տանենք այդ մարմին մեջ MN հատող հար-



Գծ. 36

Բությունը, վորով մարմինը բաժանվում է յերկու մասի՝ A_1 և A_2 : Յերկակայորեն դեն զցելով A_1 մասը, մենք տեսնում ենք, վոր A_1 մասը նրա վրա գործող $P_1 - P_4$ ույժերի ազդեցության տակ հավասարակշռության մեջ մնալ չե կարող ե, վոր այդ մա-սի հավասարակշռության պայմանները կազմելիս, մենք պետք են հաշվի առնենք ինչպես $P_1 - P_4$ արտաքին ույժերը, այնպես ել ներքին ույժերը, վորոնք ներկայացնում են դեն զցած մասի ազ-դեցությունը նացած մասի վրա և արտահայտվում են մի վորեն R վեկտորով: Դիցուք մեզ հարկավոր ե վորոշիլ MN համաման մի վորեն C կետի վրա ազդող ներքին ույժը, վերցնենք այդ կետի շուրջը մի շատ փոքր կակերես ΔF և գտնենք այդ մակերեսի վրա ազդող ներքին ույժերի ΔR համապորը: այն ժամանակ $\frac{\Delta R}{\Delta F}$ հարաբերությունը կշափի C կետում ազդող ներքին ույժի մե-ծությունն ըստ ΔF մակերեսի: Այդ հարաբերությունը կոչվում

և լարում, վորքան փոքր և վերցրած ΔF մակերեսը, այնքան ավելի $\frac{\Delta R}{\Delta F}$ հարաբերությունը մոտ կլինի լարման խսկական արժեքին:

Յեթե R ույժը հավասարապես և աղջում ամրող MN հատանքի վրա, ապա լարումը նույնը կլինի հատանքի, բոլոր կետերում և հավասար կլինի R ույժի և F մակերեսի քանորդին: Այսպես, յեթե վերցնենց ֆերմի մի ելեմենտ ($\text{գծ. } 37$), վոր ձբգվում և այդ ելեմենտի տառնցքի ուղղությամբ աղջող P ույժով, ապա $abcd$ հատանքի լարումը, յեթե հատանքի մակերեսն և F , հավասար կլինի $\frac{P}{F}$:

Ույժը սովորաբար արտահայտում են կզ-հերով, մակերեսը՝ սմ²-հերով, հետևապես լարումը չափվում է կզ/սմ²=կզսմ²-հերով:



Գծ. 37

Դառնալով ՅԵ-րդ գծապրին, մենք գալիս ենք այն հետեւթյան, վոր, դեն գցելով A_1 մասը և քննարկելով լարցած A_2 մասը, մենք R վեկտորի համար կստանանք ուղիղ հակաղիք ուղղություն: Հետևաբար նույն ուղղությունը կունենան արտաքին ույժերի աղդեցության տակ տռաշացած լարումներն արդ հատանքում: Յեթե մենք MN հատանքը տանելինք այլ կերպ, R վեկտորի հետ այլ անկյուն կազմող ուղղությամբ, ապա և հատանքի դանագան կետերում լարումն ել այլ կստացվեր:

Այս ասածներից հետեւմ ե, վոր ներքին ույժի մեծությունը չի բնորոշում նյութի լարվածության աստիճանը: այս աստիճանի մասին հասկացողություն ունենալու համար հարկավոր

և զիտենաւը, թե Բնչ բեռնվածք և հոսնում լայնական հոտունքի ամեն է քառ. միավորին:

Հորդեր.

1. Ի՞նչ տարրերություն կա ներքին ույժի և լարման մեջ, ի՞նչ միավորներով են արտահայտվում մեկը և մյուսը:

2. Կարելի՞ յե ներքին ույժի մեծությունը հասկացողություն ունենալ լարման մեծության մասին:

3. Վեր պայմաննում են տարրեր ույժերը զանազան դեալ-ներում առաջ բերում նույն լարումը:

Ծ 19. ԱԹԱԶԻԴ ՑԵՎ ՄՆԱՑՈՒՆ ԴԵՖՈՐՄԱՑԻԱՆԵՐ. ՀՈՒԿԻ-
ՈՐԵՆՔՆ. Այսպես ուրիշն առաջի վրա ույժի ներգործության հասեանցն և լինում առաջի ձեռի փոխվելը: Վորոշ զեղցերում ույժի գործողության գաղարումից հետո մարմինը, շնորհիվ նրա մեջ առաջացած ներքին ույժերի, վոր կաշվում են առաջության ույժեր, ընդունում ե իր սկզբնական ձեր. մյուս զեղցերում գե-
ֆորմացիան չի անհատանում, մեռմ և—դա կախումն ունի մարմ-
նի նյութի հատկություններից և լարման մեծությունից: Այս-
պես, փորձը ցույց ե, տալիս, վոր պողպատն ավելի հեշտ և վե-
րականցնում իր ձեր, քան յերկաթը կամ չուգունը, այս վեր-
ջինս ավելի լավ, քան արճինը, և այլն, իսկ մնջրամոմը մեռմ և
ձեռփոխված դրության մեջ նույն իսկ աննշան բեռնվածքի գործողություններից հետո: Դրան համապատասխան մարմինները լի-
նում են առաջին (պողպատ, յերկաթ, չուգուն; փոյտ, ողինձ և
այլն) և վոր առաջին կամ պլաստիկ:

Սակայն հարկավոր ե նշել, վոր բնության մեջ գոյություն-
չունեն լրիվ առաջին մարմիններ, ինչպես և գոյություն չու-
նեն լրիվ անառաջին մարմիններ: Խնչպես կախունենց ներ-
քում, ամեն մեկ նյութի համար փորձնական յեղանակով կա-
րելի յե վորոշել լարման այն սահմանը, վորից հետո մարմինը
լիովին չի վերադառնում իր սկզբնական ձեռին: Այդ սահմանը
մի քանի նյութերի համար բարձր ե, մյուսների համար՝ ցածր:
Այսպես՝ պողպատյան սեսորը կարող է լրիվ մեծ բեռնվածք, հա-
մեմտած յերկաթյան սեսորի հետ, և ձեռփոխված չմասլ բեռ-
նվածքը վերցնելուց հետո: Սրան համապատասխան տարրե-
րում են առաջին և մայուն դեֆորմացիաներ: Խնչպես ասած եր
վերեւում, բեռնվածքած զետալի ձեռի փոփոխությունը ցանկալի-
չե, այդ պատճառով զետալի հաշվում անում են այնպես, վոր
նա բեռնվածքի մաքսիմալ արժեքի և աշխատանքի ամենաա-
նպաստ զեղցում մայուն դեֆորմացիաներ չստանա, վորոնց կա-
րող են հետազում պատճառ դառնալ նրա լրիվ քայլայման:

ՅԵՆՔ-ՊԵՐԵԿԻՆԸ, թե մենք վորոշ ույժով ձգում ենք սետինե շնուրը, ՄԻՒՃԱԳՆԵԼՈՎ ձգող բեռնվածքը, մենք կնկատենք, վոր շնուրն ավելի շատ կճպի: Այսպիսով ուրիշ մեծ բեռնվածքի, հետևապես և մեծ լարման դեպքում մարմինն ավելի մեծ դեֆորմացիա յի ստանում: Բնականորեն հարց և ծագում, թե արդյոք դեֆորմացիան վորոշ կախում չունի՞ լարումից:

Դեռ XVII դարի վերջին քառորդում Խորերտ Հուկն այդ կախումն արտահայտեց չափազանց պարզ ձևով—դեֆորմացիան ուղիղ համեմատական և լարմանը:

Այս զրույթը, վոր հայտնի յի Հուկի որենք անունով, իրական և յուրաքանչյուր դեֆորմացիայի վերաբերմամբ, վոր յի դուրս յեկել առաջնորդության սահմանից:

Խոչպես կանոննենք հետազայում, նյութերի դիմադրության ահանության բոլոր հիմնական յեղակացությունները հիմնվում են այս որենքի վրա:

Հարցեր

1. Դմք դեֆորմացիաներն են կոչվում առաձիգ: Իսկ վմբռնք մասյուն:
2. Խոչըւ մասյուն դեֆորմացիաները ցանկալի չեն:
3. Ի՞նչ և արտահայտում Հուկի որենքը:

վող նմուշի մի ծայրն անշարժ ամբացվում և մեջենայի մեջ, իսկ մյուս ծայրը յննթարկվում և ույժերի վոլորող մոմենտի ազդեցությանը 106-րդ գծագրում պատկերված և այս տեսակ մի մեջնուածքը մոմենտը 15000 կգ/սմ և Նարժուամը մեջենային կարելի յև հազորդել կամ հատուկ փոխանցումով։ Ա հոլովակի ոզնությամբ և կամ ձեռքի փոխանցումով։ Բ ըռնակի միջոցով։ Փորձարկելի Ը նմուշն ամբացնում են Ծ և Ե սեղմակների միջն վոլորող մոմենտը հավասարակշռելու համար ծառայում և Ա բեռնակը, վորը շարժվում և Բ լծակի յերկարությամբ։ բեռնակի զիրքով Բ լծակի վրա վորոշվում և վոլորող մոմենտի մեծությունը, վոլորումն անկյան մեծությունը ցույց և տալիս Ծ ցիֆերբլատը։ Մեքենան ունի ինքնազիր ապարատ, վորը գծում և վորման անկյան և վոլորող մոմենտի կապն արտահայտող զիրքումը։ Ցետեսի սեղմակի (Կ սահուկների հետ միասին) զիրքավորումը կատարվում և Լ բեռնակի միջոցով, վորի ոզնությամբ պատում են հնուցի յերկարությամբ անցնող պտուտակը։

Սետաղների մեծ մասի համար վոլորող Ազ մոմենտի և վորման շահագույն կազմն արտահայտող զիրքամեջ ունի այն ձևը, վոր պատկերված և 107-րդ գծադրում Խնչպես տեսնում ենք, այդ զիրքամը հիշեցնում է ձգման և սեղմումի ձևափոխության զիրքամը։



Գծ. 107

Դիագրամի ՕԱ մասը զրեթե ուղիղ զիծ և ցույց և տալիս, վոր վոլորման շահագույն և վոլորող Ա₁ մոմենտի սահմաններում ձևափոխությունը յննթարկվում և Հուկի որենքին և առանձիղ ե։ Ա կետից հետո համեմատականությունը խախտվում է—նմուշն ստանում և վոլորման մնային անկյունների Ցերը վորորող մոմենտը հասնում և վորոշ մեծության, վոր արտահայտված և շ, Յ որդինատով, նմուշը քայլայվում ե։ Առաջիկ ձև-

փոխություններ բոլորովին չունեն միայն փիսրուն նյութերը (որինակ չուգունը) և նրանց դիտպամի մեջ բացակայում է ՕԱ մասը:

Ճիշտ նյութերի համար վոլորդան այն անկյունը, վոր համապատասխանում է նյութի քայլայմանը, բավականին մեծ և Մետաղների մեծ մասի (բացառությամբ չուգունի) քայլայմանը կատարվում է լայնակի հատանքի ուղղությամբ: Այլ կերպ է կատարվում այն նյութերի քայլայմանը, վորոնք ունեն առանցքի ուղղությամբ թելիկային կազմություն—այդ դեպքերում թելիկները հղվում են յերկայնակի ուղղությամբ (իբայտ, յեռած յերկաթ), իսկ լայնակի հատանքում առաջանում են կենտրոնից դեպի շրջադիմը լայնացաղ ճեղվածքներ:

Խնչպես մինչև այժմ քննարկեած, այնպես ել այս ձևափոխության ժամանակ, դինամիկական բնունվածքը՝ համեմատած ստատիկականի հետ, նվազեցնում է չորսուի դիմադրությունը՝ նրա վրա ազդող վորորդ մոմենտին: Այդ պատճառով աշխատում են, վոր ույժը հաղորդվի չորսուին հանդիսա կերպով, առանց կտրուկ տառանումների և հարգածների, վոր առաջ և բերում շարժվող մասերի կենդանի ույժը:

Հարգածներով հաղորդվող բեռնվածքի վետակար ազդեցությունն առանձնապես խիստ և լինում այն սռնիների մեջ, վորոնք ունեն անցումներ մի արամազդից մի ուրիշ արամազդից, վորովհետև լարումները շատ խիստ մեծանում են այդ անցումների մոտ, և այս մեծացումն այնքան խոշոր և, վորքան շեշտակի յի անցումը: Նույնպես մեծանում են լարումներն այն սռնիների մեջ, վորոնք ունեն վզիկներ, յուղային ակրոներ առանցքի ուղղությամբ, և այլն: Այս պատճառով սռնիների մեջ անցումները պետք ե անել սահուն կորացումով և, վորքան կարելի յի, մեծ շառավղի աղեղով:

§ 48. ՎՈԼՈՐՄԱՆ ՀԱՇՎԱՑԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄԸ. ՏՐԱՆՍԻՒՄ ՍԻՆ ՍԻՌՆ ՍՌՆԻՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ. Նշանակելով վոլորման թույլարելի լարումը կդ, մենք (79) հավասարումից ստանում ենք վոլորման հեանյալ հավային հավասարումը՝

$$M_q = \frac{I_0}{\tau} \cdot k_q \quad (86)$$

Այս հավասարման աջ մասի առաջին բազմապատկիչը, այսինքն բանորդը, վոր ստացվում է իներցիայի I_0 մոմենտի բա-

ժանելուց լորսուի առանցքից ամենահեռու թերիկների հեռավորության, այսինքն շառավիղի վրա, կոչվում և վարդան դիտադրության մոմենտ (կամ մոդուլ):

Նշանակելով դիմադրության մոմենտը W_0 , սահմանում ենք՝

$$W_0 = \frac{I_0}{r} = \frac{\pi d^4}{32} : \frac{d}{2} = \frac{\pi d^3}{16},$$

կամ, յեթե ընդունենք, զոր $\frac{\pi}{16} \approx 0,2$,

$$\underline{W_0 = 0,2d^3} \quad (87)$$

Հաշվային (86) հավասարումն այժմ կտրելի յե դրել այսպես՝

$$\underline{M_d = W_0 \cdot k_d \approx 0,2d^3 k_d} \quad (88)$$

Յեթե վոլորվող չորսուն մասմեջ են արտաքին d_1 և ներքին d_2 արածագեռ (գծ. 104), ապա՝

$$W_0 = \frac{I_0}{r} = \frac{\pi}{16} d_1^3 \left[1 - \left(\frac{d_2}{d_1} \right)^4 \right] \approx 0,2 d_1^3 \left[1 - \left(\frac{d_2}{d_1} \right)^4 \right] \quad (89)$$

$$\underline{M_d = W_0 \cdot k_d \approx 0,2d_1^3 \left[1 - \left(\frac{d_2}{d_1} \right)^4 \right] k_d} \quad (90)$$

Այս հավասարումների մեջ I_0 -ն արտահայտվում է սմ⁴-ներով, k_d -ը՝ կգ/սմ³-ներով, r -ը՝ սմ-ներով, հետևաբար M_d -ը՝ սմ⁴ · սմ⁻¹ · կգ · սմ⁻¹ = կգսմ⁻²ներով:

Թույլատրելի լարման (կց) արժեքներն ըստ Բախի հետայրներն են ($kg/ \text{sm}^2 \cdot \text{nm}$)¹⁾

Ն շ ա ւ բ շ	Ընդունակություն	Բախի մասմեջ		Բախի պաշտպանական մասմեջ		Պազպատական մասմեջ		Զաւգունական մասմեջ		
		Մասմեջ	Ներքեալ	Մասմեջ	Պաշտպանական մասմեջ	Մասմեջ	Պազպատական մասմեջ	Մասմեջ	Պաշտպանական մասմեջ	
	I	360	600	1200	900	1440	480	960	240	300
Բախի մասմեջ ակտուել	II	240	400	800	600	960	320	640	160	200
	III	120	200	400	300	480	160	320	80	100

Խնչպիս տեսնում ենք, չուզունը վաս և դիմադրում վոլոր-
ման, այդ պատճառով նու շատ հազվագեղ և դործածվում այն
դետալների պատրաստման համար, վորոնք յենթարկվում են վո-
լորման ձեափոխության:

Կազնու համար ընդունում են հանդիսա բեռնվածքի դեպ-
քում եզ = 80 կգ/սմ², խսկ II և III տեսակի բեռնվածքների դեպ-
քում այս թույլատրելի լարումը համապատասխանորեն փոքրաց-
նում են 1,5 և 3 անգամ:

Տրանսմիսիոն սռնիների համար թույլատրելի լարումների՝
աղյուսակում արված արժեքները չափազանց մեծ են, վորովնետե
այդ սռնիները յենթարկվում են բացի վոլորման, նաև ծովան
ձևափոխության, վոր տռաջանում և փոկերի պրկումից, սռնու
վրա նստած դետալների (հոլովակների, մուֆթերի) և սռնու սե-
փակոն կշռից: Այս նկատառումներով թափու յերկաթից պատ-
րաստած արանսմիսիոն սռնիների համար թույլատրելի լորումը
վերցնում են եզ = 120 կգ/սմ²,

Տեղազրելով այս արժեքը (88) բանաձեի մեջ, կստանանք՝

$$M_4 = 0,2 \cdot 120 \text{ d}^3 = 24 \text{ d}^3, \text{ վորտեղից}$$

$$\text{d} = \sqrt[3]{\frac{M_4}{24}} \quad (91)$$

Վոլորող մոմենտի մեծության փոխարեն դնելով $M_4 = 71620 \frac{\text{N}}{\text{n}}$,
մենք կստանանք մի բանաձե, վորտեղ արամագծի մեծությունն
արտահայտած և հղորության և պառյաների թվի միջոցով՝

$$\text{d} = \sqrt[3]{3000 \frac{\text{N}}{\text{n}}} = 14,42 \sqrt[3]{\frac{\text{N}}{\text{n}}} \quad (92),$$

վորտեղ N-ն ձիտույժերի թիվը և, խսկ ո-ը՝ պառյաների թիվը:
Այս վերջին յերկու բանաձեներն են կազմում I մասի § 59-ում
արված տռաջին աղյուսակի հիմքը:

Խնչպիս նշած եր այստեղ, սռնու արամագծից պետք և
ստուգել նաև վոլորման անկյան կողմից, վորը չպետք և անցնի
արված սահմանից:

Վոլորման անկյան բարձրագույն սահման ընդունվում ե
 $\frac{x^0}{4}$ սռնու յերկարության ամեն 1 մ-ի համար: Յելնելով սրանից,
կարելի յե վորոշել սռնու արամագծի մեծությունը,

Կիբառուելով (84) բանաձևը և տեղադրելով նրա մեջ վոլորման-անելյան մաքսիմալ արժեքը, վոր կազմում է $\gamma = \frac{1}{4} \cdot \frac{\pi}{180}$, ապա $= 1$ $m = 100$ մմ, մենք կստանանք՝

$$\frac{1}{4} \cdot \frac{\pi}{180} = \frac{32}{\pi} \cdot \frac{M_d \cdot 100}{G \cdot d^4}, \text{ վորակից}$$

$$d = \sqrt[4]{\frac{32 \cdot 100 \cdot 4 \cdot 180 \cdot M_d}{\pi^2 \cdot G}} \quad (93)$$

Բնդուանելով, վոր $G = 800000$ kg/mm^2 , կստանանք՝

$$d = 0,735 \sqrt[4]{M_d} \quad (94)$$

Վրաեկ Ա գ-ն արտահայտած է կզմմ-ներով, իսկ Ա-ն՝ սմ-ներով։ Տրամադիմով փոխանցվող հղորության և պառույտների թվի միջոցով արտահայտելու համար, այս վերջին հավասարման մեջ աեղադրենք $M_d = 71620 \frac{N}{n}$. կստանանք՝

$$d = 0,735 \sqrt[4]{71620 \frac{N}{n}}$$


կամ

$$d \approx 12 \sqrt[4]{\frac{N}{n}} \quad (95)$$

(94) և (95) հավասարությունների հիման վրա յե կազման մասի § 59-ի յերկրորդ աղյուսակը։

Գտաք և մատնանշել, վոր այս բանաձևերով հաշվում են միայն սովորական սռնիները, վորոնք չեն յենթարկվում զգալի-մեծություն ծառաց մամնաների ազդեցությանը։ Այս դեպքում, ինչպես կտեսնենք հետօգայում, արդ ձևափոխություններին նվիրած գիլում, պետք և հատուկ հաշվում անել (որինակ շարժիչի հիմնական սռնին, վերամբարձ մեքենաների սռնիները և այլն հաշվելու ժամանակ)։

Օրինակ 56. Պողպատյան Ա բորշտանդի ֆայբին ամրացրած արիչի վրա գլանի ($D = 400$ մմ) տաշման ժամանակ ճնշումը $P = 1000$ կգ (գծ. 108):



Գծ. 108

Կիրառենք (88) բանաձեռ, ստկայն, նկատի առնելով հարկածների հարավորությունը (տաշելը գնալու ժամանակ) և ծածան առկայությունը, ընդունենք նվազեցրած թույլատրելի լարում $k_f = 200$ կգ/սմ². կստանանք՝

$$M_f = 0,2 \cdot d^2 \cdot k_f = 0,2 \cdot d^2 \cdot 200 = P \cdot \frac{D}{2} = 1000 \cdot 20 = 20000 \text{ կգսմ},$$

վորտեղից $d = 7,9 \text{ սմ} \approx 80 \text{ մմ}$,

Այժմ յենենք վոլորման անկյունից և կիրառենք (84) բանաձեռ՝

$$\frac{1}{4} \cdot \frac{\pi}{180} = \frac{32 \cdot 20000 \cdot 60}{\pi \cdot 800000 \cdot d^4}, \text{ վորտեղից}$$

$$d = 77 \text{ մմ}.$$

Խնդիրն անհնում ենք, $d = 80 \text{ մմ}$ արամագիծն ապահովում են բորշտանդը և դեֆորմացիայի կողմից:

Օրինակ 57. Վորոշել կարապիկի սոնու արամագիծը, յեթե բռնակների վրա, վորոնց բազուկը $a = 350 \text{ մմ}$, գործում են յերկու բանվոր, ամեն մեկը 15 կգ ուժով: Թույլատրելի լարումը $k_f = 300 \text{ կգ/սմ}^2$,

Վոլորող մունիսը կազմում է՝

$$M_f = 15 \cdot 2 \cdot 35 = 1050 \text{ կգ/սմ}^2,$$

Կիրառելով (88) բանաձեռ՝ ստանում ենք՝

$$d = \sqrt{\frac{M_f}{0,2k_f}} = \sqrt{\frac{1050}{0,2 \cdot 300}} = 2,6 \text{ սմ}.$$

Օրինակ 58. Գետը և հաշվել ջրային տուրբինի անամեջ առնին (գծ. 104), յեթե տուրբինը, անելով $n = 120$ պառյա մի

բարեյում, դարձացնում է $N = 240$ ձիառլիժ և յեթե սանու ներքին տրամագիծը $d_2 = 0,8 d_1$ ։ Այսութիւնույթի լարումը կլ = 100 կգ/սմ²

։ Արտշենք վոլորող մոմենտը՝

$$M_d = 71620 \frac{N}{n} = 71620 \cdot \frac{240}{120} = 143240 \text{ կգ/սմ}^2$$

Եթեառհնը (20) բանաձեւ, նկատի առնելով, զոր $\frac{d_2}{d_1} = 0,8$ և $k_d = 100 \text{ կգ/սմ}^2$, կստանանք՝


$$M_d = 0,2 d_1^3 [1 - 0,8^4] 100 = 143240 \text{ կգսմ}^2$$

Այսուղից ստանում ենք՝

$$d_1 = \sqrt[3]{\frac{143240}{0,2 [1 - 0,8^4] 100}} = 23 \text{ սմ}, \text{ իսկ}$$

$$d_2 = 0,8 d_1 = 18,4 \text{ սմ}.$$

Օրինակ 59. Հաշվել վորոնի ձեռվ պատրաստած չուղղունյա խուլ մուֆթը (գծ. 109), վոր սիսցնում է $d = 0,8$ սմ տրամագիծ



Նկ. 109

ունեցող յերկու տրանսմիսիոն սանիներ, յեթե թույլատրելի լարումը կլ = 100 կգ/սմ², վորոշել նաև յեթիթի Յ լայնությունը, յեթե կտրումի թույլատրելի լարումը կլ = 250 կգ/սմ²,

Սանին, ունենալով տրամագիծ՝ $d = 8$ սմ, կարող ե անվտանգ հաղորդել վոլորող մոմենտ՝ $M_d = 12288 \text{ կգ/սմ}^2$ *)

*) Տես 1 ժամկ 59-ի սոլուսոնկարը.

Կիրառելով (90) հավասարումը, առանում ենք մուֆթի լայ-
նակի հատանքի դիմադրության մունաց:

$$W_0 = \frac{M_d}{k_d} = \frac{12288}{100} = 123 \text{ մմ}^2, \text{ Ուրեմն՝}$$

$$\frac{\pi (D^4 - d^4)}{32 \cdot \frac{D}{2}} = 123, \text{ վորտեղից}$$

$$D^4 - 627 D = 4096,$$

Բաժանելով բոլոր անդամները D -ի գրա, հավասարանե-
տանք հետեւյալ ձեռ:

$$D^3 = 627 + \frac{4096}{D}, \text{ վորտեղից}$$

$$D = \sqrt[3]{627 + \frac{4096}{D}},$$

Վճռելով այս հավասարումը փորձնական աեղադրումներ-
անելու միջոցով, գտնում ենք, զոր $D = 10$ մմ. Սակայն նկատի
առնելով, վոր, նախ, յերկիթը թուլացնում է մուֆթի մարմինը, և,
տպա, լրացուցիչ լարումները, զոր առաջանում են յերկիթը ներս-
ինքնիւս ժամանակ, նաև լարումների աննպաստ դասավորումը
յերկիթային տկոսի մեջ, ընդունենք $D = 140$ մմ, զոր համապա-
տասխանում է առվորական ընդունած առնչությանը՝ $\delta = 0,3 \text{ մ} +$
 $+ 10 \text{ մմ.}$

Մուֆթի յերկարությունը վերցնում են 3,5 մ-ից մինչև 4 մ,
վորի համապատասխան վերցնենք՝

$$l = 300 \text{ մմ} = 30 \text{ սմ.}$$

Յերկիթի՝ կտրումին յենթարկվող հատանքի մակերեսը՝

$$F = \frac{30 \cdot b}{2} = 15 b$$

Կտրում առաջացնող ուժը՝

$$P = \frac{M_d}{\frac{d}{2}} = \frac{12288}{\frac{4}{2}} = 3072 \text{ կգ.}$$

$$F = \frac{P}{k_4} = \frac{3072}{250} = 12,3 \text{սմ}^2,$$

$$k - b = \frac{F}{15} = \frac{12,3}{15} = 0,82 \text{ սմ. Ընդունենք } b = 10 \text{ սմ.}$$

Արիթուկ 60, Միջին մեծության ճախրային դաղպահների շղինդելի և արամագիծը վորոշելու համար պրոֆ. Նիկոլսոնն առաջարկել է հետեյալ բանաձեւ՝

$$d = \frac{h}{3},$$

վորտեղ և-ը դաղպահնի կենարոնների բարձրությունն եւ Արտածենք այս բանաձեւը:

Միջին մեծության դաղպահների դեպքում կարելի յեւ դանց առնել այն ծովումը, վոր առաջանում եւ շպինդելի մեջ մշակվող դեսալի՝ ձախ կենարոնին հասնող կշռից, և անել պարզ վորոշման հաշվում:

Շպինդելի կրած ամենամեծ վոլորող մամենաը հավասար է մշակվող իրի մաքսիմալ շառավղի և կտրիչի կրած ճնշման արագորյալին: Ըստ Նիկոլսոնի՝ առաջեղի մաքսիմալ շափնըը վորոշվում են հետեյալ առջություններից—տաշեղի հաստությունը (տաշումի խորությունը) $b = \frac{h}{40}$, լայնությունը $\delta = \frac{h}{160}$. այսպիսով

$$\text{լայնակի հատանքի ամենամեծ մակերեսը՝ } F = b \cdot \delta = \frac{h^3}{6400},$$

Ընդունելով, վոր առաջեղի լայնակի հատանքի յուրաքանչյուր 2 սմ-ի վրա ճնշումը հավասար է 20000 կգ-ի և վոր դաղպահնի՝ վրա առաջվող իրի մաքսիմալ արամագիծը կազմում է 2 հ սմ, կստանանք մաքսիմալ վոլորող մոմենտը՝

$$M_d = 20000 \cdot \frac{h^3}{6400} \cdot h:$$

Վերցնելով նվազեցրած թույլատրելի լարում $k_4 = 400$ կգ/սմ², կստանանք՝

$$\frac{20000 h^3}{6400} = 0,2 d^3 \cdot 400, \text{ վորտեղից}$$

$$d \approx \frac{h}{3} — Նիկոլսոնի առաջարկած բանաձեւ:$$

§ 49. ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՎՈՇ ԿՈՐ ՀԱՏԱՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՉՈՐՄՈՒՆԵԲԻՒ ՎՈԼՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ: Վոլորման մեր քննարկած տեսությունը հիմքած և այն յինթաղրության վրա, վոր ձեռափոխված չորսուի լայնակի հատանքները հարթ են նույն, բայց դա նիշտ և միայն կը որ հատանք ունեցող չորսուների պերս բերմամբ, այլ ձեմի հատանք ունեցող չորսուների վոլորման ժամանակ ձեռափոխությունը բարդանում և նրանով, վոր չորսուի լայնակի հատանքները կորանում են Այսպիս, յեթե այդ տեսակ չորսուի մակերեսույթի վրա նշենք լայնակի հատանքներ և արանց ուղղահայց ուղղիղներ, ապա ձեռափոխությունից հետո այդ գծերն այն ձեր կը նդունեն, վոր ցույց և տրված 110-րդ գծագրում, այսինքն նիստի կողի մոտ պանցած քառակուսիները բոլորովին չեն զեղչում, իսկ նիստի մէջ տեղում զանգվածները խիստ զեղչում են, Մրանից այն հետեւությունը կարելի յն անել, վոր ամենամեծ լարումներ կրում են չորսուի այն ելեմենտները, վորոնք դանդում են չորսուի առանցքին մոտիկ, այսինքն A, B, C և D կետերը (գծ. 111),




93. 110 Հաշվումը ցույց և առալիս, վոր յեթե լինեն նույն վոլորող մասենաց և նույն թույլատրելի լարումը, ապա ուղղահայց կուն հատանքով չորսուն

ավելի ծանր և ստացվում, քան կը որ հատանքովը, վորը, հետապնա, ավելի լավ և ոգտագործում նյութը Այս և պատճեռը—միաժամանակ նաև պատրաստելու հեշտությունը,—վոր գործածում են բացուապես կը որ սռնիներ


§ 50. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 40. В սռնակալի մեջ պատվող սռնին (գծ. 112) իր առանցքի ուղղությամբ կրում և P ճնշումը և հաղորդում այն Ա ուսիկին: Վորոշել այս վերջինիս անհրաժեշտ ծառառությունը, յեթե ուսիկի ճնշումը սռնակալի վրա ուն հարթության վրա կազմաւմ և 60 կգ/սմ², d=80 մմ, D=96 մմ, ընդունելով, վոր թույլատրելի լարումը էլ = 200 կգ/սմ² և ստացված հատությանը 5 մմ ավելացնելով ուսիկի մաշտումի համար:

41. Մուկեղային վոտը թործով միանում և տապաստի (լե-
жենի) հետ (գծ. 113). տապաստի վրա վոտի ճնշման P բաղադ-




93. 111

բիչը կազմում և 2100 կգ, Սուրպել ճմլումի լարումը ուղղ հարթաքանակ վրա, յիթե $a = b = 30$ մմ, $c = d = e = 40$ մմ, Վորոշիլ նուն, թե թործը տապատի ժայրից բնչ և հեռավորության վրա պետք է լինի, յիթե $k_4 = 60$ կգ/սմ²:



Գծ. 112




Գծ. 113

42. Հաշվել 114-րդ գծագրում ցույց տրված միացումը, յիթե ձեռ ձգող ուժից $P = 1000$ կգ, թույլատրելի լարումը $k_2 = 1000$ կգ/սմ², $k_4 = 800$ կգ/սմ² և $K_{\text{մլ}} = 2000$ կգ/սմ²,

43. Վորոշել կափարիչը շողեղլանին միացնող բոլտերի ճաշա տրամադիելը (գծ. 83), յիթե գլանի տրամագիծը՝ $D = 750$ մմ, $p = 6$ մԾն, բոլտերի թիվը՝ $n = 15$ և թույլատրելի լարումը՝ $k_2 = 300$ կգ/սմ².


44. Մպեղային փայտայի ֆերմի քառակումի կախումը ախտանում և փայտայի տապատի հետ ուղղահամերից D_1 բոլտերի ողնությամբ (գծ. 115). Աղբանք վերևում վերջանում է թաթերով, վորոնց միջով անցնում են հորիզոնական D_2 բոլտերը, ընդ ոմեն կախուման նյութի ճմլումը փոքրացնելու նպատակով նրա անցքերի մեջ հուզ կիրառվ հաղցրած են գաղային խողվակներ, վորոնց միջով և անցնում են D_2 բոլտերը:

Հաշվել միացման ելեմենտները, յիթե կախումը ձգվում է $P = 7000$ կգ ուժով, $a = 15$ սմ և թաթերի հաստությունը $\delta = 10$ մմ. Թույ-



Գծ. 114

Դատրելի լորսութերն են— d_1 , բոլտերի թաթերի համար կ'է $= 800$ կգ/սմ², d_2 , բոլտերի փորակային մասի համար կ'է $= 480$ կգ/սմ², d_3 բոլտերի համար կ'է $= 640$ կգ/սմ², փայտի համար կ'է $= 10$



Գլ. 115

կգ/սմ², ճմլումի թույլատրելի լորսումը թելիկների ուղղությամբ կ'է $= 25$ կգ/սմ², թելիկներին ուղղահայաց ուղղությամբ՝ կ'է $= 50$ կգ/սմ².

45. Դոմկրատի յերկաթյա պառակակը, վոր ունի քառակուսի փորակ և աշխատաւմ և բրոնզյա պառակմերի մեջ, բարձրացնում և $P=15$ տոնն բեռ. Պառակակի ներքին արամագիծը՝ $d_1 = 60$ մմ, արտաքին արամագիծը՝ $d_2 = 77$ մմ, քայլը՝ $S=17$ մմ. Վորոշել պառակմերի և բարձրությունը, յեթե կ'է $= 75$ կգ/սմ², կ'է $= 300$ կգ/սմ².

Ցուցում. Նշանակելով պառակմերի բարձրության համապատասխան պատառների (ՎԻՏՕԿ) թիվը n , գանում ենք, վոր ճմլուման յենթարկվող մակերեսը կազմում և

$$F = n \left(\frac{\pi d_2^2}{4} - \frac{\pi d_1^2}{4} \right),$$

Պառակմերի $H_1 = S \cdot n$ բարձրությունը վորոշելուց հետո, ստուգել կարումի ձևափոխությունը. կարումի մակերեսը կազմում և $F_1 = \frac{1}{2} \pi d_1 H_1$ (պառակմերինը) և $H_2 = \frac{1}{2} \pi d_1 H_1$ ($\text{պառ-$

ակմերինը).

46. Յերկաթյա ձողը, վորի արամագիծ՝ $d = 6$ սմ և յերկարությունը՝ $l = 4$ մ, մի ծայրով ամրացրած և անշարժ, իսկ մյուս ծայրում վոլորվում և վոլորող Մզ մոմենտով (գծ. 100). Վորոշել—
1) վոլորման լրիվ Դ անկյունը, յեթե $\overline{a_1} = 6$ մմ, 2) սահմանական մակերևութիւնը, 3) վոլորող Մզ մոմենտը և 4) ամենամեծ S_0 լարումը, յեթե ամբողջ ձողի վոլորման լրիվ անկյունը կազմում է 1° , $G = 8 \cdot 10^5$ կգ/սմ².

47. Վորոշել 53-րդ որինակում քննարկած չպինդելի յերկարության առեն մի մետրի վոլորման անկյունը, յեթե առաձգության մոգուլը՝ $G = 8,5 \cdot 10^5$.

48. Վորպեսպի չափեն շոգենավի մեջենայի հզորությունը, յերբ սոնին անում և $n = 120$ պտ/ր, վորոշում են սոնու վոլորման անկյունը: Սոնու արամագիծ՝ $d = 15$ սմ, Խաչը յերկու հավասար մեջենայի հզորությունը, յեթե սոնու յերկու՝ իրարից $l = 8$ մ հառավորության վրա գտնվող հատանքներն իրար վերաբերմամբ պատճում են $\gamma = \frac{1}{15}$ անկյունով: $G = 8 \cdot 10^5$ կգ/սմ².

49. Սոնին, վորի արամագիծ՝ 8,6 սմ և, անում և մի բուղեյում 45 պտույտ, Վերցան և նրա փոխանցած հզորությունը, յեթե $S_0 = 300$ կգ/սմ²,

50. Գտնել շոգենավային անամեջ սոնու արտաքին D և ներքին d արամագիծ, յեթե մեջենայի հզորությունը մի բուղեյում 100 պտույտի զեպչում կազմում է 8000 ձիառույժ, $k_f = 300$ կգ/սմ² և $\frac{D}{d} = 2$.

Համեմատել սոնամեջ սոնում Q_0 կշիռը միապաղադ սոնու. Q կշիռի հետ:

51. Նույն յերկարության յերկու սոնիները փոխանցում են նույն հզորությունը և ունեն նույն ամրությունը: Առաջին սոնու պտույտների թիվը և $n_1 = 75$ պտ/ր, իսկ յերկորդինը՝ $n_2 = 100$ պտ/ր: Վորոշել այդ սոնիների արամագծերի $\frac{d_1}{d_2}$ և կշիռների $\frac{Q_1}{Q_2}$ հարաբերությունը:


52. 1 ըռպենյում քմնի պտույտ պիտք և անի 10 սմ արամագծի սոնին, վորպեսպի նրա փոխանցած 240 ձիառույժ հզորությունն անվտանգ լինի նրա ամրությունն համար, յեթե $k_f = 300$ կգ/սմ², l^m նշանը պետք և փոխել պտույտների թիվը, յեթե ցանկալի յերեջենայի հզորությունը բարձրացնել մինչև 300 ձիառույժ, առանց փոխելու թույլատրելի լարումը ($ընդունել \pi^2 = 10$):

53. Վորոշել $l = 4$ մ յերկարության և $d = 8$ սմ տրամագծի սռնու վոլորժան շահեցանը, յեթե $k_d = 400 \text{ kq/mm}^2$ և $G = 8.10^4 \text{ kq/mm}^2$.

54. Պողպատալարը, վորի յերկարությունը՝ $l = 1$ մ և արամադիքը՝ $d = 2$ մմ, մի ծայրով ամրացրած և սեղմակի մեջ, իսկ մյուս ծայրում վորովում և զույգով, Վորոշել շահեցանը՝ $\frac{d_2}{d_1} = 0.3$, $k_d = 400 \text{ kq/mm}^2$ և յերկարությունը ամեն 1 մ-ի վորման թույլատրելի անկյունը կազմում է $\frac{\pi}{4}$, $G = 8.1 \cdot 10^4 \text{ kq/mm}^2$.

55. Մնամեջ սռնին, անկյունը $\Pi = 100$ պատ/ը, փոխանցում և $N = 100$ ձիառութիւն հորորության։ Վորոշել սռնու արամադիքը, յեթե ներքին և արտաքին տրամագծիքի հարաբերությունը՝ $\frac{d_2}{d_1} = 0.3$, $k_d = 400 \text{ kq/mm}^2$ և յերկարությունը ամեն 1 մ-ի վորման թույլատրելի անկյունը կազմում է $\frac{\pi}{4}$, $G = 8.1 \cdot 10^4 \text{ kq/mm}^2$.

56. AB հորիզոնական սռնին (գծ. 116) C հողովակի միջոցով շարժիչից ստանում և 150 ձիառութիւն, վորից կեսը կռնածն ա-




Գծ. 116.

տանանիթերի միջոցով փոխանցում և ուղղաձիգ սռնուն։ Վորոշել d_1 , d_2 և d_3 արամագծերը, յեթե հորիզոնական AB սռնին անում է 50 պատ/ը և $k_d = 400 \text{ kq/mm}^2$.

57. $O_1 O'_1$ սռնին (գծ. 117) t_1 հատանքում նստած հողովակի միջոցով ստանում և $N = 80$ ձիառութիւն ծներգիրան բաշխվում և հնակյալ կերպով— O_1 ծայրում 15 ձիառութիւն, C_1 հատանքում՝ 15, e_1 -ում՝ 15, h_1 -ում՝ 20, m_1 -ում՝ 15 և O'_1 -ում՝ 5 ձիառութիւն (կորուսները նկատի չենք առնում)։ Վորոշել սռնու բոլոր 6 մասերի արամագծերը, յեթե $\Pi = 200$ պատ/ը. Վորոշել սռնու $O_1 t_1$ և

ԷՇՈՒ մասերի վուլորման անկյունները և մի ծայրապույն հատանգի պատման անկյունը մյուս ծայրապույն հատանգի վերաբերմամբ:



23. 147

58. Կորուսելի թև թնձ ույժ և հարկավոր ծակատնելու համար
մի փափուկ յերկաթյա թերթ, յեթե թերթի հաստությունը՝
 $\delta = 12$ մմ, խսկ անցքի տրամադիմը՝ $d = 20$ մմ ($\sigma = 40$ կգ/սմ²).

Է 51. ԱՌԱՋԱԴՐԱՆՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ՀԱՄԱԲ. 5. Դժեցեք արանսմիսիոն տռնուց եներգիայի բաշխ-
ման սցեման: Խմացեք սանին շարժման բերող և լեկտրաշարժիչն
հղորությունը: Նշեցեք բոլոր հակափոխանցումները և նրանցից
յուրաքանչյուրի ծախսած հզորությունը (համաձայն ցեխային
տվյալների կամ տեղեկատուների) և կամ, վերջապես, յենելով
փոկի լայնությունից և լայնության ամեն 1 սմ փոխանցած ույ-
ժից, և հորսվակների արամագնիքից):

ա) Հաշվեցնք սահման դանագան մասերի վոլորող մոժենատները և պծեցեց այդ մոժենատների դիագրամը.


բ) ՎՐԱՌԵՑԻՑ Առնու զանազան մասերի լարումը.

գ) Հաշվեցնք սանու ամեն մի ժամկ վորորման անկյունը և վորորման լրիք անկյունը:

6. Նույն սեհատկ աշխատանքը էլեմենտներն են հակագույնաց-
ման սեփակի պերաբերամբ:

7. Վարոշեցնք, թե ինչ վկլուսը մտմենառ և կրում շաղինդելի առջերի մասը (ժանանիվի և պատրոնի միջն), յեզը նա ամենամեծ քեռնվածքի տակ և գանվում։ Վարոշեցնք շաղինդելի մաքսիմալ վկլուսը մտմենառ, վկլուսը անկյունը և վզիկի մակերեսութիւնը սահմանը։

8. Պարզեցնը, թե ամենամեծ տրամագծի շաղափով աշխատելու դեպքում Բնչ մաքսիմալ մատուցման (ուժաւագ) համար ե հաշված շաղափոյին դադարյան այս կամ այն նյութը շաղափելու ժամանակ, Յեթե մատուցումը կազմում է S մմ (գծ. 118), ապա շաղափի ամեն մի յեզրը պետք ե հաղթահանարի գծադրում մանրագծութ մակերեսն ունեցող առաջնայի դիմադրությունը: Բազմապատկելով այս մակերեսը $\left(\frac{\pi}{2} \cdot հիմքն ունեցող գուգահեռագիծ\right)$ ավյալ նյութի կարումի տեսակարար ճնշման վրա (տես 1 մաս, որինակ 103), կստանաք P ույժը, վորի ազդման կետը կարելի յի համարել շաղափի սայրի մեջտեղը: Կստանաք յերկու P ույժեր, վորոնք կազմում են դույզ՝ $\frac{P \cdot d}{2}$ մոմենտով:



Գծ. 118

Այս մոմենտի համաձայն վորոշեցնը, թե Բնչ լարում ե կրում շաղափի ձևը (պոչը):

—

Թ Ռ Ո Ւ Խ Ա


Տ 52. ՄՌՄԱՆ ԶԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, Մռման ձեռփոխության հետ կապված հարցերը, յերևույթի բարդության շնորհիվ, յերկար ժամանակ չեր հաջողվում լուծենէ, Ավելի քան 200 տարի հետո միայն այն ժամանակից, յերբ նշանավոր Դալիլելը (1630-ին) սկիզբ դրեց ծովան ուսումնասիրությանը, այդ ձեռփոխությունը ուսումնասիրվեց բավականաշափ լրիվ կերպով և հիմնավորվեց փորձի տվյալների հետ համաձայնող տեսություն։ Այս տեսության զարգացումը՝ բնդմավոր ընթացք ստացավ, յերբ իրենց լուծումն ստացան մի քանի հիմնական դրույթներ, վորոնց վերաբերում են այս ձեռփոխության բնույթին։

Պատշաճ եցսպերիմենտ պահանջող դրույթներից մեկն են ներկայացնում ծովող չորսուի առանձին թերիկի—այսինքն մի ելեմենտար չորսվիկի, վոր ունի անսահման-փոքր լայնակի հատանք և չորսուի առանցքին զուգանեռ ու նույն յերկարության առանցք—ձեռփոխության բնույթի սահմանումը։ Ցերկարանում և արդյոք թելիկը ծովան ժամանակ, թնչ չափի յե այդ յերկարացումը և նույնն ե լայնակի հատանքի զանազան կետերում և այլն—այս հարցերը յեղկար ժամանակ վեճերի առարկա եյին կազմում և նրանց մասին առաջարկվում եյին զանազան տեսություններ (Դալիլել, Մարիստա, Լեյբնից և ուրիշները)։ Մի հասարակ փոքր, վոր կատարեց Դյուքումենլը XVIII դարի վերջին, ճիշտ պատտասխան տվեց այս հարցերին և հետագայում ծառայեց իրուն հիմք ծովան տեսությանը։ Այդ փորձը հետեւյալն եւ։

Վերցնենք պրիզմաձև փայտայա մի չորսվիկ, վորի մեջ արգած են առանցքին ուղղահայաց և չորսվիկի բարձրության մինչև կեսը հասնող միջանցքիկ կարումներ՝ աճ, սճ, եֆ և այլն (գծ. 119)։ Չորսվիկը գնենք A և B հենակների վրա՝ կարումները դեպի ներքեւ (գծ. 119, ա) և ողղենք վրան R ույժով։ Աս ույժի աղղեցության տակ չորսվիկը կկորանա, կարումները ներքեն

կողմից կլայնանան, ինչպես ցույց և տրված գծագրի աշ կողմուն, Նույն չափերն ունեցող ամբողջակի չորսվիկի հետ համեմատած, այս չորսվիկն ավելի մեծ կորացում և տալիս և ավելի շուտ քայլարկում:

Կարուճների մեջ փոփոխման ընույթը ցույց և տալիս, վոր չորսվիկի ներքեւի նիստի, այսինքն ուսուցիկ մասի մոտ դանվող



Ձ. 119

թելիկները ձգվում-յերկարանում են. ձգված մասում սարքած կարուճները թուլացնում են չորսուի ամբությունը:

Երկնենք այժմ նույն փորձը, միայն չորսուն զնենք այնպես, վոր կարուճները լինեն վերեռում (զ. 119, օ): Նորից բեռնելով մի վորեւ Պույժով, մենք կնկատենք, վոր կարուճների արտաքին յեղբերը կմուենան իրար, ինչպես ցույց և արված գծագրի աշ կողմում, և յերբ Պույժը հասնի մի վորոշ մնաւության, այդ յեղբերը կհպվեն իրար, վորից հետո չորսուն կրկսի ավելի լավ զիմադրել Պույժի աղղեցությանը, թե՛նառթափ անենք չորսուն և կարուճների մեջ զետեղենք կարուճներին լավ հարդարած փայտյաթիթեղներ, և մենք կհամոզվենք, վոր այդ դեպքում չորսուն Պույժի աղղեցությանը կղիմազրե բոլորովին այնպես, ինչպես առանց կարուճների ամբողջակի չորսուն: Թեթե փորձենք հանել թիթեղները ձևափոխված չորսուի կարուճներից, մենք կտեսնենք, վոր նրանք շատ պինդ հպված են կարուճների մեջ: Այս բոլորից մենք պետք և այս հետևությունն անենք, վոր չորսուի դոզավոր կողմում գտնվող թելիկները յենթարկվում են սեղմումի, այդ պատճեռով ել այդ մասի ամբության վրա կարուճները չեն ապդում:

Նույն յեղբակացությանը մենք կզանք և մի ուրիշ, առանց կարուճների փորձի միջոցով՝ չորսուի վերեկի և ներքենի նիստերի վրա ուղղապահների մեջ զետեղենք յերկու բարակ թիթեղներ, վոր իրենց ծայրերով մի փոքր դուրս են ընկած չորսուից, և մենք կտեսնենք, վոր ձևափոխված չորսուի մեջ թիթեղները դո-

գովզը մասում մի թիչ դուրս են յեկեց, իսկ ուսուցիկ մասում՝ ներս քաշվել:

Այսպես ուրեմն՝ բառանկյունի հատանք ունեցած ծռվող լորսուի մեջ ուռուցիկ մակերեսվույթի կողմը գտնված բնելիկները յենթարկվում են ծգման օնվառիոխության, իսկ գողավոր մակերեսվույթի կողմը գտնվող թելիկները սպանման ծելափոխության:

Ը 53. Թելիկների ՑԵՐԿԱՐՈՅՈՒՄԸ ՅԵՎ ԿԱՐՀԱՅՈՒՄԸ
ՈՒ ՄՐԱՆՅ ՀԱՇԱՊԱՍԱԽԱՆ ԼԱՐՈՒՄՆԵՐԸ, ԶԵԶՈՒՄ ՇԵՐՏ ՅԵՎ
ԶԵԶՈՒՄ ԱԲՐԱՅՑՔ, Դիցուք ունենք ուղղագիծ առանցքով մի չորսու,
վորի մի ծայրն ամրացրած և պատի մեջ, իսկ մյուս ծայրին՝




Գ. 120

կցած և Պ ույժը (գ. 120). Չորսուն ունի սիմետրիայի Z Z հարթությունը, ընդուման Պ ույժը գտնվում է այդ հարթության վրա: Ույժի ազգեցության տակ չորսուն կկորանա—ան, ոճ և այլն ուղիղ գծերը կվերածվեն իրար գուգանեռ կոր գծերի: Չորսուի առանցքը նույնական կվերածվի հարթ կոր գծի: Վորոն ընկած կլինի սիմետրիայի նույն Z Z հարթության վրա: Այս տեսակ ձևափոխությունը կոչվում է հարթ ծռում, և հետագայում մենք միշտ այս ձևափոխությունը կուսումնասիրենք:

Չորսուի կողմանային նիստերի վրա տանելով չորսուի առանցքին ուղղահայաց մի շարք ուղիղներ, Պ₁ Պ₂, Պ₃ և այլն, մենք կտեսնենք, վոր նրանք ձևափոխությունից հետո արդեն իրար գուգանեռ չեն լինի, հետեւար և չորսուի լայնակի հատանքները ձևափոխությունից հետո իրար հետ մի վորոշ անկյուն կկազմեն: Փորձը և տեսական հետազոտությունը ցույց են տալիս, վոր այդ լայնակի հատանքները կարելի յե հարթ համարել և ձևափոխությունից հետո, վորովհետև հատանքների աննշան կորացումը կարելի յե հաշվի չառնել: Այս յենթադրության վրա յե հիմնավորված ծռման տեսությունը:

Վերևում պարզեցինք, վոր ծռված չորսուի վորոշ թելիկները ձգված են, մյուսները՝ սեղմված: Փորձը ցույց է տալիս,

վոր թելիկների ձգման կամ սեղմումի ձևափոխությունը այնքան մեծ է, վորքան նրանց մոտ են ուսուցիկ կամ գողազոր նիստին։ Սրանից բնականորեն հետևում է, վոր չորսուի մեջ պետք է լինեն թելիկներ, վորոնց չեն յենթարկվում վաշ մեկ և վճռ մյուս ձևափոխության։ Այդ թելիկները կոչվում են չեղոք թելիկներ։ Վորովհեան բոլոր այն թելիկները, վորոնց գանգում են նույն հեռավորություն վրա վերոհիշյալ յերկու նիստերից, բոլորովին նույն պայմաններում են գանգում, ապա պետք ե գոլ այն յեղբացացության, վոր բոլորը չեղոք մի հարթություն են կազմում, վորը զուգահեռ և այդ նիստերին, այսինքն ուղղահայաց և սիմմետրիայի ZZ առանցքին։ Այդ հարթությունը կոչվում է չեղոք շերտ։ Այս հարթության հատումն ամեն սի լայնակի հատանքի հետ (չեղոք շերտի և զծագրի հարթության հատման YY ուղղղը) կոչվում է չեղոք առանցքը։ Այսպիսով չեղոք առանցքը չորսունը բարձրության բաժանում է յերկու մասի—մի մասը, վոր ընկած և այդ շերտի և չորսուի ուսուցիկ նիստի միջն, յենթարկվում և ձգման ձևափոխության, իսկ մյուս մասը, չեղոք շերտի և



Ֆ. 121

չորսուի զուգազոր նիստի միջն, յենթարկվում և սեղմումի ձևափոխության։

Չեղոք շերտը, ինչպես ապացուցվում է նյութերի գիմազրության ընդարձակ գառացացների մեջ, անցնում է չորսուի լայնակի հատանքի ծանրության կենտրոնով։

Իրար շատ մոտ յերկու լայնակի հատանքներով (տո և 15—գծ. 121) անջատենք ձևափոխված չորսուի մի մասը՝ Δx յերկարությամբ, վոր գանգում և պատի հետ ամրացման հարթությունից չ հեռավորության վրա։ Դիցուք 00₁ զիծը ներկայացնում է չեղոք շերտի հատումը զծագրի հարթության հետ։ Խնչպես հետեւում ե վերևու ասածից, 00₁ տղեղի յերկարությունը, վոր հավասար է Δx -ին, չի փոխվել Մնացած բոլոր այն թելիկները, վորոնց չեն պատկանում չեղոք շերտին, փոխել են իրենց յերկարությունը։ Վերցնենք զծագրի հարթության վրա գանգող ՁԵ₁ թելիկը։ Այս թելիկը, վոր մինչ ձևափոխությունը զուգահեռ եր 00₁ թելիկին, ձևափոխությունից հետո վերածվել է 00₁-ին համակենարոն աղեղի։ Վորովհեան չորսուի լայնակի հատանքները ձևափոխությունից հետո պաշտ-

թության վրա գանգող ՁԵ₁ թելիկը։ Այս թելիկը, վոր մինչ ձևափոխությունը զուգահեռ եր 00₁ թելիկին, ձևափոխությունից հետո վերածվել է 00₁-ին համակենարոն աղեղի։ Վորովհեան չորսուի լայնակի հատանքները ձևափոխությունից հետո պաշտ-

վել են. վորոշ անկյունով (այս անկյունը գտնվում է զծագրի հարթության վրա), ապա զծագրի հարթության վրա գտնվող թելիկների բոլոր հատվածները վերածվել են աղեղների, վորոնց Օ կենտրոնը գտնվում է ուղիղ և 15 ուղղությունների հատման կետում: Յեղներով դրանից, առանց դժվարությունների մենք կարող ենք գտնել ամեն մի կամավոր թելիկի յերկարացումը կամ կարճացումը:

Մինչ ձևափոխությունը $a_1 b_1$ թելիկի յերկարությունը կազմում է $\rho \cdot \Delta x = 00_1$, նշանակելով այդ թելիկի հեռավորությունը չեղոք շերտից և, մենք ստանում ենք $a_1 b_1$ աղեղի յերկարությունը ձևափոխությունից հետո՝

$$\overline{a_1 b_1} = (\rho_1 + z) \Delta x.$$

Հետևաբար հարաբերական յերկարացումը կազմում է՝

$$j_z = \frac{\overline{a_1 b_1} - \Delta x}{\Delta x} = \frac{(\rho_1 + z) \Delta x - \Delta x}{\Delta x}$$

բայց $\Delta x = 00_1 = \rho_1 \cdot \Delta \alpha$, ուրեմն

$$j_z = \frac{(\rho_1 + z) \Delta \alpha - \rho_1 \cdot \Delta \alpha}{\rho_1 \cdot \Delta \alpha}, \text{ կամ, պարզութերից հետո,}$$

$$j_z = \frac{z}{\rho_1} \quad (96)$$

Ամեն մի այլ կամայական $c_1 d_1$ թելիկի համար, վոր զըստնը կամայական մեջում կամայական կողմում, նույն յեղանակով մենք կստանանք հարաբերական կարճացումը՝

$$j_{z'} = \frac{z'}{\rho_1} \quad (97)$$

Վորտեղ շեղ սեղմված թելիկի հեռավորությունն և նույն չեղոք շերտից:

Այս վերջին յերկու բանաձևերի մեջ $\rho_1 = 00$ ներկայացնում են չորսութի քննարկված յերկարության ելեկենատի չեղոք թելիկի աղեղի 00_1 հատվածի կորության շառավիղը:

Խնչպես տեսնում ենք, թելիկների յերկարացումը (կամ կարճացումը) համեմատական և նրանց հեռավորությանը չեղոք շերտից, այսինքն փոխվում են ուղիղ գծի որենքով:

Մաքսիմալ յերկարացում կամ կարճացում ստանում են այն թելիկները, վորոնք դանցում են չեղոք շերտից ամենամեծ հեռավորության վրա. մինիմալ արժեքը, վոր հավասար և զերոյի, ստացվում է, յերբ $Z=0$, այսինքն այն թելիկների համար, վորոնք դանցում են չեղոք շերտի մեջ:

Պարզեցուց հետո, թե ինչ որենքով են պոխվում չորսուի առանձին թելիկների ձգման և սեղմումի ձևափոխությունները, մենք այժմ կարող ենք անցնել թելիկների մեջ առաջացող լարումներին: Սահմանափակվելով միայն առաձիգ ձևափոխություններով, մենք կկիրառենք Հուկի որենքը և կստանանք ձգվող կների ձգման լարումն արտահայտող հավասարումը՝

$$\frac{t_z = E \cdot \frac{z}{\rho_x}}{\underline{\hspace{10em}}}$$
 (98)

և սեղմվաղ թելիկների սեղմումի լարումն արտահայտող հավասարումը՝

$$\frac{t_{z'} = E \cdot \frac{z'}{\rho_x}}{\underline{\hspace{10em}}}$$
 (99)

Վորտեղ Ե-ն առանձություն առաջին կարգի մոդուլն է:

Այդ լարումը, հետևաբար, փոփոխական մեծությունն է. Նու փոխվում է զերոյից մինչև մի վորեն մաքսիմալ դրական արժեք ձգվող թելիկների համար, և մինչև մի վորեն բացասական արժեք՝ սեղմվաղ թելիկների համար: Նա կոչվում է նորմալ լարում, վորովհետեւ ուղղված և ուղղահայց չորսուի լայնակի հատանքին:

Զեղոք շերտից Z_1 հեռավորության վրա գտնվող մի վորեն թելիկի լարումը՝

$$\frac{t_{z_1} = E \cdot \frac{z_1}{\rho_x}}{\underline{\hspace{10em}}},$$

Բաժնելով այս հավասարումը (98) հավասարման վրա, ստանում ենք՝

$$\frac{t_{z_1}}{t_z} = \frac{z_1}{z}$$
 (100)

Նույն տեսակ արտահայտություն մենք կստանայինք և սեղմվող թելիկների համար: Միևնույն հատանքի նորմալ լարումները համեմատական են թելիկների հեռավորությանը լիզոք շերտից:

Զետքության չորսությ դեն զցենք մի մասը, վոր ընկած և
մի գործե տո հատանքից դեպի աջ⁹⁾ (դժ. 122). Զեղոք շերտից



Դժ. 122

զերից գտնված թելիկները
ձղված են, իսկ ներքեւը դուն-
վածները՝ սեղմված են, Յեթև
չեղոք շերտի հեռավորություն-
ները վերնի և ներքնի նիստե-
րից նշանակենք Ա և Յ, տպա-
նակման ամենամեծ լարումը
կլինի.

$$t_0 = E \cdot \frac{u}{\varphi_s},$$

իսկ սեղմումի ամենամեծ լարումը՝

$$t_v = E \cdot \frac{v}{\varphi_x},$$

Ներշնելով ո կետից դեպի աջ ձղման լարումն արտահայ-
տող մի մեկտոր, իսկ Ո կետից դեպի ձտի՝ սեղմումի լարումն ար-
տահայտող վեկտորը, միացնենք այդ վեկտորների ծայրերն ու-
ղիղ դժուկ. Այս ուղիղ գիծը կարտահայտե նորմալ լա-
րումների փոխվելու որենքը և կհատե տո հարթությունը յ կե-
տում, վոր նամակատականում և չեղոք առանցքին:

Հարցեր.

1. Ի՞նչ բան և չեղոք շերտը և չեղոք առանցքը.
2. Մաման ժամանակ վմբ թելիկներումն և առաջանում ձըդ-
ման ամենամեծ լարումը և վմբ թելիկներում սեղմումի ամենա-
մեծ լարումը.
3. Ի՞նչ բան և ծաման ժամանակ նորմալ լարումը և լինչպես
և փոփոխվում սրա արժեքը.

Տ 54. ԾԲՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԸ. Պարզելուց
հետո, թե ինչ բնույթ ունեն ծավող չորսությ թելիկների կրուծ
լարումները, այժմ անցնենք պարզելու, թե ինչ կախում կա այդ
լարումների և ձեւափոխություն առաջացնող արտաքին ույժերի
միջև. Այդ նպատակով կիրառենք մեզ արդեն հայտնի հատանք-

⁹⁾ Նետքի առնելով ձեւափոխություն փոքրաթյունը, կարելի յէ, պարզու-
թյան համար, շարսուն զեեւ ուղղողին առանցքով. Հետազոտում մենք արդյուն
ել կանենք:

Ների մեթոդը չորսուի քննարկվող մասի վերաբերմամբ և դրենք այդ մասի (վոր գանգում ե, մի կողմէց արտաքին, իսկ մյուս կողմէց՝ առաջարկության ներքին ույժերի ազդեցության առկա հավասարակշռության պայմանները:

Դիցուք ունենք մի չորսու, վոր գանգում ե ծովում առաջացնող P_1 , P_2 , P_3 , և այլն ույժերի ազդեցության տակ: Ասածանափակվենք իրականում ամենահաճախ պատահող այն դեղերով, յերբ չորսուի լոյնուկի հատանքն ունի սիմմետրիայի առանցք, իսկ ամբողջ չորսուն՝ սիմմետրիայի հարթություն: բոլոր արտաքին ույժերն ուղղահայաց են չորսուի առանցքին, վոր իրենից ներկայացնում ե ուղիղ զիծ, և գանգում են չորսուի սիմմետրիայի հարթության վրա: Բացի այդ՝ կզրադվենք միայն աննշան առաձիգ ձեռփոխությունով: սա բնորոշվում ե նրանով, վոր չորսուի կորացումը, համեմատած նրա յերկարության: Հետ, աննշան ե, և այդ պատճենով մենք կարող ենք ընդունել վոր ինչպես չորսուի գծային չափերը, այնպես ել ույժերի ազդման իետերի հեռավորությունները մեռմ են անփոփոխ:


Հատենք այդ չորսուն DEF հարթությամբ (գծ. 123), դեն դժենք նրա $ABCDEF$ ձախ մասը և դրենք աջ մասի հավասարակշռության պայմանները: Այս մասի վրա ազդում են արտաքին, ներկա դեղերում $P_1—P_2$ ույժերը և ներքին ույժերը, վոր դործում են DEF հատանքի մեջ, Վերցնենք կոորդինատների ուղղանկյուն սիստեմ այնպես, վոր կոորդինատների: Օ սկզբնակետը գտնվի սիմմետրիայի տղ առանցքի և չեղոք առանցքի հատման կետում: ՕX առանցքն ուղղենք ձախից աջ և ուղղահայաց հատանքի հարթությանը, ՕY առանցքը՝ չեղոք առանցքի ուղղությամբ, իսկ OZ առանցքը՝ սիմմետրիայի առանցքի ուղղությամբ դեպի ներքեւ:

Կիրառենք չորսուի աջ մասի վերաբերմամբ ստատիկայի տվյալ՝ հավասարակշռության պայմանները:

Պրոյեկտելով բոլոր ույժերը ՕX ուղղության վրա, տեսնում ենք, վոր արտաքին $P_1—P_2$ ույժերի պրոյեկցիաները զեզո յեն դառնում, Այսպիսով, այդ ուղղության վրա իրենց իսկական մեծությամբ պրոյեկտվում են միայն ներքին նորմալ ույժերը՝ չեղոք առանցքից մի կողմը՝ ձգող ույժերը, իսկ մյուս կողմը՝ սեղմող ույժերը: Հետևապես հավասարակշռության այս պայմանն այն հետեւթյան ե բերում, վոր ձգող ներքին բոլոր ույժերի համագորը հավասար և սեղմող ներքին բոլոր ույժերի համագորին:

Վերցնենք պրոյեկցիաների գումարը ՕZ առանցքի վրա: Արտաքին $P_1—P_2$ ույժերն այս առանցքի վրա պրոյեկտվում են

իրենց իսկական մեծությամբ։ Նրանց հանդահաշվական գումարը
պետք է հավասարակշռվի ներքին ույժերով, վոր զանվում են
DEF հատանքի հարթության վրա և ուղղված են հակառակ կող-



Գ. 123

մը։ Այդ ույժերի հետ մենք արդեն ծանոթացել ենք վերելում—
զբանք ծավող չորսութիւնակի հատանքում զանվող կարող ույժերն
են։ Այսպես, վերցնելով շ կետի շուրջը մի շատ փոքր մակերես,
մենք կստանանք ելեմենտար ույժ՝ $\overline{C\cdot S_1 \cdot F}$, վորանդ $S_2 - S$ տահ-
քի լարումն և այն բոլոր կետերում, վորոնք զանվում են չեղոք
տանցքից և հեռավորության վրա։

Իրրե հավասարակշռության յերրորդ պայման, վերցնենք
բոլոր ույժերի մոմենտների գումարը չեղոք OY տահնցքի վերա-
բերմամբ և այդ դումարը հավասարեցնենք զերոյի։ Արտաքին
ույժերն այդ տահնցքի վերաբերմամբ տալիս են M_3 մոմենտ, վոր
կոչվում և ծռող մոմենտ։ Ներկա դեպքում այդ մոմենտը կազ-
մում է՝

$$M_3 = P \cdot (l-x) - P_1 \cdot (a-x) + P_2 \cdot (b-x),$$

Այժմ կազմենք ներքին ույժերի մոմենտների գումարի ար-
տահայտությունը։ Նշանակենք չեղոք տահնցքից և հեռավորու-
թյան վրա զանվող մի վորնե շ կետի նորմալ լարումը t_1 և վեր-
ցնելով կետի շուրջը շատ փոքր է մակերես, կստանանք այդ մա-
կերեսի նորմալ ույժը՝ $\overline{CD} = t_1 f_1$, իսկ այս ույժի մոմենտը OY տ-
ահնցքի վերաբերմամբ՝ $t_1 z_1$, նույն կերպով կստանանք ելեմեն-
տար մոմենտը մի այլ՝ f_2 մակերեսի համար, վոր զանվում և չե-
ղոք տահնցքից z_2 հեռավորության վրա՝ $t_2 f_2 z_2$ և այլն։ Հավա-

սարեցնելով արտաքին ուժերի մոմենտը ներքին ուժերի մոմենտին, կստանանք՝

$$M_d = t_1 \cdot f_1 \cdot z_1 + t_2 \cdot f_2 \cdot z_2 + t_3 \cdot f_3 \cdot z_3 + \dots$$

Փոխարինենք t_1, t_2, t_3 և այլն լարումների արժեքները (98) բանաձեռի տված արտահայտություններով՝

$$t_1 = E \cdot \frac{z_1}{\rho_s}, \quad t_2 = E \cdot \frac{z_2}{\rho_s}, \quad t_3 = E \cdot \frac{z_3}{\rho_s} \dots$$

կստանանք՝

$$M_d = E \cdot \frac{z_1}{\rho_s} \cdot f_1 \cdot z_1 + E \cdot \frac{z_2}{\rho_s} \cdot f_2 \cdot z_2 + E \cdot \frac{z_3}{\rho_s} \cdot f_3 \cdot z_3 + \dots,$$

կ առ մ

$$M_d = \frac{E}{\rho_s} (f_1 \cdot z_1^2 + f_2 \cdot z_2^2 + f_3 \cdot z_3^2 + \dots),$$

Փակագծերի մեջ, ինչպես տեսնում ենք, ստացանք մի գումար, զորի գումարելիները ներկայացնում են բոլոր ելեմենտար մակերեսների և նրանցից յուրաքանչյուրի՝ հատանքի հարթության վրա գտնվող ՕՅ առանցքից հեռավորության քառակուսու արտադրյալը՝ Այդ գումարը, ինչպես զիսենները*, ներկայացնում է հատանքի իներցիայի երվատորիալ մոմենտը առանցքի վերաբերմամբ, նշանակելով այդ մոմենտը I, կստանանք ծռումի հետեւյալ հիմնական հավասարումը՝

$$\underline{M_d = \frac{EI}{\rho_s}} \quad (101)$$

Այս հավասարուման աջ մասն արտահայտվում է կզմով-ներով, իսկ աջ մասը՝ $\frac{Iq}{\pi d^3} \cdot \pi d^4 : \pi d = \text{կզմմ}-ներով:$

(101) հավասարությունը ավելի հեշտ ստացվում է ինտեղբալ հաշվի միջոցով: Վերցնելով չեղոք առանցքից և հետավորության վրա գտնվող Ը կետի շուրջը մի անսահման-փոքր մակերես dF և նշանակելով այդ կետի լարումը t_z , կպահենք, վոր

*). II մաս, §§ 47 և 48.

մակերեսի նկամենաւը ույժը կկազմի $t_z \cdot dF$, իսկ մամենաց ՕՅ առանցքի վերաբերմամբ՝ $t_z \cdot z \cdot dF$.

Գումարելով բոլոր նկամենաւը մոմենտները (տարածելով գումարը լայնակի հատանքի ամբողջ մակերեսի վրա), կստանանք համազոր մոմենտը՝ $\int t_z \cdot z \cdot dF$, վորակ էլեմենտ և թե ձգման և թե սեղմումի լարումը: Այս մոմենտը պետք է հավասար լինի արտաքին ույժերի մոմենտին:

$$\int t_z \cdot z \cdot dF = M_z,$$

Պարզ ձևի բերենք այս հավասարման ձախ մասը, փոխարինելով $t_z \cdot z$ նրա արտահայտությամբ (98) հավասարումից, կը ստանանք՝

$$\int E \cdot \frac{z}{\rho_x} \cdot z \cdot dF = M_z,$$

Խնամքը նշանից դուրս հանելով E և ρ_x հաստատուն մեծությունները, կստանանք՝

$$\frac{E}{\rho_x} \int z^2 \cdot dF = M_z,$$

Զախ մասի ինտեգրալն իրենից ներկայացնում և լայնակի հատանքի իներցիայի եքվատորիալ մոմենտը, վորը մենք նշանակել ենք I_z , հետեւազն ստանում ենք ծովումի նույն հիմնական հավասարումը՝

$$\frac{EI}{\rho_x} = M_z,$$

Դասընթացի նախորդ մասից մեզ հայանի jb^4), վոր ABCD ուղղանկյան մակերեսի իներցիայի եքվատորիալ մոմենտը XX առանցքի վերաբերմամբ, վոր դուզանեռ և ուղղանկյան հիմքին և անցնում և ուղղանկյան ծանրության կենարոնավ (գծ. 124), կազմում են՝

$$I_z = \frac{bh^3}{12}, \quad (102),$$


^{a)} Ուսում, 5 մՏ, Պոլամ (91):

վարտեղ Ե-ի ուղղանկյան հիմքն է, իսկ հ-ը՝ նրա բաձրությանը:


Յեթև չորսուի հատանքը միապաղադ չե, այլ անցք ունի (գծ. 125), առա նրա իներցիայի մոմենտ հավասար է միապաղադ ուղղանկյան և անցքի ամերկերեսի իներցիայի մոմենտների առարկերությանը, այսինքն՝

$$I_x = \frac{bH^3}{12} - \frac{bh^3}{12} = \frac{b}{12} (H^3 - h^3),$$

$$I_x = \frac{bH^3}{12} \left[1 - \left(\frac{h}{H} \right)^2 \right] \quad (103)$$




ԳՃ. 124



ԳՃ. 125

Յեթև ծովող չորսուի հատանքը կլոր է, այսինքն շրջանագիծ է և պատճենվում, առա $I_x = \frac{\pi}{4} b^2 H^2$ է հատանքը իներցիայի երվանդությամբ մոմենտը շրջագիծի կենտրոնով անցնող և հատանքի հարթության վրա գտնվող առանցքի վերաբերմանը (գծ. 126). Դասընթացի նախորդ մասում ²²⁾ առացուցել ենք, զոր շրջանի ամերկերեսի այդ մոմենտը հավասար է իներցիայի բևեռային մոմենտի կերպով այսինքն՝



ԳՃ. 126

$$I_x = \frac{l_0}{2} = \frac{\pi d^4}{64} \quad (104)$$

²²⁾ Ուժություն, § 42, Պարզություն (89).

ՑԵՐԵ ՀԱՍՏԱՆՔԸ ԱՆԴԻՆԵՐ Ե, ԱՊՄ ՆՐԱ ԻՆԿՐՍԻՎԻՋԻ ԺՈՒՅԵՆԱԾ
ՀԱՎԱՍԱՐ Ե ՃԵԾ և ԳՈՐԾ ՀԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՆԿՐՍԻՎԻՋԻ ՄՈՋԵՆԱՆԵՐԻ
ՄԱՐՐԵՐՈւԹՅԱՆԸ՝

$$I = \frac{\pi d_1^4}{64} - \frac{\pi d_2^4}{64} = \frac{\pi}{64} (d_1^4 - d_2^4), \text{ կոմ}$$

$$I = \frac{\pi d_1^4}{64} \left[1 - \left(\frac{d_2}{d_1} \right)^4 \right] \quad (105),$$

ՎՈՐՈՒԵՂ ԾԱ-Ը ՀԱՏԱՆՔԻ ԱՐՄԱԳԻՆ, ԻՆԼ ԾԱ-Ը ՆԵՐՔԻՆ ՄՐԱՄԱ-
ԳԻԾՆ Ե,

ՑԵՐԵ զիտենք ծոռղ ՄՃ մոմենտը, առաձգության 1 կարգի
Ե մոդուլը և ինկրսիվի եքվատորիալ 1 մոմենտը, ապա (101)
ՀԱՎԱՍԱՐՈՒՄԸ ոգնությամբ կարող ենք ավյալ հատանքի համար
վորոշել չորսուի առանցքի կորության շառավիղը:

(101) ՀԱՎԱՍԱՐՈՒՄԸ կարելի յե ձեռփոխել այսպես: (98)
ՀԱՎԱՍԱՐՈՒՄԸ ունենք՝

$$\frac{E}{\rho_s} = \frac{t_x}{z},$$

Տեղադրելով այս աքժեքը (101) ՀԱՎԱՍԱՐՄԱՆ մեջ, կսա-
նանք՝

$$M_s = \frac{1}{z} \cdot t_x \quad (106)$$

Այս ՀԱՎԱՍԱՐՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ե առլիս վորոշելու
ժամկող չորսուի զանազան թելիկներում նորմալ լարումը:

Առածներից հետեւան ե, վոր ավյալ հատանքի ծոռղ մոմենտ
ասելով, պետք ե հասկանալ այդ հատանքից մի կողմէ ընկած
(աջ կամ ձախ) արտաքին ույժերի մոմենտների հանրահաշվա-
կան գումարն այն առանցքի վերաբերմամբ, վոր անցնում ե հա-
տանքի ծանրության կենտրոնով և ուղղահայց ույժերի աղդ-
ման հարթությանը:

Հարցեր:

1. Խ՞նչ է հետեւամ նրանից, յերբ ույժերի պրոյեկցիաների
զումարն ուղղաձիգ OZ առանցքի վերաբերմամբ հավասար ե
պերոյի (գծ. 123):


2. Խ՞նչ և հետևում նրանից, յերբ զերոյի յէ հավասար ույ-
ժերի մոմենտների գումարը OY առանցքի վերաբերմամբ:

3. Խ՞նչպես և փոխվում նորմալ է լարումը (բանաձև 106),
յերբ մեծանում և իներցիայի և մոմենտը:

4. Մավոզ չորսուն ունի ուղղանկյուն հատանք: Խ՞նչպես և
փոխվում մաքսիմալ լարումը, յեթե հատանքի բարձրությունը
մեծանում և ո անգամ: Իսկ յեթե լայնությունը մեծանում և ո
անգամ:

5. Ունենք կլոր հատանքով և մ արամագեռվ չորսու Խ՞նչ-
պես կփոխվի լարումը, յեթե արամագինը մեծանա ո անգամ:

ՈՐԻՆԱԿ 61. № 26 պրոֆիլի տաշտոյին հեծանը (գծ. 127)-
ծավում և ZZ հարթության մեջ: Խնչը յէ հավասար ամենամեծ
ձգող և ամենամեծ սեղ-
մող լարումների Ո հարտ-
րերությունը:



Համամիութե-
նական ստանդարտի
(ՕԾ 17, թերթ առա-
ջին) ավյալ պրոֆիլի հա-
մար՝ $b=90$ մմ, իսկ ծան-
րեթյան կենտրոնի հե-
տավորությունն աB-ից՝ $x_0=2,45$ մմ, Զեզոք առանցքն անցնում
և ծանրության կենտրոնով, հետեւապես ամենահեռու թելիկների
լարումները համեմտական են ($b-x_0$) և x_0 հեռավորություն-
ներին, այսինքն՝

$$\Omega = \frac{90 - 24,5}{24,5} = 2,67,$$

ՈՐԻՆԱԿ 62. Վորոշել 18-րդ որինուկում (գծ. 27) քննար-
կած հեծանի կրած ամենամեծ նորմալ լարումը, յեթե հեծանի
լայնակի հատանքի էիմքը՝ $b=15$ մմ, իսկ բարձրությունը՝ $h=21$
մմ: Վորոշել նաև 1, համապատասխան հատանքի ծոված առանց-
քի կորության շառավիղը և 2, նույն հատանքում առանցքից 5
մմ հեռավորության վրա գտնվող թելիկի լարումը:

Վերոհիշյալ որինուկում մննք արդեն գտել ենք, վոր ձոռոց
մաքսիմալ մոմենտը համապատասխանում է հեծանի մեջտեղին և
կազմում և 30 000 կգսմ: Ուղղանկյունի հատանքի իներցիայի-

մամնելու ծանրության կենտրոնով անցնող և հիմքին դուզանես առանցքի վերաբերմամբ։

$$= \frac{bh^3}{12},$$

Ամենամեծ լարումն ռանեն չեղոք առանցքից ամենահեռու բելիկները, ուրիմ։

$$z = \frac{h}{2},$$

Կիրառելով (105) հավասարումը, կստանաք՝

$$t_z = M_s: \frac{1}{z} = \frac{M_s \cdot z}{1} = \frac{M_s \cdot \frac{h}{2}}{\frac{bh^3}{12}} = \frac{6 M_s}{bh^3},$$

Տեղադրելով տառերի արժեքները, կստանանք ձգման և սեղմանի (վորովհետև հատանքը սիմմետրիկ և չեղոք առանցքի վերաբերմամբ) ամենամեծ լարումները՝

$$t_{\max} = \frac{6 \cdot 30000}{15 \cdot 21^2} = 27,2 \text{ kq/mm}^2,$$

Վորապեսի վորոշենք չեղոք շերտից $z = մմ$ հեռավորության վրա դանվող թելիկների լարումը, կիրառենք (100) հավասարումը՝

$$\frac{t_{z_1}}{t_z} = \frac{z_1}{z}, \text{ վորապեսից}$$

$$t_{z_1} = t_z \cdot \frac{z_1}{z} = 27,2 \cdot \frac{6}{10,5} = 12,95 \text{ kq/mm}^2,$$

Հեծանի մեջտեղի հատանքի կորության շառավիղը վորոշում և (98) հավասարումից՝


$$\rho_s = \frac{E \cdot z}{t_z},$$

Հնդունելով, վոր փայտի (սոնու) առաձգության մոդուլը $E = 9,2 \cdot 10^4$, կստանանք՝

$$\rho_s = \frac{92\,000 \cdot 10,5}{27,2} = 35511 \text{ mm} \underline{355} \text{ մ.}$$

Խաչվես տեսնում ենք, կորուբյունը չնշին եւ Շառապիդն ուղղված է զեպի վերի *):

Տ 55. ԿԵՐՈՂ ՈՒՅԺԻ ՅԵՎ ՄԹՈՂ ՄՈՄԵՆՏԻ ԿԱԽՈՒՄԸ
ՄԻՄՅԱՆՑԻՑ. Վերցնենք մի հեծան, զոր ընկած և A և B հետա-
քանների վրա և գտնվում եի
 $P_1 - P_2$ ուղղաձիգ ուժը,
աղղեցության աակ (զծ.
128) Վերցնելով մի վորեն
տո հատանք, դրենք այդ
հատանքից դեպի աջ դասա-
վորված բոլոր ուժերի մո-
մենների գումարը հա-
տանքի չեղաք առանցքի վե-
ցաբեմամբ՝



Զ. 128

$$M_s = -Q_2(l-x) + P_1(e-x) - P_2(d-x) + P_3(c-x),$$

Այդ հատանքից դեպի աջ զորենդ կտրող ուժը՝

$$S_s = -Q_2 + P_1 - P_2 + P_3,$$

յեթե պայմանավորվենք դրական համարել այն ուժերը, վորոնք
ուղղված են դեպի ներքև:

Վերցնելով ծոսդ մոմենտի առաջին ածանցյալն ըստ X արև-
ցիսսի, կսանանք՝

$$\frac{dM_s}{dx} = Q_2 - P_1 + P_2 - P_3,$$

Համեմատելով այս աբտահայտությունը նախընթացի հետ,
տեսնում ենք, զոր

$$\frac{dM_s}{dx} = -S_s \quad (107)$$

Նույն տեսակ կախում կարելի յե ստանալ և բեռնվածքների
այլ տեսակների համար: Ուրեմն՝ հեծանի մի վորեվե մասի կըտ-
րող ուժը հավասար է նույն մասի ծոսդ մոմենտի առաջին

*) Հեծանն ընկած է յերկու հետաքանների վրա, ուսուցիչ կողմ ուղղ-
ված է զեպի ներքեւ:

ածանցյալին ըստ չ արացիսսի, վերցրած հակառակ նշանով
(Շվեդիերի թեորեմը).


Այս թեորեմից հետևում է, վոր ծոված հեծանի համար ծը-
ռող մոմենտը և կարող ույժերը կապված են իրար հետ նույն
առնչություններով, ինչ վոր տալիս և ամենատարիկան փունկ-
ցիայի և սրա առաջին ածանցյալի վերաբերմամբ—ծռող մոմենտի
մաքսիմումը համապատասխանում է հեծանի այն հատանքին,
վորի համար կարող ույժը դառնում և զերո. հեծանի այն մասե-
րի համար, վորտեղ ծռող մոմենտը փոխվում և ուղիղ գծի որևէ
քով, կարող ույժն անփոփոխ է, և այլն:

§ 56. ՇՈՇԱՓՈՂ ԼԱՐՈՒՄՆԵՐ ՄԹՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ. Այս-
պես ուրինանական ժամանակի չորսուի ամեն մի կամայական
հատանքում գոյություն ունի կարող ույժ, վոր առաջ և ընդում
սահքի վորոշ լարում այդ հատանքում: Իր ժամանակին, սահքի
ձևափոխությունը ուսումնասիրելին, մենք պարզեցինք (§ 35).
վոր սահքի լարմանը մի հատանքում միշտ ուղղեցում և սահքի
լարում մի ուրիշ՝ առաջինին ուղղահայաց հատանքում: Սրանից
հետևում է, վոր ծոված չըրառի մեջ պետք և լինեն լարումներ
առանցքի ուղղությամբ, վորոնք ձգտում են ճղուտել չորսուն և
բաժանել առանձին շերտելիների: Փորձը լիովին հատառում և
այս յեզրակացությունը:

Վերցնենք նույն յերկարությունն ունեցող մի քանի տախո-
տակներ, վորոնք տափակ կողմերով գարսած են իրար վըս (գծ.
129), Բեռնվածքի աղեցության տակ տախոտակները կկորանան
(գծ. 129, b), ընդ վորում տախոտակների ծայրերը կդասավորվեն
տախոտանակներուն: Դա ցույց է տալիս, վոր տախոտակները յերկայն-
քի ուղղությամբ մեկը մյուսի վերաբերմամբ շարժ են ունեցել
Յեթե մենք ծունք նույն ի բարձրությունն ունեցող ամբողջա-
կան չորսու, նրա նակատի մակենանույթի վըս այդպիսի աստի-
ճաններ չենք նկատի, վորովհետև թելիկների: իրար վերաբեր-
մամբ յերկայնքի ուղղությամբ շարժելուն կզիմազրեն թելիկների
միջն գոյություն ունեցող հարակցական ույժերը: Այսպես ուրինա-
ըստ յերկայնքի գոյություն ունեն սահքի լարումներ, այսպես
կոչված՝ յերկայնակի տանգենցիալ կամ շոշափող լարումներ:
Տախոտակներն իրար ամրացնենք յերիթներով (ինչպես ցույց է
տված 129, բ դժագրի ձախ մասում) կամ բոլտերով (գծ. 129, աջ
մասում): այս դեպաները, յենթարկվելով կարումի ձևափոխու-
թյուն AB և CD հարթություններում, իրենց դիմադրությամբ
կհավասարակռնեն առնգենցիալ ույժերին: Այդ միջոցով մենք

բարձրացրած կլինենք յերեք՝ իրար վրա դրած սախակների ամբողջունը:

Դիցուք չորսուն յերկայնակի հարթություններով բաժանած և ո շերտերի, վորոնցից յուրաքանչյուրի բարձրությունն և իսկ իսկ լայնությունը հավասար ե չորսուի և լայնությանը: Յուրա-



Ֆ. 129

քանչյուր շերտը կաշխատի ինքնուրույն կերպով և կդիմագրի ծավանը՝ համապատասխան իր իներցիայի I_0 մասնակին ($Y_0 Y_0$ շեղաց առանցքի զերարերմամբ): Կիրառելով (105) հավասարումը, մենք բար ո շերտերի համար կստանանք հետեւյալ կախումը՝

$$M_s = \frac{I_0}{\frac{h_0}{2}} \cdot t_{h_0} \cdot n = \frac{bh_0^3 \cdot 2}{12 \cdot h_0} \cdot t_{h_0} \cdot n = \frac{bh_0^3 \cdot n}{6} \cdot t_{h_0},$$

վորտեղից՝

$$t_{h_0} = \frac{\sigma}{bh_0^3 n} M_s \quad (a)$$

Դիցուք այժմ առանձին շերտերն իրար հետ միացրած են այնպես, վոր կազմում են մի ամբողջակի չորսու: Նշանակելով չորսուի բարձրությունը h , մենք ստանում ենք՝

$$t M_s = \frac{1}{\frac{h}{2}} \cdot t_h = \frac{bh^3 \cdot 2}{12 \cdot h} t_h = \frac{bh^3}{6} \cdot t_h,$$

վորտեղից նորմալ լարումը՝

$$t_h = \frac{\sigma M_s}{bh^3},$$

Տեղադրելով $h = nh_0$, ստանում ենք՝

$$t_h = \frac{\sigma M_s}{bh_0^3 \cdot n^3} \quad (b)$$

Բաժանելով (a) հավասարումը (b)-ի վրա, կստանանք՝

$$\frac{t_{h_0}}{t_h} = n.$$

Մաքսիմալ լարումն առաջին դեպքում ու անգամ մեծ է, քան ամբողջակի չորսուի դեպքում—քանի շերտի վոր բաժանված և չորսուն ըստ բարձրության, այնքան անգամ փոքրացել և նրա ամբողջունը։

Ծովող չորսուի մեջ սահմանագծի լարումների դասավորման որենքը բավական բարդ է։ Հարցի ճիշտ հետազոտությունը ցույց է տալիս, վոր հատանքի առանցքից տարրեր հետավորության կետերի համար լարումը նույնը չի մնում, այլ փոփոխվում և վորոշ որենքով, վոր կախված և լայնակի հատանքի ձևից։ Այսպես, ուղղանկյուն հատանքի դեպքում սահմանագծի լարումը չորսուի ուռուց ցիկ և գրգռվոր նիստերում հավասար և զերոյի (այսինքն այն նիստերում, վորտեղ նորմալ լարումներն ունեն մաքսիմալ արժեք) և հասնում և մաքսիմումի չեղոք շերտում։ այդ մաքսիմալ արժեքը վորոշվում և հետեւյալ բանաձևով՝

$$\underline{s_{\max} = \frac{3}{2} \cdot \frac{S_x}{F}} \quad (108)_r$$

իսկ կլոր հատանքի համար՝


$$\underline{s_{\max} = \frac{4}{3} \cdot \frac{S_x}{F}} \quad (109)$$

Այս հավասարումների մեջ S_x -ը տվյալ հատանքի կարող աւլուն է, իսկ F -ը՝ հատանքի մակերեսը։

Յեթև սահմանագծի լարումները հավասարապես դասավորվելին չորսուի լայնակի ամբողջ հատանքի վրա, ապա այդ լարումը հավասար կլիներ ենք՝ $\frac{S_x}{F}$ ։ հետեւապես սահմանագծի մաքսիմալ լա-

բումը գերազանցում և միջին արժեքին ուղղանկյուն հասանքի գեղցում $\frac{2}{3}$ անգամ, իսկ կլոր հատանքի գեղցում $\frac{4}{3}$ անգամ:

Չորսուի բարձրությունն արտահայտող ուղղաձիք հատվածի մը վերցնելով տանգինցիալ լարումներն արտահայտող ուղղացայցներ (գծ. 130) և միացնելով այս ուղղանայցների ծայրերը, կատանանք մի կոր, վոր պատկերացնում և տվյալ հատանքի



Գծ. 130


տանգինցիալ լարումների փոփոխման որենքը (գծագրի աջ կողմի դիագրամը). Այսպես, չեղոք առանցքից չ հառավորության վրա գտնվող կետամ շոշափող լարումը հավասար կլինի YY առանցքին գուգանեռ տարած որդինատին:

Պետք ե շեշտել վոր այդ լարումները չորսուի յերկարության զանազան ելեմենտներում տարրել են, վերովհետեւ, ինչպես զիտենք, կարող ույժը նույյնը չի մնում չորսուի լայնակի զանազան հատանքների համար:


Այսպես ուրեմն ծռված չորսուի յուրաքանչյուր հատանքում գոյություն ունի սահման լարում և սրան հավասար լարում առանցքի ուղղությամբ: Այդ լարումը փոփոխվում և ըստ մեծության ինչպես ամեն մի հատանքում, նայելով ելեմենտի հեռավորությանը չեղոք առանցքից, այնպես ել նույյնը չի մնում և չորսուի զանազան հատանքներում, վորովհետեւ կախում ունի կարող ույժի մեծությունից:

Հարցեր:

1. Կախումն ունի՞ արդյոք սահման լարումը չորսուի հատանք - եւ դերեւ ըստ յերկայնքի:



Գծ. 131



2. Տվյալ հատանքի վեր կատերում սահման լարումը մաքսիմալ եւ
3. AB հեծանն ազաընկած ե A և B հենարանների վրա (գծ. 131): Հենարանների հավասար հեռավորության վրա գտնվող C և D կետերում ազդում են իրար հավասար P ույժեր: Գծեցնեք կարող ույժերի դիագրամները: C և D հատանքների միջև չորսուն կու-

նարաններից հավասար հեռավորության վրա գտնվող C և D կետերում ազդում են իրար հավասար P ույժեր: Գծեցնեք կարող ույժերի դիագրամները: C և D հատանքների միջև չորսուն կու-

Նենամ արդյոք սահման լարումը, Յեթե դուք յուրացը եւ են 55-ը, գննեցնեք այս դեպքն անալիտիկորեն:

§ 57. ՄՌԱՎԱԾ ԶՈՐՍՈՒԻՆ ԱՌԱՋԻԴ ԿՈՐԸ: Խչափես պարզեցինք վերեռում, ծովող չորսուի յերկրաչափական ուղղագիծ առանցքը ձևափոխություննից հետո վերածվում և կոր գծի, վոր զանվում և չորսուի՝ սիմմետրիայի հարթության վրա, յեթե ուժերը նույնապես զանվում են այդ հարթության վրա:

Արտաքին ուժերի ծովող Մէ մոմենտի, օչ-ի, Ե-ի և Լ-ի կախումն իրարից տալիս և ծովումի հիմնական հավասարումը (101):

$$\frac{EI}{\rho_z} = M_d, \text{ վորտեղից վորոշում ենք կորության շառավիղը:}$$

$$o_z = \frac{EI}{M_d} \quad (110)$$

Յեթե ունենք պրիզմաձև հատանքի չորսու, ապա $I = \text{const}$: Վորովինեան ծովող մոմենտը զանազան հատանքներում ունի տարրեր արժեքներ, ուրեմն և կորության շառավիղն ել չորսուի յերկայնքի զանազան մասերում զանազան կլինի:

Դիցուք ունենք մի հեծան, վորը մի ծայրով թաղված և պատի մեջ (գծ. 132) և զանվում և $P_1 - P_4$ ուժերի սիմմետրի աղղեցության տակու թաղվածքի հարթության հատանքում ծովող մոմենտը:

$$M_d = P_1 a_1 + P_2 a_2 + P_3 l,$$


Մի այլ հատանքում, նախորդից x_1 հեռավորության վրա, ծովող մոմենտը կլինի:

$$M''_d = P_1 (a_1 - x_1) + P_2 (a_2 - x_1) + P_3 (l - x_1)$$

գծ. 132

Յեթե վերցնենք $m_1 n_1$ հատանքը P_1 և P_3 ուժերի մեջ, ապա ծովող մոմենտը:

$$M'''_d = P_1 (a_1 - x_1) + P_2 (l - x_1) + m_1 n_1:$$



Խաչպես տեսնում ենք, ծռող մոտենալը փոքրանում և ձախից դեպի աջ շարժվելիս և զրա համապատասխան մեծանում և կորության շառավիղը:

Մաման առաձիգ ձեւափոխությունները գտնելու հետ կապված դորձնական հարցերում կարեւը և վճռ թե ծռված առանցքի կորության շառավիղը, այլ կորվածքը (պրօցից), վոր ստացել և չորսուն յերկայնքի զանազան կետերում, վորովնեան շատ դեպքերում ամենամեծ կորվածքը սահմանափակված և վորոշ մաքսիմալ արժեքով. այսպես, որինակ, տրանսմիսիոն սռնիների համար կորվածքը չպետք է լինի ավելի քան $\frac{1}{3}$ մմ յերկարության ամեն 1 մ-ի համար, հատուկի կամ առաստաղի յերկաթյան հեծանների համար՝ վոչ ավելի, քան յերկարության $\frac{1}{600}$ - մասը, փայտյան հեծանների համար՝ $\frac{1}{1000}$ մասը, յերբեմն և ավելի փոքր:

Կորվածքի ամենամեծ արժեքը զանազան տեսակ բեռնվածքների և չորսուի զանազան տեսակ հենումների դեպքերի համար արվում են տեխնիկական տեղեկատու դրվերի մեջ:

Կորվածքի սլաքի մեծության վորոշումը հետևյալ մեթոդի վրա յե հենված:

Կերպուծական յերկրաչափությունը հարթ կորի կորության շառավղի համար տալիս և այս բանաձեռք՝

$$\rho_1 = \frac{\left[1 + \left(\frac{dy}{dx} \right)^2 \right]^{\frac{3}{2}}}{\frac{d^2y}{dx^2}},$$

132-րդ զծագրում պատկերված չորսուի առաձիգ առանցքի վերաբերմամբ այդ բանաձեռք հետևյալ մեկնարանությունը կստանաւ: Կոռորդինատների սկիզբը վերցնենք ծայրագույն ձախ հատանքի ծանրության A կենտրոնում, արսցիսսների AX առանցքն ուղղենք չձևափոխված չորսուի առանցքի ուղղությամբ ձախից աջ, իսկ AY առանցքը՝ AX-ին ուղղահայաց և զեղի ներքեւ: Այդ զնագում կորության քաշառավիղը կորոշվի, յեթե ց-ի փոխարեն տեղադրենք այն հատանքի կորվածքը, վարը գտնվում և Ա-ից չհեռավորության վրա: Ցեզ հակառակը, ծռման հիմնական հավա-

սարումից վորոշելով կորության շառավիղը, մենք կարող ենք գտնել ավյալ և արսցիսսին համապատասխանող կորվածքը:

Կորության շառավիղի բանաձևին կարելի յէ պարզ ձև տալ, նկատի առնելով, վոր այն առածիք ձևափոխությունները, վորոնց հետ մենք զոր ունենք հաշվումների ժամանակ, այն ընույթն ունեն, վոր յ կորվածքը շատ աննշան և չորսուի յերկարության հետ համեմատած, մենք գտիմ ենք այն յեզրակացության, վոր $\frac{dy}{dx}$ առաջին ածանցյալը, վոր ներկայացնում և աված կետում

$$p_x = \frac{1}{\frac{d^3y}{dx^3}}$$

Հավասարեցնելով այս և (110) հավասարման աջ մասերը, կմտանանք՝

$$\frac{EI}{M_x} = \frac{1}{\frac{d^3y}{dx^3}}, \text{ կոմ}$$

$$EI \frac{\frac{d^3y}{dx^3}}{M_x} = M_x \quad (111)$$

Այս հավասարումը, վոր կօշվում և առածիք կորի դիմերենցիալ հավասարում, և կապում և չորսուի ծոված առանցքի կամայական կետի կոորդինատներն այդ կետի համապատասխան հաստանցի ծոռող մամենաւի հետ, միջնորդ և տալիս վորոշներ կորվածքն ամեն մի կետում:

Խնտեղրելով հավասարումը մեկ անգամ, մենք կստանանք մի նոր հավասարում, վորի մեջ մտնում և $\frac{dy}{dx}$ -ը, այսինքն առնգնան այն անկյան, վոր կազմում և աված հաստանցում կորին տարած շոշափողը արսցիսսի առանցքի հետ: Նորից ինտեղը լուրջ մենք կստանանք առաձին կորի հավասարումը, վորը կառ սրգինատի կամ արգինատի կախումն և արսցիսսից, այսինքն կորվածքի կա-

խումը ավյալ հատանքի հեռավորությունից կոորդինատների սկզբից, Այսպես ուրեմն, ինտեգրելով (111) հավասարումը, կըսահանք՝

$$\frac{EI \frac{dy}{dx} = \int M_s \cdot dx + C_1}{}$$
 (112)

Նշանակենք $\int M_s \cdot dx = K$ և նորից ինտեգրենք, կսահանք՝

$$EIy = Kx + C_1x + C_2.$$

Կամայական հաստատուն C_1 և C_2 մեծություններն ամեն առանձին գեղագում կարելի յեւ վորոշել, յեթե տեղադրենք առաձիղ զեր վորոշ կետերի համար չեր, y -ի և $\frac{dy}{dx}$ -ի համապատասխան արժեքները, ինչպես ցույց եւ արված հետեւալ ֆ-ի մի քանի որինակներում։

Ինչպես ահասանք վերևում, հատանքի մի կողմում գտնված ույժերի ծառզ մոմենտը հավասար է հատանքի մյուս կողմում գտնված ույժերի ծառզ մոմենտին հակառակ նշանով։

Վերոշության նպատակով պայմանավորվենք կերցնել հատանքից զեղի աջ գտնված ույժերի մոմենտները և դրական համարել ժամացույցի ուղաքի ուղղությամբ պատող մոմենտները ՕՀ առանցքը միշտ կուղղենք ձախից զեղի աջ, իսկ ՕՅ առանցքը՝ վերևից ներքեն։

§ 58. ՀԵՄԱՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԴԵԳՔԵՐԻ ՀԵՄԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ. Առածներս կիրառենք ուղղաձիգ ույժերով բեռնավորված հեծանների մի քանի զեղքերի վերաբերմամբ։

I. Հեծանը թաղված ե մի ծայրով, իսկ մյուս ծայրում կրում ե կինտրունացած ույժ (գծ. 133). Վերցնելով մոմենտներ Ա հատանքի չեղոք առանցքի վերաբերմամբ, կսահանք՝


$$M + P \cdot l = 0,$$

վերաբերեցից

$$M = -P \cdot l,$$

Մ մոմենտը, վոր կոչվում է թաղվածքի մոմենտ, հավասարակշռում և P ույժի մոմենտին։

Վերցնելով արտաքին ուժերի պայմերի պրոյեկցիաների դումարը
ՕՅ առանցքի վրա, զոր ուղղված և գերեից ներքեւ, մենք



Գ. 133

ահանում ենք, զոր թաղված ծայրի վրա դորժում և Q հակագ-
դումը, զոր վորոշվում և հասելյալ հավասարումից՝

$$\begin{aligned} P+Q &= 0, \text{ զորակղից} \\ Q &= -P, \end{aligned}$$

այսինքն հակադումն ուղղված և ներքեից վերեւ

Մի վորեւ կամայական տո հատանքի համար այ կողմում
դասավորված արտաքին ուժերի մուտքաների դումարը կարտա-
հայտվի հետևյալ հավասարումով՝

$$M_x = P(l-x)$$

113

Դա կլինի տո հատանքի ծռող սոմնակի արտահայտու-
թյունը:

ՑԵՐԵ X=0, աղա՝

$$M_x = 0,$$

այսինքն Յ Հատանքում ծռող մոմենտը հավասար է զերոյի:

ՑԵՐԵ X=0, աղա՝

$$M_0 = P \cdot l$$

(114),

այսինքն մաքսիմալ ծռող մոմենտ ստացվում է թաղվածքի հարթության մեջ ընկած Ա հատանքի համար, վորը կոչվում է վրանգավոր հատանքը. (113) Հավասարումը ցույց է տալիս, վոր մոմենտը փոխվում է ուղիղ գծի որևէ քովազով. Վերցնելով Ա կետի ուղղաձիգի վրա մի վորեն Ա₁ կետից Ա₁C որդինատը, վոր վորոց մաշտարով արտահայտում է $M_0 = P \cdot l$ մոմենտը, միացնենք C կետը Բ₁ կետի ուղիղ գծով (դժ. 113, b) և կստանանք ծռող մոմենտների զերպարում: Մի վորեն առ Հատանքում ծռող մոմենտը կարտահայտվի ուղղաձիգությամբ:

Կորող ուժեղութ զիազրամը կպատկերացնի մի ուղղանկյուն (դժ. 133, c) վորի բարձրությունը $\overline{B_1 E} = P$, այսինքն կտրող ուժին անփոփոխ և հեծանի ամբողջ յերկայնքով:

Դրան կարելի յե համոզվել և անալիտիկորեն. Հիբավի, կիբառելով Շվեդերի թեորեմը [(107) Հավասարում], կստանանք՝

$$S_x = - \frac{dM_x}{dx} = - \frac{d}{dx} P (l-x) = P,$$

այսինքն կարող ույժը միշտ նույյն և հեծանքի ամբողջ յերկայնքով:

Մաքսիմալ կորվածքը (Յ կետում) վորոշվում է հետեւալ բանաձևով

$$\underline{f = \frac{PP}{3EI}}$$
 (115),

վորտեղ P բեռնվածքն արտահայտած է կող-ներով, l յերկարությունը՝ սմ-ներով, առաձգության Ե մոդուլը՝ կգ/սմ²-ներով, իսկ

Հայնակի հաստանցի իներցիայի և մուծենաց՝ սմ⁴.ներով. որու համապատասխան է կորվածքն ստացվում ե

$$\text{b} \frac{\frac{I_q}{I_q} \cdot \sigma d^3}{\frac{I_q}{I_q} \cdot \sigma d^4} = \sigma d \cdot \text{ներով};$$

Կորվածքի է սլաքն ստացվում ե այսպիս: Գրենը առաջիկ գորի հավասարումը՝

$$M_x = EI \frac{d^3 y}{dx^3} = P (l-x) \quad (116)$$

Յերկու անգամ ինտեղրելով այս հավասարումը, կստանանք՝

$$EI \frac{dy}{dx} = -\frac{P(l-x)^2}{2} + C_1 \quad (117)$$

$$\text{և } EIy = \frac{P(l-x)^3}{6} + C_1x + C_2, \quad (118)$$

Մնամ ե զորոշել C_1 և C_2 հաստատումները:

Ա կետում (զ. 133, ձ), վոր համընկնում է հաստանցի ծանրության կենտրոնի հետ, վոչ մի կորվածք չկա, այսինքն՝ յերբ $x=0$, նաև $y=0$:

Բացի այդ, առաջիկ կորի շոշափողը Ա կետում համաեղում և արացիսաների առանցքի հետ, այսինքն՝ յերբ $x=0$, ապա

$$\operatorname{tg} \alpha = -\frac{dy}{dx} = 0,$$

Ողտագործելով այս պայմանները, կարող ենք զորոշել C_1 և C_2 հաստատումները:

Կիրառելով վերջին պայմանը (117) հավասարման վերաբերմանը, ստանում ենք՝

$$EI \cdot o = -\frac{P P}{2} + C_1, \quad \text{վորակղից}$$

$$C_1 = \frac{P P}{2},$$

Առաջին պայմանի կիրառումը (118) հավասարժան պիրա-
բերմանը առլիս է:

$$EI \cdot y = \frac{P \cdot P}{6} + C_1 \cdot o + C_2, \quad \text{վորակղից}$$

$$C_2 = -\frac{P P}{6},$$

Տեղադրելով $C_1 \cdot l$ և $C_2 \cdot l$ որժեքները (118) հավասարժան-
մեջ, կստանանք՝

$$EIy = \frac{P(l-x)^3}{6} + \frac{PPx}{2} - \frac{P^2}{6} \quad [119]$$

Այս հավասարումը հնարավորություն եւ առլիս վորոշելու
Յ հասանքին համապատասխանող մաքսիմալ կորզածքը, կամ,
այսպիս կոչված՝ կորզածքի սլաքը, նշանակելով կորզածքի սլաքը
ի, վորոշենք նրա մեծությունը (119) հավասարումից, աեղաղբե-
լով սրա մեջ $x=l$:

$$EIl = \frac{P(l-l)^3}{6} + \frac{P \cdot P \cdot l}{2} - \frac{P \cdot P}{6}$$

Պարզացութերից հետո ստանում ենք՝


$$EIl = \frac{PP}{3}, \quad \text{վորակղից}$$

$$f = \frac{PP}{3 EI}$$

Ա. ՀԵՄԱՆ, ՎՈՐ ԷՆԿԱՌ Ե ՅԵՐԿՈՒԻ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ ՎՐԱ
ՅԵՎ, ԻՐ ՄԵԶՏԵՂՈՒՄ ԿՐՈՒՄ Ե ԿԵՆՏՐՈՆԱՑԱՆ ՈՒՑԾ (գծ. 134).
Թանիք վոր բեռնվածքն ազդում է հեծանի ուղիղ մեջտեղում, ապա
հնարանների վրա հակա-
զութերն իրար հազ-
ար են:

$$Q_1 = Q_2 = \frac{P}{2},$$

Բ ույժի ազդման
Ը կետը հեծանը բաժա-
նում է յերկու մասի՝ AC
և CB: Դրենք այս մա-
սերից յուրաքանչյուրի
համար ծռող մոմենտների
արտահայտությունները:
Յերկորորդ մասի մի վո-
րուս տո հատանքում, վոր
գտնվում է C և B կե-
տերի միջև, հատանքից
զեղի աջ գտնվող ուժերի
ծռող մոմենտը կազ-
առ է:



Գծ. 134.

$$M_{x_1} = -Q_2(l-x) = -\frac{P}{2}(l-x) \quad (120)$$

Վերցնենք այժմ մի վորեկ տո հատանք I մասում և զբնենք
հատանքից դեղի ձախ գտնված ույժերի մոմենտը:

$$M_{x_1}^I = \frac{P}{2} x \quad (121)$$

II մասում, X արացիսուի փոքրանալով, մեծանում է ծռող
մոմենտն ըստ բացարձակ մեծության, և յերբ արացիսը զառ-
նում է $x = \frac{l}{2}$, ծռող մոմենտը զառնում է:

$$M_{x_{\text{զառ}}} = -\frac{Pl}{4} : \quad (122)$$

I մասում, և արսցիսի մեծանալով, մեծանում է և ծռոցը մոտենաց և յերբ արսցիսը դառնում է $x = \frac{P}{2}$, առաջ մոտենան-

ըստ մեծության նույն արժեքն է ստանում: Վորովինեան ծռոցը մոտենաց փոխվում և ուղիղ գծի արկերը վագ հեծանի մեջտեղի ուղղաձիգի վրա գտնվող մի վորեն C_1 կետից վերցնենք հեծանիր զեղի գողացոր կողման ուղղված $C_1D = \frac{P}{4}$ սրգինատը և միաց-

նենք ուղիղ գծերով D կետը A_1 և B_1 կետերի հետ (դժ. 134, b): Կառանանք ծռող մոտենաների զիազրամը: Վասնպավոր հասանքը համապատասխանում է հեծանի մեջտեղի C կետին:

Կարող ույժերի զիազրամն ունի այն անսցը, վոր պատկեր-
վոծ և 136, c գծազրում, վորաեղ $\overline{B_1G} = Q_3$:

Մաքսիմալ կորվածքն ստացվում է հեծանի մեջտեղում և հավասար է՝

$$\frac{PP}{4\delta EI} \quad (123)$$

Կարող ույժն անալիտիկորեն վորոշվում է հետեւյալ առնչու-
թյունները՝

$$S_x = -\frac{dM_x^H}{dx} = -\frac{P}{2},$$

ընդ վորում C_1 կետում (դժ. 134, c) կարող ույժը փոխում է իր նշանը:

Առաձիգ կորի հավասարումը՝

$$EI \cdot \frac{d^3y}{dx^3} = M_x,$$

Արտաքին ույժը հեծանն ըստ յերկայնքի բաժանում է յեր-
կու մասի, որտ համապատասխան ել առաձիգ կորն ընդհանրա-
պես բաղկացած կլինի յերկու ճյուղերից, վորոնք կունենան ի-
րենց առանձին հավասարութեարք: Ներկա դեպքում P ույժն աղ-
դում է հեծանի մեջտեղում, այդ պատճառով առաձիգ կորը (դժ.
134, d) բաղկացած կլինի իրար բոլորովին նման AC'_3 և C'_2B :
յերկու ճյուղերից:

Դերցնելով հեծանի աղ ԾԲ մասը, ունենաց
Ել $\frac{d^2y}{dx^2} = -\frac{P}{2}(l-x)$, վորտեղից, յիրկու անգամ ինտե-
գրելով, կստանանք՝

$$EI \frac{dy}{dx} = \frac{P(l-x)^2}{4} + C_1$$

$$\text{և } EIy = \frac{P(l-x)^3}{12} + C_1x + C_2 \quad (124)$$

C_1 և C_2 հաստատենակը վորոշելու համար ունենաց հետե-
յալ պայմանները — յիբե $x = \frac{l}{2}$, ապա $\frac{dy}{dx} = 0$ (C_2 կետում կո-
րին շոշափողը զուգահեռ է OY ռազնցքին). և յիբե $x = l$, ապա
 $y = 0$ (հետադրում կորվածք չկա):

Տեղադրելով այս արժեքները, կստանանք՝

$$EI \cdot 0 = \frac{PP}{16} + C_1, \text{ վորտեղից } C_1 = -\frac{PP}{16} \text{ և }$$

$$EI \cdot 0 = C_1 \cdot l + C_2, \text{ վորտեղից } C_2 = \frac{Pl}{16},$$

Տեղադրելով C_1 և C_2 -ի արժեքները (124) հավասարման մեջ,
կստանանք՝

$$EI \cdot y = -\frac{P(l-x)^3}{12} - \frac{PPx}{16} + \frac{Pl}{16}.$$

Այս հավասարման միջոցով կարելի յեւ վորոշել x արացիսան
ունեցող ամեն մի հատանքի կորվածքը:


Մաքսիմալ է կորվածքը կլինի հեծանի մեջաղում, վորի
համար $x = \frac{l}{2}$. ուրիշու՝

$$EI \cdot f = -\frac{P \left(\frac{l}{2}\right)^3}{12} - \frac{P \cdot P \cdot \frac{l}{2}}{16} + \frac{Pl}{16} = \frac{Pl}{48},$$

վորտեղից և ստացվում է (123) առնչությունը՝

$$f = \frac{Pl}{48EI},$$

III. ՀԵԽԱՆ, ՎՈՐ ԱԶԱՏ ԸՆԿԱՄ Ե ԹԵՐԿՈՒ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԸ
ՎՐԱ ՅԵՎ ԿՐՈՒՄ Ե ՎՈՉ ՄԵԶՏԵՂՈՒՄ ԱԶԴՈՒ ՄԻ ԿԵՆՏՐՈ-
ՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՔ (գլ. 135): ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ Q_1 և Q_2 ՀԱԿԱԳ-



Գլ. 135

ՊՈՎԹԵՐԸ ՎՈՐՈՉՈՒՄ Ենք, ՎԵՐԱԿԱՆԵԼՈՎ ԲՈԼՈՐ ՈՒյժերի մոմենտների գումարը B և A կետերի վերաբերմամբ և գումարը հավասարեցնելով զերոյի՝

$$Q_1 \cdot l - P \cdot b = 0, \text{ կորտեղից } Q_1 = P \cdot \frac{b}{l} \quad (125)$$

$$b = Q_1 \cdot l + P \cdot a = 0, \text{ կորտեղից } Q_1 = P \cdot \frac{a}{l} \quad (126)$$

ՑԵՐԿՐՈՐԴ մասի մի վորեւ ուս հապանքում աջ ույժերի ծը-
ռող մոմենտը՝

$$M_x^{\text{II}} = -Q_1(l-x) = -\frac{Pa(l-x)}{l} \quad (127)$$

I մասի մի վորեն ոռ հասանքում ձախ ույժերի ծռող մամենաց՝

$$M_x^I = Q_1, x = P \cdot \frac{bx}{l} \quad (128)$$

Մոմենտը փոխվում է ուղիղ գծի որենքով և II մասում բացարձակ մեծությամբ մեծանում է չ-ի փոքրանալով, իսկ I մասում չ-ի մեծանալով. Մոմենտը մաքսիմալ արժեքի յեւ հասնում, յերբ $x=a$ և, ըստ (127) հավասարման, կազմում են՝

$$M_{max}^{II} = -P \cdot \frac{a(l-a)}{l} = -P \cdot \frac{ab}{l},$$

իսկ ըստ (128)-ի՝

$$M_{max}^I = P \cdot \frac{b \cdot a}{l},$$

այսինքն նույն արժեքն ըստ բացարձակ մեծության, վերցնելով ուղղաձիգի վրա C_1 կետից (գծ. 135, b) $\overline{C_1 D} = P \cdot \frac{ab}{l}$ որդինատը (գոգավորության կողմը), միացնենք D կետը A_1 և B_1 կետերի հետ ուղիղ գծերով և կստանանք ծռող ույժերի դիագրամը. Վահանգավոր հատունքը համապատասխանում է C_1 կետին.

Կարող ույժերի դիագրամն ունի այն ձևը, վոր ցույց եւ աշխած 135, c դադրում. Նկատենք, վոր յերկու ուղղանկյունների մակերեսներն իրար հավասար են՝ $C_1 F E B = C_1 B_1 \cdot B_1 E = b \cdot Q_1 = P \cdot \frac{ab}{l}$. և $A_1 C_1 G H = C_1 A_1 \cdot A_1 H = a \cdot Q_1 = P \frac{ab}{l}$, ուրիշն կարող ույժերի դիագրամի մնջ արացիսների առանցքից վերև գանգող մակերեսը հավասար է այդ առանցքից ներքեւ ընկած մակերեսին. Այս կապը տեղի ունի, ինչպես եւ լինի բեռնվածքը:

Կարող ույժն անալիտիկորեն գանվում է (127) հավասարմանը դիֆերենցիալ միջոցով՝

$$S_x^I = -\frac{dM_x^I}{dx} = -\frac{Pa}{l} = Q_1,$$


IV. ՀԵՄԱՆ, ՎՈՐ ԱԶԱՏ ՀՆԿԱԾ Ե ՅԵՐԿՈՒ ՀԵՆԱՐԱՆ-ՆԵՐԻ ՎՐԱ ԵԵՎ ԳՏՆՎՈՒՄ Ե ԿԵՆՏՐՈՆԱՑԱՌ ՈՒՅՈՒ-ՍԵՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ (գծ. 136). Հենարանների Q_1 և Q_2 հակազդութերը վորոշվում են հետեւյալ հավասարութերից՝

$$Q_1 l = P_1 (b+c+d) - P_2 (c+d) - P_3 d = 0 \text{ և}$$

$$Q_2 l = P_2 (a+b+c) - P_1 (a+b) - P_3 \cdot a = 0.$$

Մասղ մոմենտների դիագրամը կստանանք, վերցնելով ուղղաձիգերի վրա C_1, D_1 և E_1 կետերում (գծ. 136,b) այդ կետերի համապատասխան հատանքների ծովող մոմենտները. Այսպես, C հատանքի համար վերցնում ենք $C_1 F = Q_1 a$, D հատանքի համար՝ $D_1 G = Q_1 (a+b) - P_1 b$, և $-j_1$ ։ Մասղած կետերը միացնում ենք ուղղի զըծերով և սահնում $A_1 F G H B_1 A_1$ դիագրամը, Այս նույն դիագրամը կարելի յեր կառուցել և այլ կերպ՝ ույժերի գործողության անկախության որենքի հիման վրա. Անջատ վերցնելով P_1 ույժը, վորոշենք հենարանների Q'_1 և Q'_2 հակազդութերը և կառուցենք ծովող մոմենտների դիագրամը (գծ. 136, d). Նույն յեզանակով կցանենք և P_2 ու P_3 ույժերի առաջ բերած Q''_1 և Q''_2 , Q'''_1 և Q'''_2 հակազդութերը և կառուցենք ծովող մոմենտների դիագրամները (գծ.

136, ը և է). Գումարենք C, D և E կետերին համապատասխանող որդինատները, կստանանք նույն դիագրամը, վոր ունենք 136,b գծագրում:



Գծ. 136

Կարող ույժերի դիագրամը (դժ. 136, c) կկազմեն արացիսաների առանցքին զուգահեռ UT , SR և այլն ուղիղները:

$A_2D_2NMLKA_3$ պատկերի մակերեսը հավասար է D_2RSTUB_2D պատկերի մակերեսին:

V. Հեծան, ՎՈՐ ԹԱՂՎԱՄ Ե ՄԻ ՆԱՅՐՈՒՄ ՅԵՎ ԱՄԲՈՂՋ ՅԵՐԿԱՑՆՔՈՎ ԿՐՈՒՄ Ե ՀԱՎԱՍԱՐԱԳՈՎՐ ԴԱՍԱՎՈՐՎԱԾ ԲԵՌՆԲՎԱԾՔ (դժ. 137), Յերկարության ամեն մի սիմվորի բեռնը գածքը կազմում է $q \cdot l$ կգ, իսկ լրիվ բեռնվածքը $Q = q \cdot l$ կգ,

Սառա մոմենտը տու հատանքում՝

$$M_x = \frac{q(l-x)}{\text{առջը}} \cdot \frac{l-x}{\text{բարեկը}} = \frac{q(l-x)^2}{2} \quad (129)$$

Այս մոմենտը հասնում է մաքսիմալ մեծության, յերբ $x=0$:

$$M_{\max} = \frac{qP}{2} = \frac{Q \cdot l}{2}, \quad (130),$$


վորը հավասարակշռվում և թաղվածքի մոմենտով:

(129) հավասարութեարտահայտում և պարաբուլի մոմենտով:
Սառա մոմենտաների դիագրամը (դժ. 137, b) կսացվի, յեթև վերցնենք $A_1C = \frac{qP}{2}$ և B_1 ու C կետերը միացնենք պարաբուլով, վորի զագաթը զանգում է B_1 կետում (այս հատանքում մոմենտը հավասար է զերոյի):

Կարող ույժն ուղիղ դժի որենքով մեծանում է՝ սկսած զերսյից B հատանքում մինչև զի մեծությունը թաղվածքի հատանքում:

Անալիտիկորեն կարող ույժը կզանենք, դիֆերենցիլով (129) հավասարումը՝

$$S_x = -\frac{dM_x}{dx} = q(l-x), \quad (131)$$



Դժ. 137

վորից յերեսում ե, վոր կարող ույժը փոխվում ե ուղիղ պահ որենքով: Եթեր $x=l$, $S_x=0$ և յերբ $x=0$, $S_x=ql=Q$, Սրան համապատասխան ել զեղացքամը կներկայացնել յեռանկյուն (դժ. 137, շ).

Առաձիգ կորի հավասարումը՝

$$EI \frac{d^3y}{dx^3} = q \cdot \frac{(l-x)^3}{2} \quad (132),$$

վարտեղից՝

$$EI \frac{dy}{dx} = - \frac{q(l-x)^3}{\sigma} + C_1 \quad (133)$$

$$\text{և } EI \cdot y = \frac{q(l-x)^4}{24} + C_1 x + C_2 \quad (134)$$

C_1 և C_2 հաստատաները վարողվում են հետեւյալ պայմաններից. յերբ $x=0$, ապա $y=0$ (Ա կետում կորվածք չկա) և յերբ $x=0$, ապա $\frac{dy}{dx}=0$ (առշարժող Ա կետում համատեղվում ե արագիսաների առանցքի հետ): Տեղադրութերն անելով, կստանանք (133) հավասարումից՝

$$0 = - \frac{q(l-0)^3}{\sigma} + C_1, \quad \text{վարտեղից } C_1 = \frac{q^3}{\sigma}$$

և (134) հավասարումից՝

$$0 = \frac{q l^4}{24} + \frac{q^3}{\sigma} \cdot 0 + C_2, \quad \text{վարտեղից } C_2 = - \frac{q l^4}{24},$$

Տեղադրելով C_1 և C_2 -ի արժեքները (134) հավասարացնեն մեջ, կստանանք՝





$$Ely = \frac{q(l-x)^4}{24} + \frac{q^3 x}{\sigma} - \frac{q l^4}{24} \quad (135)$$

Մաքսիմալ կորվածքը կստացվի Յ կետում ($x=l$):

$$Elf = \frac{q l^4}{\sigma} - \frac{q l^4}{24}, \quad \text{վարտեղից}$$

$$f = \frac{q l^4}{8EI} = \frac{Q \cdot l^3}{8EI} \quad (136)$$

VI. ՀԵՄԱՆ, ՎՈՐ ԹԱՂՎԱԾ Ե ՄԻ ՄԱՅՐՈՒՄ ՅԵՎ ԿՐՈՒՄ
Ե ԱՄՔՈՒՋ ՅԵՐԿԱՑՆՔՈՎ ՀԱՎԱՍԱՐԱՎԵՍ ԴԱՍԱՎՈՐՎԱԾ ՅԵՎ
ԱԶԱՏ ՄԱՅՐՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱՑԱԾ ԲԵՌՆՎԱՄՔ (գծ. 138). Կի-
րունելով ույժերի գործողության անկախության որենքը, կառու-
ցում էնք առանձին դիագրամներ՝ կենտրոնացած Բ ույժի համար
և յերկարության ամեն մի միավորի վրա հավասարապես դաս-
վորված զ կզ բեռնվածքի համար։ Որդինատները հեշտ գումարե-



Գծ. 138

Գծ. 139

լու նպատակով առաջին դիագրամը (գծ. 138) կառուցում ենք
զեղի վերն՝ A₁B₁C₁ իսկ յերկրորդը զեղի ներքն՝ A₁B₁D. այն
ժամանակ CB₁D-ն կներկայացնե ծովող մոմենտների ընդհանուր
դիագրամը, նույն կերպ ենք անում և կարող ույժերի դիագրամի
համար (գծ. 138, c). Վատանգավոր հատանքը թաղվածքի Ա հար-
թության մեջ եւ,

կորվածքի ուսաքը հավասար կլինի յերկու բեռնվածքների
առաջացրած սլաքների գումարին, կիրառելով (115) և (136) բա-
նաձևերը, ստանում ենք

$$f = \frac{Pp}{3EI} + \frac{Qp}{8EI} = \frac{p}{EI} \left(\frac{P}{3} + \frac{Q}{8} \right) \quad (137)$$

VII. ՀԵՄԱՆ, ՎՈՐ ԱԶԱՏ ՀՆԿԱԾ Ե ԹԵՐԿՈՒ ՀԵՆԱՐԱՆ-
ՆԵՐԻ ՎՐԱ ՅԵՎ ԿՐՈՒՄ Ե ՀԱՎԱՍԱՐԱԳԵՍ ԴԱՍԱՎՈՐՎԱԾ
ԲԵՌՆՎԱԾՄՔ (գծ. 139).

$$\text{ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱԿԱՊԴԱՑՄԱՆՔԸ} \quad Q_1 = Q_2 = \frac{qL}{2} = \frac{Q}{2},$$

առ հատանքում ծառղ մոմենտը բազկացած և ՀԵՆԱՐԱՆԻ
ՀԱԿԱՊԴԱՆ մոմենտից և ՀԵԹԱՆԻ յերկայնքով հատանքի այս
կամ այն կողմում անընդհատ դասավորված բեռնվածքի մոմեն-
տից: Վերցնելով այն կողմը դասավորված ույժերի մոմենտը, սահ-
նում ենք:

$$\begin{aligned} M_x &= -\frac{Q}{2}(l-x) + \underbrace{q(l-x)}_{\text{այժմ}} \cdot \underbrace{\frac{l-x}{2}}_{\text{բարձրություն}} = \\ &= -\frac{q(l-x)}{2} + \frac{q(l-x)^2}{2} \end{aligned} \quad (138)$$

Մոռղ մոմենտները փոփոխվում են ըստ պարաբոլի:
Մաքսիմալ արժեքի ծառղ մոմենտը հասնում է ՀԵԹԱՆԻ: Անչ-
ակայի Ը հատանքում: Տեղադրելով այդ հատանքի համար
 $x = \frac{l}{2}$, կստանանք՝

$$M_{\max} = -\frac{qL^2}{8} = -\frac{QL}{8} \quad (139)$$

Կարող ույժերի դիագրամը, ինչպես պարզած եւ (§ 13-ում),
ՀԵԹԱՆԻ-առանցքը հատող ուղիղ դիմ եւ Նա հեշտ է կառավագիւմ (գծ. 139, Ը): Վերցնելով $E, F = Q$, և $A_2 E = -Q_1$, միացնում ենք
Ե և F կետերն ուղիղ գծով:

Նույնը կստանանք և անոլիտիկորեն:

Դիֆերենցիալով (138) հավասարումը, կստանանք կարող
ույժը՝

$$S_x = -\frac{dM_x}{dx} = -\frac{ql}{2} + qx \quad (140)$$

Ինչպես տեսնում ենք, կարող ույժը փոփոխվում է ուղիղ
գծի որենքով: Եւթե $x=0$, ապա $S_0 = -\frac{ql}{2} = -Q_1$: Եւթե
 $x=l$, ապա $Sl = \frac{ql}{2} = Q_2$:

Իսկ Ը կետում՝ $x = \frac{l}{2}$ և $S_{\min} = 0$:

Եոր գծի հավասարումը (տո հասանքից դեպի աջ գտնվող մասի համար):

$$EI \frac{d^2y}{dx^2} = -\frac{q(l-x)}{2} + \frac{q(l-x)^2}{2} \quad (141)$$

Խնաճութելով յերկու անգամ, ստանում ենք՝

$$EI \frac{dy}{dx} = \frac{q(l-x)^3}{4} - \frac{q(l-x)^4}{6} + C_1 \quad (142)$$

$$\text{և } EIy = -\frac{q(l-x)^4}{12} + \frac{q(l-x)^5}{24} + C_1x + C_2 \quad (143)$$

C_1 և C_2 հաստատուները վորոշելու պայմանները նույնն են, ինչ զոր III կետում քննարկած հեծանինը: Տեղադրելով, ստանում ենք՝ $C_1 = -\frac{ql^5}{24}$ և $C_2 = \frac{ql^4}{24}$. Արան համապատասխան (143) հավասարումը կը նդունի հետեւյալ ձևը՝

$$EIy = -\frac{q(l-x)^4}{12} + \frac{q(l-x)^5}{24} - \frac{ql^5}{24} + \frac{ql^4}{24} \quad (144)$$

Կորպածքի ոլաքը $\left(y_{\text{բ}} = \frac{l}{2} \right)$ ստացվում է՝


$$f = \frac{5}{384} \cdot \frac{ql^4}{EI} = \frac{5}{384} \cdot \frac{Ql^3}{EI} \quad (145)$$

Հարցեր:

1. Խնձու այս հայութեամբ I կետում ընդունած է, զոր հենարանում ($y_{\text{բ}} = 0$): $\frac{dy}{dx} = 0$, իսկ II կետում քննարկած դեպքի համար չի կարելի ընդունել, զոր հենարանում $\frac{dy}{dx} = 0$,

2. Մի ծայրով ամրացրած հեծանի դեպքում վմբ ըեռնվածքն եւ տալիս ավելի մեծ կորպածք՝ ծայրում աղդող կենտրոնացած ձւյժը, թե նույն մեծության հավասարապես դասավորվածը (յեթի մյուս պայմանները նույնն են):

Արթնակ 63. № 28 պրոֆիլի յերկտավրային հեծանը (գծ. 140) մի եայրով բաղկած և, իսկ մյուս ծայրում կրում և $P = 1000$ կգ ուժով վորոշել մաքսիմալ նորմալ ճնշումը, նաև կորվածքի և ուղաքը, յեթե $I = 4$ մ, $E = 2 \cdot 10^6$ կգ/սմ². Հաշվի առնել և հեծանի սեփական կշիռը:



Գծ. 140

Համամիութենական ստանդարտի (OCT 16), այդ պրոֆիլն ունի 140-րդ գծագրում ցույց տրված չափերը: Յերկարության յուրաքանչյուրը $I = 4$ մ, վրա ըերնըգածքը $44,274$ կգ և, իներցիայի երգատորիալ մոմենտը $I_z = 6878$ սմ⁴, լայնակի հատանքը մակերեսը $F = 56,4$ սմ².

Վտանգավոր հատանքում ($\chi = 0$) կենտրոնացած ուժից առաջացած ծռող մոմենտը, (114) բանաձեռի համաձայն՝

$$M_{\max} = P \cdot I = 1000 \cdot 400 = 400000 \text{ կգմ},$$

Սեփական կշիռը, վորը պետք է դիտել իրրե հավասարաչափ դասավորված բեռնվածք, տալիս և ծռող մոմենտ, համաձայն (130) բանաձեռի՝

$$M_{\max} = \frac{Ql}{2} = \frac{ql^2}{2} = \frac{44,274 \cdot 4^2}{2} = 354 \text{ կգմ} = 35400 \text{ կգսմ},$$

Ամենամեծ նորմալ լարումը, վորին յենթարկվում և վտանգավոր հատանքում լիզոք առանցքից ամենահեռուն գտնվածքելիկը, վորոշվում և (106) բանաձեռի հիման վրա՝

$$t_2 = \frac{M_{\max} \cdot z}{I} = \frac{(400000 + 35400) \cdot 14}{6878} = 886 \text{ կգ/սմ}^3$$

Կորվածքի ուղաքը վորոշում ենք ըստ (137) բանաձեռի՝

$$f = \frac{400^3}{2000000 \cdot 6878} \left(\frac{1000}{3} + -\frac{187}{8} \right) = 1,6 \text{ սմ},$$

Արթնակ 64. Նույն՝ № 28 պրոֆիլի հատանքով յերկտավրային հեծանը ծռվում և հավասարապես դասավորված $P = 1000$ կգ/մ բեռնվածքով և հեծանի մեջտեղում աշխատող կենտրոնացած $P = 3000$ կգ բեռնվածքով: Հեծանն ազատ ընկած և յերկու հե-

Կարբանների վրա, վարսնց հեռավորությունն իրարից՝ $l = 4$ մ.
Վորոշել ամենամեծ նորմալ լարումը և կորվածքի սլաքը,

Վառնդավոր հատանքը դժուվում և մեջտեղում։ Հավասարապես դառավորված բևռնվածքը տալիս և ծոռղ մոմենտ, վորվորչվում և ըստ (139) բանաձեռի՝

$$M_1 = \frac{4000 \cdot 400}{8} = 200000 \text{ կգմ.}$$

Կենարոնացած ույժի աված ամենամեծ մոմենտն ըստ (122) բանաձեռի՝

$$M_2 = \frac{3000 \cdot 400}{4} = 300000 \text{ կգմ.}$$

Ընդհանուր ծիռղ մոմենտը՝

$$M_3 = 200000 + 300000 = 500000 \text{ կգմ.}$$

Ամենամեծ նորմալ լորումը՝

$$t_2 = \frac{500000 \cdot 14}{6878} = 1018 \text{ կգ/սմ}^2.$$

Կորվածքի սլաքը բաղկացած և հավասարաչափ անընդհատ դասավորված բևռնվածքի աված սլաքից ըստ (145) բանաձեռի՝

$$f_1 = -\frac{5}{384} \cdot \frac{4000 \cdot 400^3}{2000000 \cdot 6878} =$$


և կենարոնացած ույժի սլաքից. ըստ (123) բանաձեռի՝

$$f_2 = \frac{3000 \cdot 400^3}{48 \cdot 2000000 \cdot 6878},$$

Ուրեմն կորվածքի ընդհանուր սլաքը՝

$$f = \frac{400^3}{2000000 \cdot 6878} \left(\frac{5 \cdot 4000}{384} + \frac{3000}{48} \right) = 0,5 \text{ սմ} = 5 \text{ մմ.}$$

Արթակ 65. Խըարից օմ հեռավորության վրա գտնվող յերկու հեռարանների վրա դրված և № 30 պրոֆիլի յերկտավը այս հատակով հեծանը—մի դեպքում այնպես, ինչպես ցույց է տրված 141, զծագրում, իսկ մյուս դեպքում՝ 142, օ զծագրում, վերոշել այս յերկու դեպքերի համար հեծանի սեփական կշռից առաջացած կորվածքի սլաքը:



Հե. 142

OCT 16 աղյուսակում զբանում ենք, վոր ավյալ պրոֆիլի համար՝ $I_1 = 8881$ սմ⁴, $I_2 = 366$ սմ⁴ և յերկարության ամեն 1 մ կշռում և $49,934$ կգ, հետեւապես ամրող հեծանը կշռում և $49,934 \cdot 6 = 300$ կգ:

Ընդունելով, վոր $E = 2000000$ կգ/սմ², ստանում ենք կորպածքի սլաքն ըստ (149) բանաձեռի առաջին դեպքի համար՝

$$i_1 = \frac{5}{384} \cdot \frac{300 \cdot 600^3}{2000000 \cdot 8881} = 0,05 \text{ սմ}, \text{ իսկ } \text{յերկրորդ}$$

դեպքի համար՝


$$i_2 = \frac{5}{384} \cdot \frac{300 \cdot 600^3}{2000000 \cdot 366} = 1,15 \text{ սմ}.$$

59. ՄԹՄԱՆ ԶԵՎԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏՈԶԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԲԵՌՆՎԱՄՏՔԻ ՍՏԱՏԻԿԱԿԱՆ ՑԵՎ ԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԳԼՐԾՈՂՅՈՒԹՅՈՒՆԸ, Այս դեպքերում, յերբ փորձարկվող չորսուկ լոյնուի հատանքի չափերն աննշան են, ծովան ձևափոխության փորձանական հետազոտությունը կատարվում է պարզ կերպով—չորսում զնում են հենարանների վրա, մեջտեղից կախ են տալիս մի հետար, վորի վրա դնում են և ասահիճանաբար ավելացնում քենակները նորվածքի սլաքը չափում են կամ լծակային հատուկ ապարատների և կամ կատեռամետրի ոգնությամբ:

Նշանակալի մեծության ծովող մամենաների փորձարկումը կատարվում է ուժեղ մեքենաների ողնությամբ—կամ այն մամուլով, վոր ծառայում է և սեղմումի փորձարկման համար, կամ խորղ մեքենայի միջոցով, վոր ունի հատուկ հարմարանքներ, ինչպես ցույց է տրված 142-րդ զծագրում, և կամ այսպես կոչված՝ ունիվերսալ փորձարկային մեքենայի ոգնությամբ (զե. 143).

աս ներքեռում ունի հատուկ պլատֆորմ, վորի վրա հարմարեցրած
են հնարաններ՝ փորձարկվող հեծանի համար:

Ծեթե կոռողինատների ուղղանկյուն սիստեմում (գծ. 144)
մի առանցքի ուղղությամբ վերցնենք կորվածքի և լաքները, իսկ
մյուսի ուղղությամբ՝ այդ ոլաքներին համապատասխանող ծռող
P ույժերը, ոպա կատանանք մի զիազրամ, նման վերևում մեր




Գծ. 143

քննարկած այլ ձևափոխությունների դիագրամներին: Այդ դիա-
գրամի ՕԱ մտաց ներկայացնում ե ի-ի և P-ի կախութե առաձիգ
ձևափոխությունների սահմանում:

Արտաքին ույժի կատարած աշխատանքը վերածվում է ձե-
վափոխված չորսուի պոտենցիալ եներգիայի: այդ աշխատանքը
հավասար է դիմոդրության, այսինքն առաձգության ներքին
ույժերի աշխատանքին: Նրա մեծությունը չափվում է ույժի և
արա ազգման կետի անցած ուղղու այսինքն կորվածքի ոլաքի
արտադրյալով: Այսպիսով, չորսուն ծռելու համար ծախսված աշ-
խատանքն արտահայտվում է դիագրամի մակերեսով:

Առաձգության սահմաններում այդ աշխատանքը կարուա-
հայտվի ՕԱՅ յեռանկյան մակերեսով և հավասար կլինի՝ $T =$
 $\frac{P \cdot \bar{O}A}{2} = \frac{P \cdot f}{2}$, վրտեղիլը ծաման գեֆորմացիան բնորոշող



Գ. 163

ոլտքն եւ Այսպես, որինակ, յերկու հենակների վրա ընկած հե-
ծանի զենքում հեծանի մեջաեղում աղղող P ույժի կատարած
աշխատանքը կկաղմի, նկատի առնելով (123) բանաձեւ՝

$$T = \frac{P}{2} \cdot \frac{P\bar{r}}{48EI} = \frac{P^2\bar{r}}{96EI}.$$

Այս սահմանները վերաբերում են ույժի ստատիկական գոր-
ծողության դեպքին. Եթե ույժը զործում է դինամիկորեն, ապա

կորպամբի սլաքը յերկու անգամ մեծ կլինիք է քրան համապատասխան մեծանութ և չորսուի մեջ առաջացող լարումները վեափոխությունը առավել և մեծանութ է, յեթե բեռնվածքը զործում և հարգածով, այսինքն յերբ առկա յե վորոշ կենդանի ույժով շարժվող մասսա:

Տ 60. ՄՈՒՄԱՆ ՀԱՇՎԱՑԻՆ
ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՍԱՐ ԴԻ-
ՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՍՈՒՆ Մոման
աեսությունը հանգում և հետեւյալ
դրույթներին—ծոված չորսուի
ամեն մի կամաւոր հատանքում

զոյտություն ունեն ձգման և սեղմումի նորմալ լարումներ և սահքի լարումներ և այնպիսի հատանքին ուղղահայաց հարթությունների մեջ կան սիայն սահքի լարումներ, Այսուղից ել հետեւմ և, վոր ծովող չորսուի պմուր չափերը վորոշելու ժամանակ պետք և այն յելակեան ունենալ, վոր այս բոլոր լարումները թույլատրելի սահմանից չանցնեն:

Թույլատրելի լարումը նշանակելով և և կիրառելով (106) հավասարումը, կստանանք ծոման հաշվային հավասարումը՝


$$M_d = \frac{1}{z} \cdot k \quad (145)$$

Ե-ի արժեքը պետք է վերցնել առանձին՝ սեղմում թելիկների համար և առանձին՝ ձգմած թելիկների համար, նշանակելով ծայրագույն ձգմած թելիկի հեռավորությունը չեզոք շերտից՝ ս, իսկ ծայրագույն սեղմում թելիկինը՝ ս, ձգման թույլատրելի լարումը՝ է, իսկ սեղմումինը՝ և համապատանք հետեւյալ յերկու հավասարումը՝

$$M_d = \frac{1}{v} \cdot k_s \quad (146)$$

$$M_d = \frac{1}{u} \cdot k_u \quad (147)$$

Բանորոշը, վոր ստացվում է լ մոմենտի բաժանելուց ծայրագույն թելիկի հեռավորության վրա, կոչվում է ծոման դիմա-



Գ. 214

ղըսության մոմենտ (կամ մոդուլ) և սովորաբար նշանակվում են
W տառապ, Հետևաբար՝

$$M_d = W \cdot k_d \quad (146a)$$

և

$$M_d = W \cdot k_n \quad (147a)$$

Ինչ վերաբերում են տանգենցիալ լարումներին, ապա այն
հեծաններում, վորոնց յերկարությունը նշանակալի չափով գե-
րազանցում են լայնակի հատանքի բարձրությանը, տանգենցիալ
լարումները զգալի չափով փոքր են նորմալ լարումներից, այդ
պատճառով ել սովորաբար հեծանի ամրությունն ապահով են,
յեթե հաշվում արած են նորմալ լարումների հիման վրա։ Ցեղե
հատանքը սիմետրիկ է չեղող առանցքի վերաբերմամբ, ապա
ուշ, և հաշվումը հանգում են միայն մի բանաձևի, նայելով թե
ավյալ նյութը վեր ձեռափոխության ե ավելի վատ դիմանում։
Որինակ, չուզունի համար, վորը սեղմումին ավելի լավ ե դիմա-
դրում, քան ձգմանը, պետք ե վերցնել ձգման թույլատրելի լա-
րումը։

Ծռման թույլատրելի լարումը նշանակելով էժ, կստանանք
վերջնական հաշվային բանաձևը

$$M_d = W \cdot k_d \quad (148)$$

Զանազան նյութերի և բեռնվածքի զանազան դեպքեր, ա-
մոպատասխան թույլատրելի լարումները (կգ/սմ²-ներով) զետե-
ղած են հետ ալ աղյուսակի մեջ.

Նյութի տեսակը	մ ²	Քափեռ յերկություն		ափեռ ողուսա		Գող առա- ձև ածք		մ ²	մ ²	
		մ ²	մ ²	մ ²	մ ²	մ ²	մ ²			
Բեռնվածքի տեսակը	I	900	900	1500	1200	1800	750	1200	400	100
	II	600	600	1000	800	1200	500	800	250	75-90
	III	300	300	500	400	60	150	400	150	60

Տեղադրելով հաշվային հավասարման մեջ ավյալ ծռող մո-
մենտի և թույլատրելի լարման համապատասխան արժեքը, մենք

կարող ենք վորոշել դիմադրության մոմենտի անհրաժեշտ մեծությունը, իսկ սրա հիման վրա՝ լայնակի հատանքի անհրաժեշտ չափերը: Ուղղանկյուն հատանքի համար դիմադրության մոմենտը՝

$$W = \frac{1}{\frac{h}{2}} = \frac{bh^3}{12} : \frac{h}{2} = \frac{bh^3}{6} \quad (149)$$

Յեթև կանխապես վերցնենք եւ ի մեծություններից մեկը, մյուսը կարող ենք վորոշել այս հավասարումից: Կամ կարող ենք ավյալ համարել $\frac{h}{b} = m$ հարաբերությունը՝ կստանանք յերկու հավասարում, վորոնցից և կվորոշենք այդ յերկու չափերը:

Վորովզեաւ լայնակի հատանքի բարձրությունը հավասարման մեջ յերկորդ տարինանի յե, առա համկանալի յե, վոր ավելի ձեռնառու յե նյութի գլխավոր մասսան զետեղել վորքան հնարավոր եւ հեռա չեղոք տանցքից: Դա յե պատճառը, վոր լայն տարածված եւ չորսուների լայնակի հատանքի յերկուավային ձեը,

Կը միապաղադ հատանքի իներցիայի եքվատորիալ մամենը արածաղձի վերաբերմամբ հավասար եւ՝

$$I = \frac{\pi d^4}{64},$$

իսկ դիմադրության մոմենտը՝

$$W = \frac{\pi d^4}{64} : \frac{d}{2} = \frac{\pi d^3}{32} \approx 0,1 d^3 \quad (150)$$

Մնամեց հատանքի համար՝

$$I = \frac{\pi d_1^4}{64} - 1 - \left(\frac{d_2}{d_1} \right)^4] ,$$

իսկ դիմադրության մոմենտը՝

$$W = \frac{1}{\frac{d_1}{2}} = \frac{\pi}{32} \left(\frac{d_1^4}{d_1} - \frac{d_2^4}{d_1} \right) = 0,1 d_1^3 \left[1 - \left(\frac{d_2}{d_1} \right)^4 \right] \quad (150a)$$

Մի քանի այլ հատանքների դիմադրության մոմենտները արված են III հավելվածի մեջ:

Դրսուի զանազան հատանքների մեջ ծռող մոմենտների մեծությունները տարրեր են: Հաշվումը պետք է անել ըստ մաքսիմալ մոմենտի, վոր տեղի ունի այսպես կոչված վտանգավոր հատանքում: Սրանց հետևում են, վոր պրիզմաձև չորսուի մեջ, վորի լայնակի հատանքը հաշված ե սաքսիմալ մոմենտի համաձայն, մենք, բացի վտանգավոր հատանքից, մասած բոլոր հատանքներում կունենանք ամրության վորոշ հավելուրդ—նյութն, այսպիսով, ոգտագործվում ե վոչ անտեսաբար: Սակայն չորսուն կարելի յե այսպես հաշվել վոր բոլոր հատանքներում նույն նորմալ լարումը լինի—այսինքն ավելի փոքր չափերի անել այն հատանքները, վորոնց ծռող մոմենտները փոքր են: Այս տեսակ չորսուն կոչվում է ծռման հավասար դիմադրության չորսուն իրականում գոյություն ունեն շատ դետալներ, վորմնք կառուցված են այդ սկզբունքով: այսպես, պատի կրոնշտեյնը քանի զընուած հաստանում ե դեպի հենարանային հարթությունը, վորով հետև այդ ուղղությամբ աստիճանաբար մեծանում ե ծռող մոմենտը: զանազան տեսակ բռնակները և լժակները (լշեռքի անկարին) նույնպես հետզհետեւ հաստանում են այն ուղղությամբ, վոր ուղղությամբ մեծանում ե ծռող մոմենտը և այլն:

Հ ա ր ց ե ր

1. Խնչման ժամանակ ավելի ձեռնուու յե գործածել յերկտավրային չորսուն, քան լայնակի հատանքի նույն մակերեսն ունեցող ուղղանկյուն չորսուն:

2. Վեր տեսակ չորսուն և կոչվում ծռման հավասար դիմադրության չորսուն:

3. Խնչման հողվակի ճաղերը կունդի մոտ ավելի հաստ են և լայն, քան հեցի մոտ:

Արիթմակ 66. 137-րդ գծագրում պատկերված հեծանը, յերկտավրային $L = 2 \text{ m}$, կրում ե հավասարապես դասավորված քեռնվածք $q = 1000 \text{ kg/m}^2$: Ընտրել համապատասխան յերկտավրային հատանքը: Թույլատրելի լարումները՝ $k_1 = k_2 = 1000 \text{ kg/m}^2$:

Մաքսիմալ ծռող մոմենտն ըստ (130) բանաձեկ՝

$$M_{\max} = \frac{Ql}{2} = \frac{1000 \cdot 2 \cdot 200}{2} = 200000 \text{ kgm}.$$

Դիմադրության անհրաժեշտ մոմենտն ըստ (148) բանաձեռ՝

$$W = \frac{M_{\max}}{k_s} = \frac{200000}{1000} = 200 \text{ mm}^3,$$

Այս W -ի արժեքին համապատասխանում է OCT 16-ի № 20 պրոֆիլը (վորի $W=201,4 \text{ mm}^3$), Այս պրոֆիլի չափերը արված են 145-րդ գծագրում. Երա իներցիայի մոմենտը $I_z = 2014 \text{ mm}^4$.

Արինակ 67. Բնակելի շենքը, վորի լայնությունը $5,2 \text{ m}$ է, պետք է ծածկել սոնու ուղղանկյուն հատանքի հեծաններով, վորոնց լայնության և բարձրության հարաբերությունն է $\frac{b}{h} = \frac{5}{2}$,

Հեծանները զանվում են իրարից $0,8 \text{ m}$. Հեռավորության վրա Խոչ չափերը պետք են ունենան հեծանների լայնակի հատանքը, յիթե առանիքի բևոնվածքը կազմում է 450 kg/m^2 , իսկ թույլատրելի լարումը՝ $k_s = 60 \text{ kg/mm}^2$.

Ամեն մի հեծանին հասնող հավասարապես զասավորված բեռն լածքը կազմում է $Q=450 \cdot 0,8 \cdot 5,2=1872 \text{ kg}$. Մաքսիմալ ծռող մոմենտն ըստ (139) բանաձեռ՝

$$M_{\max} = \frac{1872 \cdot 520}{8} = 12160 \text{ kgm},$$


Դիմադրության անհրաժեշտ մոմենտը՝

$$W = \frac{12160}{60} = 2028 \text{ mm}^3 = \frac{bh^3}{6} = \frac{\frac{5}{2} h \cdot h^2}{6} = \frac{5h^3}{42},$$

Այսուղից վորոշում ենք հեծանի բարձրությունը՝

$$h \approx 26 \text{ mm}.$$

Արինակ 68. Կլոր զերանից, վորի արամազիծն է մ, պետք են ուղղանկյուն քառանկյան հատանքի չորսու սղոցել. Խոչ առընչություն պետք են ունենան չորսու լայնակի հատանքի միջին




Դ. 145

և ի բարձրությունը, վորպեսդի ստացվի ամենամեծ ամրության հեծան (գծ. 145):

Ամենամեծ ամրության պայմանը՝ զիմաղրության ամենամեծ մոդուլն է, այսինքն $W = \frac{bh^2}{6}$ արտահայտության մաքսիմալ արժեքը:

Տեղաղրելով այդ արտահայտության մեջ $h^2 = d^2 - b^2$, ստանում ենք՝

$$W = \frac{b(d^2 - b^2)}{6},$$



ԳՀ. 145

Այս արտահայտության մաքսիմումը գտնելու նպատակով, նրա առաջին ածանցյալն ըստ Ե-ի հավասարեցնենք դիրոյի՝

$$\frac{d^2 - 3b^2}{6} = 0, \text{ վորպեղից}$$

$$b = \frac{d}{\sqrt{3}} \text{ և } *)$$

$$b = \sqrt{d^2 - b^2} = \frac{d\sqrt{2}}{\sqrt{3}} = b\sqrt{2}.$$

Այսպիսով մենք ստացանք վորոնելի առնչությունը՝

$$\frac{h}{b} = \sqrt{ } \quad 1,4 = 7:5$$

Դորձնականում կլոր գերանից առաջադրած պայմանին բավարարող հեծան ստանալու համար այս առնչությունը հետեւյալ կերպ են ստանում. AB արամագիծը սժանում են Յ հավասար մասի՝ AC , CD և DB . C և D կետ յ կանդնեցնում են ուղղահայցներ և գտնում սրանց հ. ան F և E կետերը շրջանագծի հետ Ստացված A, F, B և E կոտերը ներկայացնում են վո-

*) Վերցնելով շերեգորդ ածանցյալը, կտեսնենք, վոր նույսական է, և առեղջիւ Ե-ի ստացած աշերը համապատասխանում է մաքսիմումին:

բոնած քառանկյան գագաթները, վորովհետեւ AF լարը, իրեւ AC -ի և AB -ի միջին համեմատականը, հավասար է՝

$$AF = \sqrt{AC \cdot AB} = \sqrt{\frac{d}{3} \cdot d} = \frac{d}{\sqrt{3}} = b$$

Արթակ 69. Հեծաններից մեկն ունի ուղղանկյունն հատանք և հիմով և ի բարձրությունով, մյուսը՝ առաջինին հավասարամեծ, բայց քառակուսի հատանք, համեմատել այդ յերկու հեծանների նույն ամրությունը, յեթե մյուս բոլոր պայմանները յերկու հեծանի համար ել նույնն են.

Առաջին հեծանն այնքան անզամ ամուր և յերկրորդ հեծանից, վորքան անզամ առաջինի դիմադրության W_1 մոմենտը մեծ և յերկրորդի դիմադրության W_2 մոմենտից:

$$W_1 = \frac{bh^3}{6},$$


Քառակուսի հատանքով հեծանի մի կողմը նշանակելով և, կունենանք՝

$$a = \sqrt{bh} \text{ և } W_1 = \frac{a \cdot a^3}{6} = \frac{a^3}{6} = \frac{V(bh)^2}{6} = \frac{bh\sqrt{b}}{6}$$

և, հետեւաբար՝

$$W_1 : W_2 = \frac{bh^3}{6} : \frac{bh\sqrt{bh}}{6} = \frac{h}{\sqrt{bh}} = \frac{\sqrt{bh}}{b},$$

Արթակ 70. Ստանալ այն բանաձեռ, վորի ոգնությամբ վորչվում և ներքին այրման շարժիչի մխոցը և շարժանակը միացնող մխոցային մաս. դժ. 147.



. 94. 147

Մխոցային մասը կարող ենք դիմել իրեւ մի հեծան, վորչնակած և յերկու հեծարանների վրա և մեջտեղում կրում և մխոցի-

ճնշման P ուժիցը, այդ դեպքում մաքսիմալ ծռող մոմենտը վատանգավոր հատանգում (մատի մեջտեղում) կլինի՝

$$M_s = \frac{P \cdot l_0}{4} = p \cdot 0,785 D^3 \cdot \frac{l_0}{4},$$


վորտեղ P-ն ճնշումն և մթնակերով, իսկ D-ն՝ մխոցի տրամագիծը, նիրառելով հաշվային (148) բանաձեռ և նկատի առնելով, վոր W = 0,1 D³, ստանում ենք՝

$$0,1 D^3 k_s = M_s = p \cdot 0,785 D^3 \cdot \frac{l_0}{4}, \quad \text{վորտեղից}$$

$$d = \sqrt[3]{\frac{0,785 D^3 l_0 p}{4 \cdot 0,1 \cdot k_s}},$$

Հնդունակելով թափծու պողպատի թույլատրելի լարումը k_s = (800 կգ/սմ², կստանանք՝

$$d = \sqrt[3]{\frac{p D^3 l_0}{400}} \approx \sqrt[3]{\frac{p D^3 l_0}{400}}$$



Ֆ. 148

Օրինակ 71. Ցերկու դետաներ, վոր ձգվում են P ուժից, միացրած են իրար հետ սեպով (գծ. 148). Կորոշել A սեպի հիմնական չափերը.

Տղիշի մեջ արածագծերը հաշվում են ըստ խզումի՝ ամբության, ընդունին սեպի և հաստությունն ընդունում են՝ եթե՝ $\frac{d_1}{4} < \text{լայամաքարդ}$ և ապա առուղում ըստ ճակատի ամբության, համաձայն $\frac{P}{2b \cdot \delta} < \text{լայամաքարդ}$. Այս չափն ստուգում են ըստ կարումի ամբության, համաձայն $2h_1 d_1 k_s = P$ լայամաքարդ. Այս չափը վերցնում են հայտար հայեցակարգության մեջ:

Սեպը դիտում ենք իրը մի հեծան, վոր կրում և անընդհատ գուտավորված բեռնվածքը՝ $\frac{d_1}{2} \cdot \text{յերկարություն վրա}$.

$$M_s = \frac{P}{2} \left(\frac{d_1}{2} + \frac{\delta}{2} \right) - \frac{Pd_1}{8} = W \cdot k_s = \frac{bh^3}{6} k_s ,$$

վորակեղից

$$h = \sqrt{\frac{3P \left(\frac{d_1}{2} + \frac{\delta}{2} \right) - \frac{6Pd_1}{8}}{b \cdot k_s}} = \sqrt{\frac{3P}{b \cdot k_s} \left(\frac{\delta}{2} + \frac{d_1}{4} \right)}$$

Ցերե Պույժը մեծ չե, ապա ընդունում են, վոր նա կենարոնացած և ազգում սեպի մեջտեղում՝

$$M_s = \frac{P}{2} \left(\frac{d_1}{2} + \frac{\delta}{2} \right) = \frac{bh^3}{6} \cdot k_s ,$$

$$\text{վորակեղից } h = \sqrt{\frac{3P}{2b \cdot k_s}}$$

Արհետէ 72. Մի ծայրով թաղած չորսուն մյուս ծայրում բեռնված բեռնված և Պույժով (ըստ 132-րդ գծագրի սքեմի), ի՞նչ ձև պետք և տալ չորսուին, վարպեսզի յերկայնքի բոլոր հատանքներում լարումը նույյնը լինի (այսինքն, վարպեսզի ստանանք հավասար դիմագրության չորսու):

Ինչպես վերևում պարզած ե, ամեն մի կամավոր հատանքում, վոր գտնվում է չեռավորության վրա թաղվածքի հարթությունից, ծոսդ մոմենտն արտահայտվում է հետեւյալ հավասարումով $M_s = P$ ($I-X$). Վորպեսզի էլ լարումը բարում հատանքներում նույյնը լինի, այդ հատանքների չափերը պետք է տարբեր լինեն:

ՑԵՐԵ Խ արսցիսն ունեցող հատանքի դիմագրության մունկաը նշանակենք W_x , ապա ստանում ենք հետեւյալ հավասարումը՝

$$P(l-x) = W_x \cdot k_s,$$

Վորտեղից

$$W_x = \frac{P(l-x)}{k_s},$$

Տեղադրելով չ-ի համար զանազան արժեքներ և վերցնելով նախորոք բոլոր հատանքների համար մի վարոշ թույլատրելի է լարում, մենք կստանանք զանազան հատանքներին համապատասխանող դիմագրության մունկաներ՝

$$W_x = \frac{bh^3}{\sigma},$$

Կամագոր վերցնելով համարչի բազմապատճեներից մեկը, վարուսած ենք մյուսը՝ Դիցուք չորսուի ամբողջ յերկայնքով անփոփոխ և մուս ի բարձրությունը, ապա լայնությունը կվորոշվի ըստ՝

$$b_s = \frac{\sigma W_x}{h^3} = \frac{\sigma P(l-x)}{h^3 k_s}$$

բանաձևի:


Խնդիքն անոնում ենք b_s -ը փոփոխվում և ուղիղ գծի որենքով։ Չորսուն կունենա այն ձևը, վոր ցույց ե արված 149-ըդ գծագրում։

Ցերե չորսուն ամբողջ յերկայնքով ունենա նույն և հաստությունը (զծ. 150), ապա փոփոխական մեծություն կլինի ի բարձրությունը, վորը, նայելով Խ արսցիսնի զանազան արժեքներին, կվորոշվի հետեւյալ հավասարումից՝


$$b_s = \sqrt{\frac{\sigma P(l-x)}{k_s}}$$

Այս որինակի հիման վրա կառուցած ABC կորը կլինի որպարուլ, նոքնըստինքյան հասկանալի յե, վոր P ուժի կտրող աղ-

գեցությանը դիմադրելու համար, չորսուի ազատ ծայրը պետք է ունենաւ վոչ մեկ, այլ յերկու շափում, ինչպես օռոյց և արգած դժագրում, վորտեղ բացի Յ լայնությունից, չորսուն ունի և DE



Գ. 149.



Գ. 150.

հաստությունը։ Չորսուի կոնսուրն ել անում են վոչ թե կորագիծ, այլ ուղիղ գծերով, վորոնք կորին տարած շոշափողներ են։ Ներկայացնում։

§ 61. ԱՌԱՆՑԹՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ. Առանցքը (նյութական) առնուց տարբերվում է նրանով, վոր նա անմիջապես վոչ մի աշխատանք չի փոխանցում, այլ պատվելով իր հենարանների մեջ, պահպանում և իր վրա ամրացրած պատվող մասերը։ Այսպիսով, յեթե դանց առնենք այն աննշան վոլորող մոմենտները, վորոնք առաջանում են առանցքի ցանքֆերի շիման հետևանքով հենարանների մեջ, կարելի յե բնդունել, վոր առանցքը միայն ծռման ձևափոխության և յենթարկվում։

Դիցուք պետք ե հաշվել մի առանցք, վոր պատվում և A և B առանցքակալների մեջ և կրում և կենտրոնացած P բեռնվածքը (բառ 135-րդ գծագրի սքեմի): Այս աեսակ առանցքի հաշվումն անում են այնպես, ինչպես անում են յերկու հենարանների վրա ազատ ընկած և կենտրոնացած ույժ կրող հեծանի հաշվումը։ Վառնգավոր հատանքը կլինի C կետում։ Յեթե առանցքի արամագիծը նշանակենք 0, ապա հաշվային հավասարումը կլինի՝

$$z = 0,1 \cdot d^2 \cdot k_d$$


(151)

Մասման թույլատրելի լարման համար ընդունում են հետեւյալ արժեքները (III տեսակ բեռնվածքի համար):

Թափծու պողպատ	$k_s = 400 - 500$	կգ/սմ ²
յերկաթ	$k_s = 300 - 400$	
պողպատյա ձուլվածք . . .	$k_s = 250 - 350$	
